Հայ գրականություն, Արձակ, Վիպակ

13+

Ռաֆֆի

Ղարիբ մշեցին

Ա

Մի պատանի, հեռու ամբոխից, միայնակ կանգնած էր Բաղչե-Ղափուսի կոչված նավահանգստի մոտ և ապշած կերպով Նայում էր յուր շուրջը: Պատանին դեռ նոր էր դուրս եկել մակույկից, որ հանելով նրան ցամաքի վրա, կրկին շտապով վերադարձավ դեպի Բոսֆորի մեջ խարսխված շոգենավը, դարձյալ նոր մարդիկ և նոր մթերք կրելու դեպի ցամաք:

Նա կանգնած էր լուռ մտատանջության մեջ և անհամբեր կերպով նայում էր այս կողմ և այն կողմ: Երևի նրան չէր գրավում Բոսֆորի մուգ-կապտագույն հայելին, որի մեջ այդ ժամուն պատկերացած էին նրա գեղագրական եզերքը, լուսավորված թեքված արևի վերջին ճառագայթներով: Նրան չէին գրավում և լայնատարած Ստամբոլի բարձր մինարեթներն իրանց փայլուն կիսալուսիններով: Նրան զբաղեցնում էր մի միտք միայն՝ «հիմա ո՞ւր գնամ…»:

Դուրս գալով հայրենական տնակից, նա գիտեր, թե ուր է գնում, իսկ այժմ հասնելով բաղձացած քաղաքի դռներին, չէր իմանում, թե ո՛ւր գնա:

Պատանին հազիվ կլիներ տասնյոթն կամ տասնութն տարեկան: Արևից այրված դեմքը՝ յուր խոշոր, կանոնավոր գծերով, կրակոտ աչքերը, գլխի երկար մազերը, որ նախշուն արախչինի տակից սև հոսանքով թափվել էին ուսերի վրա,—այդ բոլորը ներկայացնում էր վայրենի գեղեցկության այն կախարդիչ տիպարը, որ կարելի է տեսնել լեռնականների մեջ միայն: Բարձրահասակ էր նա և թիկնավետ: Փոքր-ինչ ցամաք, ջղային կազմվածքն արտահայտում էր հարուստ մարմնական զորություն: Նա վատ չէր հագնված: Երևում էր, որ նրա մայրը յուր բոլոր ունեցածն սպառել էր՝ որդուն, որքան կարելի է, վայելուչ կերպով ճանապարհ դնելու բախտի և առատության այն մայրաքաղաքը, որտեղից խեղճ կինը և յուր բախտավորությունն էր սպասում…

Արևը մայր մտնելու մոտ էր: Պատանին դեռ, մի անշարժ արձանի նման, կանգնած էր: Նրա ոտների մոտ, գետնի վրա, դրած էր ճանապարհորդական պարկը:

Շոգենավից դուրս եկած բազմությունը հետզհետե նոսրանում էր: Ոմանց քշում էին դեպի մաքսատուն, ոմանք, իրանց ճանապարհի պայուսակը ձեռքում բռնած, շտապում էին դեպի քաղաք, իսկ շատերը դեռ նստած էին իրանց իրեղենների մոտ, սպասում էին ընկերներին կամ բեռնակիրների:

Այդ միջոցին մաքսատան համալներից մեկը մոտեցավ պատանուն և թուրքերեն լեզվով հարցրեց.

— Ո՞ւնես մի բան տանել տալու:

Նրա հարցմունքը մի կատարյալ ծաղր էր դեպի պատանին, որ բացի ճանապարհորդական փոքրիկ պարկից, ուրիշ բան չուներ: Նա ոչինչ չպատասխանեց:

Համալը երբ փորձված աչքով ոտքից ցգլուխ չափեց պատանուն, կարծես ինքը ևս փոշմանեց յուր արած հարցմունքից և շտապեց հեռանալ, բայց պատանին կանգնացրեց նրան, ասելով.

— Ի սեր աստուծո, ցույց տո՛ւր ինձ, ո՞ր կողմումն են կենում այդ քաղաքի մշակ մարդիկը:

— Մշակ մարդիկը,— կրկնեց ծերուհի համալը, սուր կերպով նայելով պատանու երեսին,— մշակ մարդիկը, որդի, քաղաքի ամեն կողմում կենում են: Ո՞րտեղից ես:

— Մշեցի:

— Հասկացա... Եկել ես փարա՞ վաստակելու... Անունդ ի՞նչ է:

— Օհան:

— Մշու սուլթան սուրբ Օհանեսը քեզ պահապան,— բացականչեց համալը և մի առանձին կարոտով գրկեց յուր հայրենակցին:

Բարեսիրտ ծերունին այլևս երկար հարցուփորձի պետք չուներ: Բավական էր, որ իմացավ, թե պատանին հայ է և մշեցի, իսկ մնացածը նա արդեն կարող էր հասկանալ... Նա գիտեր, թե մշեցին ի՛նչ նպատակով է թողնում հայրենի երկիրը, գիտեր, թե ի՞նչու է դուրս գալիս դեպի պանդխտություն և Ստամբոլի խառնաշփոթ աղմուկի մեջ ի՛նչ է որոնում... Այդ բոլորը գիտեր նա, որովհետև ինքը ևս մշեցի էր, ինքը ևս նույն ճակատագրական դա՛ռն պահանջների պատճառով թողել էր հայրենիքը...

— Քեզ էլ մատա՛ղ, քո երկրի՛ն էլ,— ասաց ծերունին, աչքերը սրբելով:— Ե՛կ ինձ հետ, որդի, Ստամբոլն այնքան մեծ է, որ դու կարող ես կորչել այնտեղ: Եկ ինձ հետ, քեզ կտանեմ մաքսատան համալների մոտ, կմնաս մեր մեջ, մինչև քեզ համար մի գործ կմտածենք...

Պատանին վեր առավ յուր պարկը, և ուրախանալով հետևեց նրան:

Նրանք դիմեցին նավահանգիստը, որտեղ հարյուրավոր համալներ գրաստների նման կրում էին շոգենավի բերած մթերքները դեպի մաքսատուն: Ծերունին մոտեցավ մի վաճառականի, որ յուր իրեղենների մոտ կանգնած, մշակի էր սպասում: Ինքը վարժ կերպով շալակեց մի ծանր արկղ և մի թեթև արկղիկ ևս պատանուն տալով, ասաց.

— Այդ էլ դու վե՛ր առ, թող մեջքդ սովորի...

Բ

Մոտավորապես մի տարի էր անցել այն օրից, որ Օհանը մտավ Կ. Պոլիս:

Այժմ բավական ծանոթացել էր նա այդ խառնաշփոթ քաղաքի ընդարձակ լաբյուրինթոսի հետ, գիտեր նրա նեղ փողոցները և առանց մոլորվելու կարող էր մի թաղից մյուսը գնալ: Այդ մեծ հառաջադիմություն էր այն վիճակի մարդկանց համար, որին պատկանում էր Օհանը, և որոնք անպատճառ պետք է ծանոթ լինեին քաղաքի հետ: Բեռնակիրը, համալը պետք է ծանոթ լինի մինչև անգամ տների հետ, որպեսզի, երբ նրան մի բան են հանձնում, նա կարողանա անսխալ հասցնել նշանակած տեղը:

Նա այժմ անգործ չէր, յուր համար պարապմունք էր գտել:

Բախտը հենց առաջին անգամից, երբ նա ոտք կոխեց Կ. Պոլսի շեմքի վրա, նպաստեց նրան, հանդիպեցնելով մի այնպիսի մարդու, որ առեց նրան յուր հոգաբարձության ներքո և նրա համար հառաջադիմության ճանապարհ հարթեց: Այդ մարդը Ոսկանն էր, այն ծերունի համալը, որին գտավ նա նավահանգստում: Ոսկանը հին համալ էր, նա յուր մազերը ճերմակացրել էր այդ գործի մեջ: Յուր հայրենակցի համար մտածեց նա մի այնպիսի պարապմունք, որ շատ հարմար էր թե նրա մանուկ հասակին և թե անվարժ կազմվածքին: Օհանը չէր կարող մեծ ծանրություններ կրել, բայց թեթև բեռներ տանել կարող էր նա:

Մի առավոտ բարեսիրտ ծերունին յուր ձեռքով կապեց Օհանի մեջքին մի կթոց և օրհնելով ճանապարհ դրեց:

— Հիմա գնա՛,— ասաց նրան փորձված մարդու վստահությամբ,— դրանից հետո հացը քեզ պակաս չի լինի...

Այդ օրից շատ չէր անցել: Մի անգամ Ղալաթիայի փողոցներից մեկի միջով՝ ծանր ու դանդաղ քայլերով գնում էր Օհանը: Նրա մեջքին կապած էր յուր անբաժան կթոցը. նա յուր արհեստին հատուկ ձայնով եղանակում էր.

«Չո՛փ չըկարայըմ…

«Չո՛փ չըկարայըմ…

Այսինքն՝ «ա՛ղբ կը դեն ածեմ, ա՛ղբ կը դեն ածեմ»:

Նա այժմ «չոփ չի» էր — աղբ դուրս ածող էր:

Այդպես երկար գնում էր նա և տխուր, ձգական ձայնով եղանակում էր «չոփչիների» սովորական երգը: Յուր կրակոտ աչքերը, որ այժմ բավական նսեմացել էին, անդադար դարձնում էր նա դեպի փողոցի աջ և ձախ կողմերը, խորին անձկությամբ սպասելով, գուցե փակված դռներից մեկը կբացվեր և նրան կկանչեին: Նա դնում էր և միևնույն ժամանակ հավաքում էր գետնի վրա ընկած փալասի կտորտանքներ, շորի պատառներ և թաքցնում էր յուր լայն ծոցերում:

— Է՛յ չոփչի, Է՛յ, չոփչի,— դռներից մեկը բացվեցավ և լսելի եղավ մի ձայն:

Օհանն ուրախությամբ դիմեց դեպի կոչող ձայնը:

— Անիծվի՛ մեր չոփչին, ամեն օր խմում է, հարբում է, շաբաթներով երեսը չենք տեսնում, աղբն ամբարված մնում է:

Խոսողը մի չափահաս կին էր, որ ներս տարավ Օհանին մի փոքրիկ բակ:

Այդ ոտքից ցգլուխ սև հագնված կինը կարծես գթության մայր լիներ: Այնքան մեղմ էր նրա դեմքը, այնքան հեզություն կար նրա աչքերի մեջ, որ թվում էր, թե կուսաստանից հենց նոր է դուրս եկել: Նրա կերպարանքի բարեպաշտական արտահայտությունը լրացնում էր՝ պարանոցին կապած սև սաթի փոքրիկ խաչը, որի վերևի մասը երևում էր շապկի տակից: Նա մի առանձին ցավակցությամբ նայեց Օհանի վրա և ինքն իրան ասաց. «Խե՜ղճ տղա, այդ հասակում, այդպես գեղեցիկ և՛ չոփչի՛...»:

Օհանը լսեց այդ խոսքերը և դառնացած կերպով պատասխանեց.

— Ի՜նչ անեմ, տիկին, պարտքերի տակ խեղդված մայր, քույրեր, եղբայր ունեմ... ինձ ուղարկեցին, որ փարա վաստակեմ և նրանց անօրենի ձեռքից ազատեմ...

— Ուրեմն նո՞ր ես եկել:

— Մի տարի հազիվ կլինի:

Տիկինը հետաքրքրվելով Օհանի վիճակով, մանրամասնաբար հարցրեց նրա անունը, հայրենիքը, և թե ո՛րտեղ է բնակվում այժմ, ո՛ւմ մոտ է լինում և վերջն ասաց նրան.

— Այսուհետև դու կլինես մեր չոփչին, որդի, ես, քո խղճության համար, սովորական վարձից մի բան էլ ավելի կտամ քեզ: Երբեմն իմ ամուսնու հին հագուստներից ևս կտամ, որ հագնես:

Օհանի ուրախությունը սահման չուներ. նա շնորհակալություն հայտնեց և սկսեց աղբն ածել կթոցի մեջ: Տիկինը չհեռացավ Օհանի մոտից, մի առանձին կարեկցությամբ նայում էր, թե ինչպես նա յուր շնորհալի ձեռքով, որ ավելի մաքուր գործի արժան էին, վեր էր առնում ապականությունը և խնամքով ածում էր կթոցի մեջ: Երբ վերջացրեց, ուղտի նման չոքեց գետնի վրա, մեջքը դեմ տվեց և բռնելով կթոցի թոկերից, քաջի նման վեր բարձրացավ:

— Ո՞րտեղ պետք է տանես,— հարցրեց տիկինը:

— Ծովը,— պատասխանեց Օհանը.— հիմա արգելված է ուրիշ տեղ ածել:

— Այդ շատ հեռու կլինի,— ասաց տիկինը, տալով նրան մի ղուրուշ:

Օհանին զարմացրեց տիկնոջ առատաձեռնությունը: Նա միշտ յուր տարած աղբը ծովն էր ածում, բայց նրան երկու կամ երեք փարայից ավել չէին տալիս: Այժմ ստացավ մի ամբողջ ղուրուշ, որ կանե քսան փարա[1]:

Եթե համեստությունը չզսպեր Օհանին, նա մեծ գոհունակությամբ կհամբուրեր յուր բարերարուհու ձեռքը, մանավանդ երբ նա մի ղուրուշ տալուց հետո ասաց Օհանին.

— Այդ կտանես, որդի, բայց երեկոյան պահուն, երբ կմթնի, դարձյալ կգաս այստեղ, քեզ մի ուրիշ բան էլ կտամ, որ տանես ծովը նետես: Երկու ղուրուշ էլ նրա համար կստանաս:

Երկու ղուրուշի անունը լսելով, Օհանը մինչև անգամ մոռացավ հարցնել, թե ինչ բան պիտի լիներ այն, արդյոք ծա՞նր էր, թեթև էր, վերջապես ի՞նչ էր: Նա բավականացավ նրանով միայն, որ այդ առաջին անդամն էր, որ նրան խոստանում էին մի այդպիսի հարուստ վճար:

— Տունը խո կճանաչե՞ս,— հարցրեց տիկինը:

— Աչքերս խփած կարող եմ գտնել,— պատասխանեց Օհանը:

— Շա՛տ ապրես, դե հիմա գնա՛:

Օհանը հեռացավ:

---

[1] Մեկ ղուրուշը մոտավորապես 6 կոպեկ է:

Գ

Օհանը գնում էր այժմ ավելի արագ քայլերով և մի առանձին հպարտությամբ աչք էր ածում յուր շուրջը: Նրան այնպես էր թվում, որ աղմկալի Ղալաթիայի բոլոր անցուդարձ անողները յուր վրա են նայում և զարմանում են, թե որքան մեծ կթոց ունի Օհանը և ո՛րպեսզի ծանր բեռն է տանում:

Յուր արհեստի մեջ Օհանն ուներ յուր փոքրիկ փառասիրությունը, թեև այդ ասպարեզում կանգնած էր դեռ շատ ստոր աստիճանի վրա:

Իրանից բարձր տեսնում էր նա համալներին, որոնք մի քանի հարյուր հոխանոց հակերը, մի թեթև տաշեղի նման, թռցնում, տանում էին: Տեսնում էր ջրկիրներին, հրդեհաշեջներին, որոնք կրակի մեջ էին մտնում և հրաշքներ էին գործում: Բայց ի՞նքը... ի՞նչ էր ինքը: Դեռ «չ ո փ չ ի » էր, դեռ շատ պիտի գործեր, մինչև համալ դառնար: Եվ այդ էր, որ նրա մանկական սիրտը լցնում էր անսահման նախանձով, վառվում էր նրա բոլոր եռանդն անզուսպ բաղձանքներով, թե արդյոք ե՞րբ կլիներ, որ հասներ այդ բարձր փառքին: Բայց մանկությունը սահման չունի. նա հույսի անխոնջ թևերի վրա դիմում է առաջ և դեպի առաջ...

Օհանի հորիզոնի վրա, բացի համալից — քաջ և զորեղ համալից — մի այլ իդեալ չկար: Ձգտում էր նրան հասնել

Կյանքից Օհանի պահանջմունքները շատ չափավոր, շատ համեստ էին, այն պատճառով միայն, որ մի այլ գործունեության մասին գաղափար չուներ: Նա յուր կթոցով բոլորովին բախտավոր էր համարում իրան, և այդ էր պատճառը, որ նրա ծանրությունը չէր զգում, և նրա ստորացնող և մարդկային՝ ավելի վայելուչ ձգտումները մեռցնող նշանակությունը չէր հասկանում:

Ապականության և աղբի ներքո մեջքը ծռել,— այդ մի տաժանական աշխատանք է, որ վիճակվում է հայոց զավակներին պանդխտության մեջ:

Օհանի մեջ կար եռանդ, կային ձգտումներ, կային և հարուստ ընդունակություններ: Ոչ միայն «փարա» վաստակելու փափագը, այլ մի ներքին բնազդում մղում էր նրան մի մթին, անորոշ նպատակի հետևից, որի ինչ լինելը ինքն էլ չգիտեր: Ո՞վ գիտե, եթե ճակատագիրը նետեր նրան մի այլ ասպարեզի վրա, գուցե նա ավելի հաջողություն կունենար, քան թե այժմ յուր կթոցի ներքո:

Այժմ, գնալով Ղալաթիայի երկար փողոցի միջովը, Օհանն ուրիշ բանի վրա չէր մտածում, նրա գլխում պտտվում էին տիկնոջ խոստացած երկու ղուրուշը միայն: «Երկու ղուրո՛ւշ, երևակայում էր նա, քիչ փող չէ... Բայց ի՞նչ պետք է լինի այդ բարեսիրտ կնոջ ինձ հանձնելիք բանը... ի՞նչու պետք է գիշերով գցել ծովը... Ինչ էլ որ լինի, իմ այս շալակից ծանր չի լինի... ճշմարիտ է, նա մի քանի փարա ավել տվեց, բայց քսան փարայից ավելի բեռնեց»:

Փողոցի անցուդարձը, խուռն բազմության ընդհարումները սաստիկ էին: Բայց Օհանը բախտավոր էր, որ նրա կթոցին ոչ ոք չէր համարձակվում դիպչել, իրան չկեղտոտելու համար:

Նա հասավ ծովի ափը, երբ օրից բավական անցել էր:

Այդ այն ամայի, անբնակ ափերից մեկն էր, որ ծառայում էր քաղաքի անմաքրությունների համար: Ծույլ չոփչիները, ձանձրանալով բերած աղբը ծովը

նետել, այնպես թափել էին եզրի մոտ ու ետ դարձել: Այսպիսով կազմվել էին ամեն տեսակ ապականությունների այն մեծ բլրակները, որոնց գարշահոտությունը մարդ էր խեղդում: Բայց Օհանը ծույլ չէր. նա բարձրացավ կույտերից մեկի վրա և յուր կթոցի մթերքը խիստ վարպետությամբ նետեց ծովի մեջ: Ալիքները խլեցին նրան և մի քանի վայրկյանից հետո կրկին ժայթքեցին դեպի դուրս:

Գեղեցիկ Բոսֆորի այդ ափը ներկայացնում էր զանազան հակապատկերների մի տխուր խառնակություն: Այստեղ, մերձակայքում, նշմարվում էին ձկնորսների մի քանի խղճուկ տաղավարների, իսկ այնտեղ, մի քանի քայլ հեռավորության վրա, բարձրանում էր այս կամ այն փաշայի ծովեզրյա ապարանքը: Այստեղ, աղբանոցի ընդարձակ տարածության վրա, ամբողջ օրը թավալվում էր քաղաքի ազատ շների ուրախ, անհոգ բազմությունը: Փորփրում էին կույտերը և երբ մի կաշու կամ ոսկորի կտոր էին գտնում, սկսում էին միմյանց բերնից խլել, կռիվ սարքել, միմյանց կծոտել և շուտով՝ կրկին հաշտվել: Իսկ այնտեղ, իր «քյոշքի» բարձրության մեջ, ուժից ընկած ծերունի փաշան, թիկն տված թավշյա բարձերին, բորբոքում էր յուր սառած ուղեղը թամբաքվի ծխով և գրգռում էր թուլացած ջղերը յուր մանկահասակ «խաթունների» ամենաքնքուշ փայփայանքներով...

Աղբանոցի շները նայում էին չոփչիների վրա, որպես իրանց պարենը հայթայթող ստրուկների վրա: Եվ ամեն անգամ, երբ մի թարմ կթոց էր բերվում, նրանք ագիները շարժելով և մի առանձին հաճոյամոլությամբ, կտրում էին չոփչիի առաջը: Բայց միշտ անհաշտ էին Օհանի հետ, որովհետև նա յուր կթոցի մթերքը սովորաբար ծովն էր նետում:

Երկրի ընդհանուր սովորությունն ազդել էր և այդ անգործք ձրիակեր անասունների վրա: Ստամբոլի քաղաքադռներից մտնելիս, անկարելի է, որ յուրաքանչյուրի կթոցը չշոշափեն, եթե հոտ առնեն, որ նրա միջում ուտելու բան կա:

Թեև Օհանին վիճակված էր չոփչի լինել քաղաքի մի այնպիսի թաղում, որտեղից ծովի ափը շատ հեռու չէր, այսուամենայնիվ նա հոգնել էր, որովհետև սկսյալ առավոտից, այդ տասներորդ կթոցն էր, որ ծովն էր նետում: Մտածեց փոքր-ինչ հանգստանալ: Կթոցը ցած դրեց, նստեց ավազի վրա, թիկն տվեց կթոցին: Նա զգում էր և քաղց: Գրպանները խառնեց, գտավ մի կտոր չոր հաց, սկսեց կրծել:

Միջօրեի տոթային ժամն էր: Քամի չկար: Օդը լցված էր ջերմ գոլորշիներով, կարծես թե բաղանիքի օդ էր շնչում մարդ: Շրջակայքում տիրում էր խորին, գերեզմանական անդորրություն: Խաղաղ էր և ծովը, որ այդ ժամուն մի առանձին ծուլությամբ պարուրվում էր յուր միջօրեական հանգստության մեջ: Այնպես էր թվում, որ նա էլ հոգնած էր: Ձանձրացած ալիքները դանդաղ կերպով զարկվում էին Օհանի ոտներից ոչ այնքան հեռու, ավազի վրա, և նրանց վիատած աղմուկը դողացնում էր օդի մեռելային լռությունը: Ամեն ինչ տրամադրում էր դեպի թախծություն, դեպի հոգեկան ծանր թմրություն:

Կազդուրելով յուր քաղցը, Օհանը մտածեց վերադառնալ: Բայց իսկույն մտաբերեց տիկնոջ պատվերը: Նա ժամանակ էր նշանակել երեկոյան, երբ արևը կմտնե և մութը կպատե: Մինչև երեկո դեռ բավական ժամանակ կար: Բայց ինչու՞ իզուր վատնել այդ ժամանակը: Կարելի էր վերադառնալ, գուցե աստված կհաջողեր, մի տեղից ևս նրա կթոցը կլցնեին և մի քանի փարա կստանար: Այսպես էր մտածում Օհանը, բայց օրվա ճնշող թմրությունը, կարծես, նրա վրա ևս ազդել էր և տեղից շարժվել չէր կարողանում: «Թո՛ղ տոթը անցնի, մի փոքր զովանա, հետո կգնամ»,— վճռեց նա:

Սկսեց անխորհուրդ կերպով նայել դեպի Բոսֆորի գեղեցիկ մակերևույթը և դեպի հեռավոր տեսարանները: Գործունեությունը դեռ ոչ բոլորովին դադարած էր: Անխոնջ

մակույկները վազվզում էին դեպի զանազան կողմեր, տանելով մեկ թաղից դեպի մյուս թաղը անցուդարձ անողների բազմությունը: Երբեմն սուլելով անցնում էր շոգենավը, թողնելով յուր հետևից օդի մեջ յուր ծխային սև, երկար ժապավենը: Տեղ-տեղ, փոքրիկ լաստերի վրա, ձկնորսները սարքում էին իրանց ուռկանը: Երբեմն զվարճասերների մի ուրախ խումբ, գույնզգույն դրոշակներով զարդարած «ղայըղի» վրա, լողում էին դեպի հեռավոր կղզին: Մեկը երգում էր, մյուսն ածում էր «թամբուրայի» վրա, մի քանիսը պար էին գալիս: Այդ բոլոր զվարճալի պատկերները, անրջային երազների նման գալիս և անցնում էին Օհանի աչքերի առջևից:

Համանման շարժառիթները զարթեցնում են համանման զգացմունքներ: Տեսնելով ուրիշների ուրախությունը, Օհանի սրտում շարժվեցան թաքնված վշտերը: Նա էլ ունեցել էր յուր ուրախ օրերը, բախտը նրան էլ մի ժամանակ ցույց էր տվել յուր խաբուսիկ ժպիտը: Բոսֆորի գեղեցիկ տեսարանները նրա հիշողության մեջ պատկերացրին Եփրատի (Մուրատ գետը) գեղեցիկ ափերը և Մուշի դաշտը յուր լայնածավալ կանաչազարդությամբ: Նա մտաբերեց այն երջանիկ օրերը, երբ ինքը դեռ մանուկ հերկավար էր, արածացնում էր յուր հոր գութանի գոմեշները այդ գետի ափերի մոտ: Կեսօրվա հանգստի ժամանակ նա գոմեշները քշում էր գետի մեջ, լվանում էր սառը ջրով և պառկեցնում էր ալիքների մեջ: Ջրասեր անասունները թավալվում էին իրանց զով անկողնում և հանդարտ կերպով որոճում էին: Իսկ ինքը, նստած գետեզերքի թփերի ներքո, զլում էր յուր սրինգը: Նա այդ ժամուն մի առանձին ոգևորությամբ էր ածում, որովհետև գիտեր, որ մի սիրելի ականջ լսում էր նրան: Ահա շինական աղջիկների նախշուն խումբը մոտեցավ գետեզերքին: Նրանք առավոտից սկսյալ ափերի մոտ սունկ և այլ բանջարներ էին քաղում: Լսելով Օհանի սրնգի ձայնը, նրանք ևս եղանակեցին իրանց ուրախ պարերգը: Մեկի ձայնն ավելի քաղցր և ավելի ախորժ է հնչում: Օհանն ավելի ոգևորվում է: Նա դուրս է գալիս թփերի միջից և մի աղջիկ յուր քաղած ծաղիկները բաժանում է նրա հետ:

Այդ անցած, մոռացված հիշողությունները դուրս կոչեցին Օհանի սրտից երկու «ախ», երկու բառերի հետ:

«Ա՛խ վաթան (հայրենիք), ա՛խ Գոհար»...— բացականչեց նա և արտասուքը խեղդեց նրա ձայնը: Երկար մի քարացած դրության մեջ նստած էր նա, մինչև հոգնածությունն առեց յուր պահանջը, գլուխը ակամա կերպով թեքվեցավ կթոցի վրա, աչքերը փակվեցան և քունը տարավ:

Բավական ժամանակ քնած էր նա, մինչև արևն սկսեց խոնարհվել դեպի յուր երեկոյան մուտքը: Նրա քունը խորին էր և անդորր: Միայն երբեմն սեղմված շրթունքների միջից դուրս էին հնչում նույն երկու բառերը երկու «ախերի» հետ:

Եղանակն սկսեց փոխվել: Երեկոյան՝ զով քամին հետզհետե սաստկանում էր և ծովի ալիքներն ավելի խոշոր կոհակներով զարկվում էին ափերին այնքան մոտ, որ փոքր էր մնում, որ խլեն, տանեն Օհանին դեպի խորին հատակը: Արդեն աղբանոցի ընդարձակ տարածության վրա պտտվում էր քամին և ավազախառն փոշին՝ թանձր վերմակի նման սրսռում էր Օհանի մոտ: Մակույկներն սկսեցին շտապել դեպի ափերը: Ամեն ինչ գուշակում էր սաստիկ մրրիկ: Բոսֆորը, մի ահագին կաթսայի նման, եփ էր գալիս, տակնուվրա էր լինում: Կատաղի ալիքները մռնչում էին և շրջակայքը դղրդեցնում խլացուցիչ ձայնով: Բայց այդ ձայներն անզոր էին խանգարելու վաստակաբեկ մշակի խորին քունը...

Այդ միջոցին քաղաքի «պալիեկարիաներից» մեկը երգելով անցնում էր ծովեզերքից: Դա մի հույն սրիկա էր, այն դատարկաշրջիկներից մեկը, որոնք ցերեկով թաքնվում են այսպիսի խուլ տեղերում, իսկ գիշերը, դանակը ձեռքում, հարձակվում են մենավոր անցորդի վրա: Սրիկայի սրատես աչքերից չվրիպեցավ քնած Օհանը: Նա

իսկույն կշռեց յուր որսը և ուշիկ քայլերով մոտեցավ նրան: Մի քանի րոպե կանգնած, ուշադրությամբ նայում էր քնողի վրա: Հետո աչք ածեց յուր շուրջը և նստեց Օհանի մոտ: Զգուշությամբ ձեռքը տարավ նրա գրպանները, դուրս բերեց մի կոթը կոտրած դանակ և մի կտոր չոր հաց: Վերջինը Օհանի ընթրիքն էր: Երկուսն էլ սրիկայի համար անպետք բաներ էին, նետեց դեպի մի կողմ: Հետո սկսեց որոնել նրա ծոցերը: Հոգնած Օհանի քունը այն աստիճան ծանր էր, որ ամենևին չէր զգում, թե ինչ է կատարվում յուր հետ: Ծոցերից ոչինչ չդուրս եկավ, բացի մի քանի փալասի կտորտանքից, որ Օհանն այնօր հավաքել էր փողոցներից, հարկավորած ժամանակ յուր մաշված հագուստի կարկատելու համար: Սրիկան այդ ցնցոտիները զզվանքով ձգեց դեպի ծովը: Նրա աչքն ընկավ մի թելի վրա, որ շապկի տակից անց էր կացրած մերկ պարանոցով և երևում էր կիսաբաց օձիքից: Թելի ծայրերը կորչում էին գոտիից ներքև: «Գտա՛»,— ասաց յուր մտքում սրիկան և աչքերը վառվեցան վայրենի ուրախությամբ: Նա անզգալի կերպով բաց արեց մաշկեղեն գոտին և սկսեց կամաց-կամաց դուրս քարշել թելը: Նրա ծայրին կապած էր մի կտավյա քսակ. այդ էր սրիկայի փնտրածը: Նա յուր դանակով կտրեց քսակը, վեր կացավ և անխռով կերպով սկսեց հեռանալ:

Արևն արդեն մայր էր մտել, և ամայի ծովեզերքը հետզհետե ընկղմվում էր երեկոյան մթության մեջ: Քամին դեռ չէր հանդարտվել, աղբանոցի մթերքները վեր էր բարձրացնում և թանձր սյունակներով գալարում էր օդի մեջ: Բոսֆորը ծփում էր խուլ, որոտալից մռնչյունով: Օհանը տակավին քնած էր: Հոգնած անդամներից քունը շուտ չէ հեռանում:

Այդ միջոցին մի համեցած չոփչի կթոցն ուսին մոտենում էր աղբանոցին: Նա դիմեց ուղիղ այն կողմը, որտեղ պառկած էր Օհանը: Մթության մեջ չնկատելով յուր արհեստակցին, վերևից կթոցը շուռ տվեց նրա վրա: Որպես մի կայծակնահար, շփոթված կերպով վեր թռավ Օհանը: Նա դեռ չէր թոթափել յուր մարմնից ապականությունը, նա դեռ չգիտեր յուր հետ պատահածը, այդ խռովության մեջ մտաբերեց երկու բան միայն՝ տիկնոջ խոստացած երկու ղուրուշը և յուր քսակը: Նա ձեռքը տարավ ծոցը, տեսավ, որ վերջինը յուր տեղումը չէր:— «Վա՛յ, քսակս»...— գոչեց նա և երկաթյա մատներով պինդ բռնեց մյուս չոփչիի օձիքից:

— Քսա՛կս, ավազակ, եթե ոչ, ծովը կնետեմ քեզ,— կատաղությամբ սպառնաց նրան:

Երկյուղը և հանկարծակի հարձակմունքը բոլորովին սարսափեցրին խեղճ մշակին, որ յուր անզգուշությամբ մի այդպիսի փորձանքի մեջ ընկավ: Նրա լեզուն կապվեցավ, ոչինչ պատասխան չկարողացավ: Մյուս կողմից, նրան տիրեց սնահավատությունը, մտածելով թե յուր օձիքից բռնող սատանան պետք է անպատճառ չար ոգիներից մեկը լինի, որ այդպիսի ամայի տեղերում են բնակվում: «Հիսուս... Քրիստոս... սուրբ խաչ... սուրբ Ավետարան...» մրթմրթաց նա և, երեսը խաչակնքելով, օձիքը թափ տվեց և յուր թերմաշ հագուստի մի մասը թողնելով Օհանի ձեռքում, ինքը փախավ, անհայտացավ երեկոյան խավարի մեջ:

Օհանը մնաց բոլորովին շվարած, վերին աստիճան կատաղության մեջ: Նա հարյուր անգամ ձեռքը տարավ դեպի ծոցը, բայց քսակն այնտեղ չէր: Նրա հուսահատությունը չափ չուներ. նա կորցրել էր յուր ամբողջ գանձը, յուր ամբողջ հարստությունը: Հարյուր ղուրուշի չափ փարա կար այն քսակի մեջ: Այդ յուր մի տարվա վաստակն էր, որի համար այնքան քրտինք էր թափել, այնքան տանջվել էր: Բոլորը միանգամից կորավ: Ի՞նչ աներ խեղճը: Գժվածի նման սկսեց այս կողմ և այն կողմ ընկնել, որոնել գողին: Այդ միջոցին նրա ոտքը դիպավ փախստական չոփչիի կթոցին, որ ժամանակ չունեցավ յուր հետ տանելու: Յուր բոլոր բարկությունը թափեց այդ անմեղ առարկայի վրա: Ձգեց նրան յուր ոտների տակ և ջարդուփշուր արավ:

Նա փոքր-ինչ հանգստացավ: Օհանի նման մարդիկ շատ անգամ ամենահասարակ առիթներ են գտնում իրանց մխիթարելու: Նա յուր վրեժն առավ յուր գողի կթոցից: Այդ կթոցից եզրակացրեց, որ յուր գողը պետք է չոփչի լիներ: Իսկ չոփչիին յուր կթոցից զրկելը՝ մեծ հարված էր նրա համար: Բացի դրանից, նրա ձախ աչքի վերնակոպը քանի օր էր, որ խաղում էր: Օհանը միշտ սպասում է մի ձախողակի դեպք և ահա կատարվեցավ:

Օհանը հաշտվեցավ նախախնամության տնօրենության հետ:

Նա կրկին հիշեց տիկնոջ խոստմունքը:

«Այդ երկու ղուրուշը գոնե չկորցնեմ»...— մտածեց նա և շտապով հեռացավ ծովեզերքից:

Դ

Տիկինը կարծես դռան հետևում սպասում էր Օհանին. հենց մրճի առաջին զարկին՝ նա պատասխանեց.

— Եկա՞ր, զավակս...

Դուռը բացվեցավ, Օհանը ներս մտավ:

Տիկինը պատվիրեց նրան՝ բակում սպասել, մինչև ինքը կբերեր հանձնելիք առարկան: Նա վազեց, մտավ մի սենյակ, որի պատուհաններից ամենևին լույս չէր երևում: Առհասարակ ամբողջ տան մեջ ճրագի նշույլ անգամ չկար, չնայելով որ արդեն գիշեր էր: Խավարի մեջ անհամբերությամբ սպասում էր Օհանը: Մի քանի րոպեից հետո վերադարձավ տիկինը, ձեռքում բերելով մի կապոց, որ շատ նման էր նորածին մանուկի խանձարուրին: Օհանն այժմ միայն մտածեց հարցնել, թե այդ ինչ է:

— Ի՞նչ ասեմ, որդի...— պատասխանեց տիկինը ողորմելի ձայնով.— այդ պատիժն է... դրան Աստված ինձ մի պատիժ է տվել... Առաջ հոգուս պես կսիրեի... վերջը չարաճճին այնպիսի մի գող դուրս եկավ, որ Աստված ազատե... Որտեղ ինչ բան թաքցնում եմ, այլևս տերը չեմ, բոլորը գողանում է և ուտում, թե միս լինի, թե պանիր և թե յուղ...: Մի քանի անգամ տվեցի չոփչիներին, տարան հեռու տեղեր ձգեցին... մյուս օրը տեսանք չար սատանայի նման դարձյալ հայտնվեցավ... Ճարս կտրվեցավ, մտածեցի՝ ծովը նետել տամ, գուցե ազատվեմ դրանից...

Տիկնոջ նկարագրությունից Օհանը հասկացավ, որ նրա գանգատը տան կատվի մասին էր: Մի առանձին հերոսական զգացմունքով վճռեց նա՝ խեղճ կնոջն ազատել այդ գազանի հափշտակություններից, մինչև անգամ եթե նա յուր խոստացած երկու ղուրուշը վճարելու ևս չլիներ:

— Ինչո՞ւ առավոտը չտվեցիք, որ տանեի, ինչո՞ւ գիշերվա մութին թողեցիք,— հարցրեց Օհանը:

— Դու չես իմանում, որդի, թե դա ինչ սատանա է...— պատասխանեց տիկինը վշտացած ձայնով:— Հարյուր անգամ փորձել եմ և տանել եմ տվել, բայց տանելու ժամանակ ճանապարհները սովորել է և ետ է եկել... հիմա տեսնում ես, չնայելով որ գիշեր է, բայց աչքերը կապել եմ, որ ոչինչ չտեսնե... Կատվի աչքերը խավարի մեջ էլ են տեսնում...

Նա հանձնեց Օհանին խորհրդավոր ավանդը, ավելացնելով.

— Ես քեզ խոստացել էի երկու ղուրուշ, ա՛ռ քեզ հինգ ղուրուշ, միայն ի սեր աստուծո, ուղիղ ծովը կնետես և ոչ մի այլ տեղ...

Օհանը չգիտեր ինչպես հայտներ յուր շնորհակալությունը: Նա մի առանձին պարծենկոտությամբ պատասխանեց.

— Ես դրան մի այնպիսի տեղ կկորցնեմ, որ մյուս անգամ երեսը չես տեսնի, տիկին:

— Ուղիղ ծովը և ո՛չ մի այլ տեղ...— կրկնեց տիկինը:

— Ինչպես հրամայեցիք, այնպես կկատարեմ,— խոստացավ Օհանը:

— Աստված զորացնե քեզ,— օրհնեց տիկինը:

Օհանը հեռացավ, նրա հետևից դուռը փակվեցավ:

Ոչ այնքան տիկնոջ օրհնությունը, որքան նրա ընծայած հինգ ղուրուշը Օհանի ոտներին մի առանձին զորություն բաշխեցին: Նա վազում էր դեպի ծովեզրը՝ բավական արագ քայլերով: Տիկինն այն աստիճան սարսափելի գույներով նկարագրել էր յուր կատվին, որ միամիտ պատանին մինչև անգամ զգուշացավ ճանապարհին շոշափել նրան, մի՛գուցե աչքերը բացվեին, փողոցները սովորեր և մյուս օրը հայտնվելով տիկնոջ տանը, ինքն ամաչեր և սևերես մնար նրա մոտ:

Օհանը հավատարիմ էր յուր խոստմանը: Քառորդ ժամից հետո հասավ ծովեզերը: Քամին փոքր-ինչ հանդարտվել էր և Բոսֆորն այլևս առաջվա նման չէր ալեկոծվում: Հետ ընկած լուսինը մի առանձին թախծությամբ լուսավորում էր ամայի ափերը, որ տակավին ընկղմված էին գիշերային մռայլի մեջ: Իսկ անհագ ձկնկուլը յուր սուր ձայնով երբեմն խռովում էր տիրող լռությունը:

Օհանը որքա՜ն և պարզամիտ էր, որքա՜ն և անփորձ էր, բայց դարձյալ մտածելու ընդունակությունից բոլորովին զուրկ չէր: Նա մտածեց կատվի բերանը բաց անել, որպեսզի ջուրը հեշտությամբ ներս վազե և շուտով խեղդե,— իսկ ոտները և մարմնի մյուս մասերը թողնել այնպես, որպես կապել, փաթաթել էր տիկինը, որ կատուն լողալ և ջրից դուրս գալ չկարողանա:

Վերջին գործողությունը կատարելուց հետո, նա փաթոթը ձգեց ծովի մեջ: Սառը ջրի ազդեցությունը ներգործեց նրա վրա և լսելի եղավ մի սաստիկ ճիչ: Օհանը ամբողջ մարմնով սոսկաց: Ճիչը կատվի մլավյունի նմանություն չուներ. նա ավելի նման էր նորածին մանուկի լալու ձայնին: Սարսափած պատանին իսկույն նետվեցավ ջրի մեջ: Փաթոթը, մանուկ Մովսեսի զամբյուղի նման, լողում էր ջրի երեսին: Ալիքները մերթ մոտեցնում էին նրան եզերքին և մերթ տանում էին իրանց հետ: Օհանը մի հմուտ լողորդ էր, Եփրատի ծոցում սովորել էր նա վարվել ջրի հետ որպես մի ձուկն: Մի ակնթարթում մոտեցավ կապոցին, ձեռքը մեկնեց, և փոքր էր մնում, որ ալիքների մի նոր հորձանք տաներ նրան ջրի տակը, բայց նա իսկույն բռնեց և մի քանի վայրկյանից հետո, կապոցը ձեռին, սկսեց լողալ դեպի ցամաք: Դուրս գալով ափի վրա, նա իսկույն արձակեց թրջված շորերը, բայց որքան մեծ եղավ նրա զարհուրանքը, երբ փաթոթի մեջ գտավ մի նորածին աղա:

Օհանի խիղճն արթուն էր. նա իսկույն զգաց, որ ինքը մի մեծ եղեռնագործության գործիք դարձավ: «Իմ հոգին կորա՜վ...» — աղաղակեց նա,— ես դժոխքի բաժին դարձա...»:

Թե վիշտը, թե ուրախությունը Օհանի նման մարդկանց մեջ արտահայտվում են կատաղի ցույցերով: Երկար նա յուր մազերը փետտելով, յուր երեսը ծվատելով և յուր գլխին տալով, թավալվում էր ծովեզերյա ավազի մեջ: Երկար նա, մանուկը յուր կրծքին սեղմած, լաց էր լինում, աստծուն էր աղաչում, որ նրան շունչ և հոգի տա: Նա զանց չառավ գործ դնել և այն հնարները, որ գիտեր ջրախեղդների մասին: Այդպիսի դեպքեր նրան և յուր ընկերներին շատ էին պատահել, երբ լողանում էին Եփրատի մեջ:

Յուր խռովության մեջ Օհանն ամենևին չնկատեց, որ տղայի մարմինը բավական տաք էր: Սրտի կամ երակների զարկի մասին նա ամենևին գաղափար չուներ: Նրան պետք էին խոշոր ապացույցներ, որ հասկանար, թե մանուկի կյանքը դեռ պահպանվել էր:

Բայց նա նկատեց մի բան. տղայի խանձարուրը բավական մեծ էր. թրջվել էին երեսի շորերը միայն, իսկ տակի շորերը դեռ մնացել էին ցամաք: Կնշանակե ջուրը ներս չէր անցել: Նա նկատեց և մի ուրիշ բան. խանձարուրի երեսի շորերը բաղկացած էին ցնցոտիներից, իսկ տակի շորերն ավելի մաքուր և ավելի թանկագին գործվածներից: Եվ երեխան մի առանձին խնամքով դրված էր այդ շորերի մեջ. այդպես կարող էր փաթաթել մոր հոգատար ձեռքը միայն:

Օհանն ավելի խորին քննությունների մեջ չմտավ: Բայց նրա ուրախությունը սահման չուներ, երբ տեսավ, որ տղան նախ շարժեց յուր գողտրիկ ոտները, հետո բավական զորեղ կերպով փռթկաց: Նա գրկեց մանուկին և սկսեց խենթի նման պար գալ, վազվզել և ուրախությունից թռչկոտել: Այդ ցնցումներն ավելի արթնացրին ուշաթափ մանուկին, և նա սկսեց լաց լինել: Այժմ Օհանը խիղճը հանգստացավ:

Նա կրկին փաթաթեց մանուկը յուր խանձարուրի մեջ, և պատրաստվում էր թողնել ծովի ափը, երբ այդ միջոցին նրա աչքին ընկավ յուր կթոցը, որ դրած էր այնտեղ. վեր առավ և բոլոր ուժովը նետեց ծովի մեջ, ասելով. «թո՛ղ անիծյալ լինի այդ չոփչությունը, ես կթքեմ նրա վրա, այսուհետև այդ հացն ինձ հառամ է...»: Հետո նա ձգեց ծովի մեջ և մի ուրիշ բան, ասելով. «Հուդայի արծաթն է, թող կորչի՛ յուր հետ...»: Վերջինը տիկնոջ տված հինգ ղուրուշն էր:

Ե

Օհանը դիմեց ուղղակի տիկնոջ տունը, որտեղ հանձնեցին նրան եղեռնական ավանդը: Նա չգիտեր, որ հանցավորների համար ուրիշ տեղեր կան, նա գիտեր միայն մի բան, այն է, որ չարագործների հետ պետք է վարվել յուր առողջ բռունցքներով: Ճանապարհին արդեն կազմել էր յուր գլխում մի ամբողջ ծրագիր, թե ո՛րպես պետք է բռնե այն «անզգամ ջադուկի» մազերից, ո՛րպես պետք է ջարդուփշուր անե նրա ոսկորները: Նա հասավ ցանկացած տանն այն ժամանակ, երբ գիշերից բավական անցել էր: Սկսեց դուռը սաստիկ բախել: Երկար զարկում էր, բայց ներսից ամենևին ձայն չէր լսվում: «Կկոտրե՛մ, եթե չբացեք»,— աղաղակում էր նա և նրա ձայնը տարածվում էր փողոցի դատարկության մեջ: Դարձյալ բաց անող չկար:

Վերջապես, տան վերի հարկից բացվեցավ մի լուսամուտ, հայտնվեցավ մի գլուխ, որ հարցրեց.

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:

— Այն տիկնոջը,— պատասխանեց զայրացած Օհանը:

— Ո՞ր տիկնոջը:

— Այն սև հագնված տիկնոջը, որ պարանոցին սև խաչ ուներ կապած:

Վերևի գլուխը հասկացավ, թե ո՛ւմ մասին էին հարցնում, պատասխանեց.

— Նրանք գնացին, այստեղ չեն:

— Ո՞ւր գնացին:

— Աստված ոչ գիտե, թե ուր գնացին:

— Դու ինձ խաբում ես:

— Ի՞նչ շահ ունեմ քեզ խաբելուց,— պատասխանեց վերևի ձայնը ծիծաղելով, որ մի մանկահասակ կնոջ ձայնի էր նմանում:— Նրանք թեև մի տարով էին վարձել ամբողջ ներքին հարկը, և փողի կեսը սկզբից վճարել էին, բայց երկու ամսից ավելի չմնացին, այսօր երեկոյան իրանց վերջին իրեղենները դուրս տարան և գնացին:

— Դո՛ւռը, դուռը բա՛ց արա, որ իմ աչքով տեսնեմ,— պահանջում էր կատաղած Օհանը:

— Ես այստեղ միայնակ եմ, մարդս տանը չէ, առավոտյան ե՛կ, կտեսնես,— ասաց մանկահասակ կինը և գլուխը ներս քաշեց, հեռացավ լուսամուտից:

— Հիմա՛, հիմա՛,— գոչեց Օհանը,— եթե ոչ, կկոտրեմ դուռը:

Նա խանձարուրը մի կողմ դրեց, սկսեց մատներով պոկել փողոցի հատակի խճերը և զարկել դռանը, որ նրա կատաղի հարվածների ներքո փշրվելու մոտ էր:

— Գի՛ժ է, ի՞նչ է այդ մարդը,— դարձյալ լսելի եղավ վերևի ձայնը:— Ինչո՞ւ ես դուռը կոտրում, դու տեսնում ես, որ մենք վերևի հարկումն ենք բնակվում, ուրեմն դռան բանալին չէ կարող մեզ մոտ լինել: Իսկ ներքի հարկի դռնապանը, ինչպես երևում է, այս գիշեր տանը չէ, շատ կարելի է, ուրիշ տեղ է գնացել:

— Ամենքը գնացե՛լ են... ամենքը կորե՛լ են..— խոսեց Օհանը ինքն իրան:— Մնացել է այդ բայղուշը (բու) միայն...

Մանկահասակ կինն սկսեց երդումներով հավատացնել, որ սև հագնված տիկինը տեղափոխվել է այդ տնից, իսկ դռնապանի որտեղ լինելն ինքը չգիտե:

Օհանը հավատում էր երդումներին: Նա համոզվեցավ, որ «չարագործ ջադուկը» իրան խաբել է, և յուր խորհրդավոր ավանդը նրան հանձնելուց հետո, իսկույն թողել է տունը, վախենալով միգուցե միամիտ չոփչին մի դիպվածով հասկանա գաղտնիքը և կրկին վերադառնալով երեխայի հետ՝ մի այլ փորձանք և՛ս բերե յուր գլխին:

— Բայց դու ի՞նչ գործ ունես այն տիկնոջ հետ,— հարցրեց վերևի ձայնը:

— Շա՛տ գործ ունեմ... եթե ձեռքս ընկնի՛...— մռնչելով պատասխանեց Օհանը:— Դու ինձ ասա՛, ճանաչո՞ւմ ես այն տիկնոջը:

— Ես քեզ ասացի, որ այստեղ երկար չմնացին, և ոչ ոքի հետ հաղորդակցություն չունեին:

— Դռնապանը ճանաչո՞ւմ է:

— Չգիտեմ: Դռնապանը նոր էր վարձված, «խամ», մարդ էր:

Օհանը տրամադրված էր դեռևս շատ այսպիսի հարցմունքներ անել, բայց լուսամուտի փեղկերը փակվեցան, և նա մնաց առանց պատասխանի:

Մինչև այժմ Օհանի բոլոր կատաղությունը բորբոքում էր այն միտքը, թե ինչպես պետք է ջարդե սև խաչը կրող տիկնոջ ոսկորները: Բայց այդ բաղձանքը մնաց անկատար: Յուր «ջադուկին» գտնել չկարողացավ նա, և գուցե բնավ չի պիտի կարողանար գտնել: Երբ նրա վրդովմունքները փոքր-ինչ սառեցան, նրա մեջ ծագեց մի նոր միտք. «Ի՞նչ անեմ այս մանուկին...»:

Այդ մի ամենադժվար հարց էր, մանավանդ մի պանդուխտ պատանու համար, որ յուր գլուխը դնելու տեղ չուներ, որ ինքը կարոտ էր օրական հացի:

Օհանը, որպես բնության պարզ զավակ, զարմանալի բնազդում ուներ: Յուր գրկած խանձարուրի մեջ գտնում էր նա մի խորին գաղտնիք: Այդ խանձարուրը նրան հանձնող տիկինն աննշան ոք չէր երևում: Եվ մի այդպիսի անձն խառնված էր եղեռնական գործի մեջ: Նրան, որպես մի միամիտ չոփչիի, տվեցին տանել ծովը նետել մարդկանց անբարոյականության կեղտը: Բայց ի՜նչ հանցանք ուներ այդ անմեղ մանուկը:

Լուսամուտից խոսող կնոջ հաղորդած տեղեկությունները Օհանին բոլորովին հավանական երևացին: «Այսօր երեկոյան իրանց *վերջին իրեղենները* դուրս տարան և գնացին»,— ասաց նա: Կնշանակե, հենց առաջուց նրանք տունը դատարկել էին, պատրաստված էին տեղափոխվելու, մնում էր միայն խորհրդավոր ավանդը, որի համար սարքված էին այդ բոլոր պատրաստությունները: Տան ամբողջ ներքին հարկը մի տարի ժամանակով վարձելը, փողի կեսը կանխիկ վճարելը, բայց երկու ամսից ավելի չմնալը և վերջապես դռնապանի նոր վարձված լինելը և նրանց հետ անհայտանալը,— այդ բոլորը գործին ավելի և ավելի կասկածավոր կերպարանք էին տալիս: Բայց ո՞վ կարող էր գտնել նրանց բազմամբոխ, խառնաշփոթ Ստամբոլում:

Օհանն այժմ դրա վրա չէր մտածում, նա մտածում էր միայն մանուկի մասին: Նա դեռ շվարված կերպով կանգնած էր աղետալի տան հանդեպ, չգիտեր ո՛ւր գնալ: Քամին դեռ փչում էր և գիշերային զովությունը բավական զգալի էր դարձել: Նա փաթաթեց տղայի խանձարուրը յուր «անթարիի» երկար դրոշակների մեջ, որ չմրսե, թեև նրա հագուստը նույնքան թաց էր, որքան տղայի խանձարուրը:

Այդ տունը գտնվում էր մի անձուկ «սոխախում», որ ծռվելով բաժանվում էր մեծ փողոցից և իջնելով դեպի ձորի զառիվայրը, կորչում էր անհամար մանր տների մեջ:

Այսպիսի տեղերում ցերեկով անգամ չէ թափանցում արևի լույսը, իսկ գիշերը նեղ «սոխախները» ներկայացնում են ողորմելի տնակների մի անապատ, ուր տիրում է մշտական խավարը՝ խորին, գերեզմանական մեռելության հետ:

Օհանը դեռ սպասում էր և անհամբերությամբ աչք էր ածում յուր չորեքկողմը: Ոչ ոք չէր երևում, ոչ մի ձայն չէր լսվում, բացի քամու ձայնից, որի մեջ երբեմն խլանում էր մի այլ ձայն:— Դա էր լացի ձայնը անտեր մանուկի, որ նշտարի նման ծակում էր պատանու սիրտը: Ոչինչ ձայն այնքան դառն չի լինում, որպես անմայր մանուկի լալու ձայնը: Այդ զգում էր Օհանը:

Այժմ ավելի սկսեց տանջել նրան այն միտքը, թե ո՛ւր տանե տղային: Նա ոչ մի բնակարան չուներ, ապրում էր երկնքի թռչունների նման: Դեռ ամառ լինելով, եղանակն այնքան տաք էր, որ մինչև այնօր չէր մտածել յուր համար մի որևէ պատսպարան գտնելու: Ցերեկը, կթոցը շալակին, անցուցանում էր փողոցներում, իսկ գիշերը պառկում էր, ուր և պատահում էր: Այդ մեծ քաղաքը շատ բացօթյա խորշեր

ուներ անպատսպարան մշակների համար: Շատ անգամ պառկում էր յուր «մուշտարիների» բակերում և իբրև վարձ նրանց բակը ավելում էր և աղբը ձրիապես դեն էր ածում:

«Ո՞ւր գնամ, որտե՞ղ տանեմ»... շարունակում էր մտածել:

Նրան հեշտ էր մի պատի տակ, յուր ցավալի գյուտը կրծքին սեղմած, անցկացնել ամբողջ գիշերը: Նա ամեն զոհողության պատրաստ էր: Բայց մանուկը պահանջում էր մի բան, որ անկարող էր տալ նրան: Դա էր մայրական ստինքը:

Նեղ դրությունը մարդուն սրամիտ է անում: Հանկարծ նրա գլխում ծագեց մի միտք և, առանց երկար խորհելու, դուրս եկավ անձուկ «սոխախից» և սկսեց դիմել դեպի քաղաքի մի ավելի հետ ընկած կողմը:

Նա անցավ ցանցատեսակ «սոխախների» մի ընդարձակ բավիղ, որի մեջ սատանան անգամ կարող էր լույս-ցերեկով մոլորվել, եթե առաջնորդ չունենար: Տախտակյա փոքրիկ տնակները, մեղրաճանճի փեթակների նման, դրած էին միմյանց վրա և բարձրանում էին, որպես անհավասար և անկարգ սանդուղքներ: Եթե հրդեհն այնքան բարի չլիներ և ժամանակ առ ժամանակ չլափեր այդ ամեն ապականություններով լի «սոխախները», տարակույս չկար, որ աշխարհիս բոլոր հիվանդություններն այդ բավիղից պիտի ծագեին:

Առավոտյան լույսը դեռ նոր էր սկսել բացվել, երբ Օհանը գտնվում էր քաղաքի հեռավոր արվարձաններից մեկում: Այստեղ սփռված էին բազմաթիվ ողորմելի խրճիթներ, իսկ նրանց կարգում՝ հոյակապ քարաշեն տներ, որ հպարտ կերպով նայում էին դեպի սքանչելի Բոսֆորը: Այդ կիսա-ասիական և նվազ-եվրոպական քաղաքում՝ տգեղը խառն է գեղեցկի հետ, իսկ լավը՝ վատի հետ...

Օհանը մոտեցավ խրճիթներից մեկին, ոտքով խփեց, դուռը ճռնչալով ետ գնաց: Նա միանգամից հայտնվեցավ ամբողջ տան մեջ, որ միայն մեկ սենյակից էր բաղկացած:

Դռան շառաչման հետ մթության միջից լսելի եղավ մի մաշված ձայն:

— Այդ ո՞վ է, տեր աստվա՛ծ...

— Վե՛ր կաց, մա՛րե, քեզ համար մի տղա եմ բերել,— գոչեց Օհանը բարձր ձայնով:

Քնաթաթախ «մարեն», չհասկանալով, թե ինչ ասաց Օհանը, դարձյալ հարցրեց.

— Դո՞ւ ես, Օհան, ի՞նչ կա այս ժամանակը...

— Քեզ համար մի տղա եմ բերել,— կրկնեց Օհանը:

— Տղա՛... խենթացե՞լ ես, ի՞նչ է,— ասաց զարմացած պառավը:

— Մշու սուլթան սուրբ Կարապետը վկա, սուտ չեմ ասում,— երդվեցավ Օհանը և մոտենալով պատին, նրա միջից դուրս քաշեց մի քրքրված շորի փաթոթ, որ մի ժամանակ վերմակի տեղ էր ծառայում: Փաթոթի տեղից բացվեցավ մի լայն ծակ, որ խրճթի միակ լուսամուտն էր:

Տիրող մութը փոքր-ինչ պարզվեցավ: Դրսում արեգակն արդեն ծագել էր:

Պառավը, մրթմրթալով և յուր առավոտյան աղոթքը կարդալով, անկողնումը նստած, հագնվում էր: Երբ վերջացրեց, Օհանը դրեց նրա բարձերի մոտ յուր բերած խանձարուրը:

— Ճշմարիտ որ տղա է եղել,— ասաց պառավը բարեսիրտ ժպիտով:— Սատանորդի՛, այդ որտեղի՞ց գտար:

Օհանը նստեց պառավի անկողնի մոտ և սկսեց պատմել յուր հետ պատահած արկածները: Նրա սրտագին պատմության ժամանակ զարմացած պառավը երբեմն բարկանում էր, երբեմն անիծում էր, երբեմն խորին հառաչանքներ էր արձակում և երբեմն յուր շիջած աչքերը բարձրացնում էր դեպի վեր, գոհություն էր մատուցանում, որ խեղճ տղան ազատվել է:

Վերջացնելով յուր պատմությունը, Օհանն ասաց.

— Դու պետք է պահես այս տղային, մարե: Դա իմ ապաշխարանքն է: Ո՞վ գիտե, ի՞նչ մեղք էի գործել, և աստված ինձ ապաշխարանք տվեց: Ես կգնամ, կաշխատեմ, կվաստակեմ և կբերեմ կտամ քեզ, մարե: Ես քաղցած կմնամ և դրան կկերակրեմ, կմեծացնեմ, մարե: Մենք երկու եղբայրներ ենք, դա էլ թող մեր երրորդ եղբայրը լինի: Դու պետք է պահես այդ տղային: Քո հոգու համար ևս վարձք է:

Պառավը փոքր-ինչ մոլեռանդ էր:

— Ո՞վ գիտե,— հարցրեց նա,— կարելի է թուրքի կամ ջհուդի տղա լինի:

Օհանը փարատեց նրա կասկածանքը, ասելով թե հանձնող տիկինը պարանոցին խաչ ուներ կրած:

— Թո՛ղ այն խաչը նրան կուրացնի՛,— բացականչեց պառավը յուր երեսը ևս խաչակնքելով:— Նրա սիրտը քա՞ր էր, ի՞նչ էր, որ այդպիսի բան արեց: Ես այդ տղային իմ աչքի լույսի պես կպահեմ: Մի այծ կառնեմ և նրա կաթովը կկերակրեմ: Քո փողը թող քեզ մնա, Օհան, դու աղքատ տղա ես և աղքատ մայր ունես: Բայց ես պառավել եմ, ոչ ոք չունեմ, մեկ ոտս այս աշխարհումն է դրած, մյուս ոտս՝ գերեզմանի դռանը: Կպահեմ դրան, թո՛ղ իմ հոգուն էլ վարձք լինի...

Պառավը միայնակ չէր յուր խրճիթում: Մեկը, փոքր-ինչ հեռու, վերմակի տակից հառաչում էր: Վերմակը, որ այնքան փոքր էլ չէր, ծածկում էր նրա գլուխը, մեջքը, մինչև ծնկները: Երկար ոտները ձգված էին մինչև խրճթի դուռը: Այդ ոտներից մեկը նա երբեմն հոգոց հանելով քաշում էր, երբեմն մեկնում էր: Երեք օր առաջ այդ ոտքը կոտրեց նա խաներից (պանդոկ) մեկի սանդուղքներից մի ծանր հակ բարձրացնելու ժամանակ:

Պառավը, որի պահպանությանը հանձնեց Օհանը յուր բերած մանուկին, նույնպես մշեցի էր: Բոլոր մշեցի պանդուխտները նրան «մարե» էին կոչում: Եվ իրավ, այդ բարեսիրտ կինը մի տեսակ մայր էր, պանդուխտների համար: Տասն տարուց ավելի կլիներ, որ նա ապրում էր Կ. Պոլսում, և նրա խրճթի դուռը ամեն մշեցու առջև բաց էր: Կարիքը, «փարայի» պահանջը, կառավարության հարկը և պարտատիրոջ պարտքերը վերջին ժամանակներում ձգեցին սուլթանի մայրաքաղաքում, ի թիվս բազմաթիվ մշեցի պանդուխտների, և՛ մշեցի կանանցը: Դրանցից մեկն էր «մարեն»: Նա լվանում էր յուր հայրենակից մշակների լվացքը, կարում էր, կարկատում էր նրանց հագուստները և խնամք էր տանում հիվանդներին:

Օհանը երկար չմնաց պառավի մոտ, երբ ամեն պայման վերջացրեց նրա հետ, կրկին դիմեց դեպի սև խաչ կրող տիկնոջ բնակարանը:

2

Մի գիշեր, նույն բնակարանում, որտեղ հանձնեցին Օհանին խորհրդավոր ավանդը, սենյակներից մեկն աղոտ կերպով լուսավորված էր, լուսամուտները ծածկված էին անթափանցիկ վարագույրներով, և տաճկական ճաշակով զարդարած թախտի վրա պառկած էր մի մանկահասակ կին: Կանաչագույն լուսարգելով սքողած ղամբարի թույլ շառավիղները հազիվ երևան էին հանում նրա գունաթափ երեսի տխուր գծերը, որ պատկերացնում էին մի սգավոր հրեշտակի գեղեցիկ դեմք: Նրա թաց աչքերում արտասուքը դեռ չէր ցամաքել: Նա անդադար միևնույն հարցերով դառնում էր դեպի սև խաչը կրող տիկինը, որ նստած էր նրա թախտի մոտ, և, ինչպես երևում էր, նրա վշտալի սիրտը չէր հանգստանում ստացած պատասխաններով, որ ամենայն պատրաստականությամբ տալիս էր խաչակիր տիկինը նրան մխիթարելու համար:

— Ելենա՛,— այսպես էր խաչակիր տիկնոջ անունը,— լավ փաթաթեցի՞ր. հիմա գիշերը ցուրտ է լինում, կարող էր մրսել...

— Այդ ի՞նչ հարցնելու բան է, հարգելի տիկին.— Ելենան երեխա չէ, նա գիտե թե ինչպես պետք է խնամել մանուկներին... Ես ձեր տված պարսկական շալը բավական չտեսա և նրա վրա ավելացրի մի փափուկ բրդեղեն վերմակ:

— Թեթև՞ էր վերմակը:

— Թեթև էր, շատ թեթև, ինչպես փետուր:

— Կառապանին պատվիրեցի՞ր, որ հանդարտ քշեր և երեխայի քունը չի խանգարեր: Նա սիրում էր քնել, շա՛տ էր քնում...

— Ես բավական տեղ գնացի կառքի հետ: Կառքն այնպես էր շարժվում, որ գետինն էլ չէր զգում: Օրորոցի պես հանգիստ էր:

— Ե՞րբ կհասնեն...

— Կես ժամից հետո կառքը կհասնի ծովեզրը: Այնտեղ սպասում է մի ապահով նավակ: Էգուց առավոտյան նույն նավակով կհասնեն Բուրգաս կղզին:

Մանկահասակ կինը լռեց: Բայց արտասուքը նրա կամքին չէր հնազանդվում, նա բխում էր մայրական սրտից, մի տառապյալ մոր, որի նորածին մանուկը իրանից հեռացրած էր, և որին որդի կոչելու իրավունքից զուրկ էր դժբախտ մայրը...

Նա կրկին շարունակեց յուր հարցուփորձը.

— Ելենա՛, քեզ երդում եմ տալիս այն խաչին, որ դուք՝ քրիստոնյաներդ պաշտում եք, ճշմարիտն ասա՛, այն կինը լա՞վ կը պահե տղայիս:

Ելենան ձեռքը տարավ դեպի պարանոցի սև խաչը և ուղղեց նրան,— կարծես թե լուռ երդվում էր,— հետո մի առանձին համոզիչ ձայնով պատասխանեց.

— Այդ մասին կարող եք բոլորովին անհոգ լինել. հարգելի տիկին: Ես մի այնպիսի բարեխնամ ձեռքում հանձնեցի ձեր զավակին, որ հարազատ մոր ձեռքը միայն կարող է նրան փոխարինել: Ես այն կնոջը ճանաչում եմ, շատ վաղուց ճանաչում եմ: Նա չափազանց սեր ունի դեպի մանուկները, և մանավանդ կունենա դեպի ձեր զավակը:

— Ես նրան առատությամբ կվարձատրեմ, իմ խոստացածից ավելի կվարձատրեմ:

— Ես, առանց ձեզանից թույլտվություն ստանալու, այդ խոստմունքն արդեն արել եմ նրան,— ասաց Ելենան, դարձյալ ուղղելով պարանոցի սև խաչը:— Ես նրան խոստացա ամսական տասն ոսկի, և վեց ամսականը կանխիկ վճարեցի. բացի դրանից, նա կստանա մեզանից և այն ծախքերը, որ պիտի անե յուր զավակի պահպանության համար:

— Ինչպե՞ս:

— Չէ՞ որ նա էլ, կրծքի նորածին երեխա ունի: Ձեր զավակն ընդունելով, իրանն ստիպվեցավ տալ ուրիշ կնոջ պահելու: Բացի դրանից, նա առանձին ծախքեր կունենա քաղաքից հեռու ապրելով: Դուք այդպես պահանջեցիք, որ քաղաքում չմնա:

— Ի սեր աստուծո, Ելենա, ծախքերի մասին մի՛ խոսեք,— ասաց մանկահասակ կինը, երեսը շուռ տալով.— այդ ոչ ես կխնայեմ և ոչ «բեյը»...

«Բեյ»-ի անունը տալով, հարցրեց.

— Բայց ինչո՞ւ ուշացավ նա...

Ելենան նայեց պատի ժամացույցին և ապա պատասխանեց.

— Չէ ուշացել. նա խոստացել է ուղիղ երկու ժամին այստեղ լինել, բայց դեռ երկուսը չկա:

Մանկահասակ կինը դարձյալ լռեց և յուր թախծալի աչքերն ուղղեց դեպի ժամացույցը, երկար նրանից չէր հեռացնում: Ելենան նույնպես լուռ, նստած էր նրա թախտի մոտ, աթոռի վրա, անհամբերությամբ սպասում էր «բեյ»-ի գալուն: Սենյակում ուրիշ ոչ ոք չը կար, բացի մոխրագույն մեծ թութակից, որ երբեմն յուր կնճռոտ թաթը տանում էր դեպի գլուխը, քորում էր, և մի առանձին հեգնությամբ նայում էր այդ երկու կնոջ վրա:

Սենյակը բավական լավ կահավորված էր. պատերի վրա երևում էին պատկերներ, որոնք ներկայացնում էին զանազան տեսարաններ սուրբ գրքից, երևում էին զանազան սուրբերի փոքրիկ սնդրիներ, որոնք դրած էին պատուհաններում, մի խաչելություն, սև փայտից շինված: Ամբողջ սենյակը շնչում էր հույնի կամ կաթոլիկի կրոնական ջերմեռանդությամբ, որ լրացնում էր տան տիկինը յուր բարեպաշտական անձնավորությամբ: Նրա սև հագուստը, երեսի մեղմ գծերը, փափուկ ձայնը և այն հեզ ու խոնարհ գիրքը, որով նստած էր աթոռի վրա, այդ բոլորն այնպիսի տպավորություն էին գործում, որ կարծես ինքը այն պատկերներից մեկը լիներ:

Մեկը, ոտքերի մատների վրա, երբեմն մտնում էր մութ նախասենյակը, կանգնում էր դռան մոտ, ականջ էր դնում և դարձյալ հուշիկ քայլերով հեռանում էր: Դուրս գալով բակը մոտենում էր նա դրսի դռանը և, գիշերապահ շան նման, կուչ էր գալիս նրա հետևում, ականջները լարում էր դեպի փողոցը: Դա ներքևի հարկի դռնապանն էր: Եթե մեկը ցերեկով տեսնելու լիներ այդ մարդուն, նրա առջև կներակայանար մի այսպիսի կերպարանք, միջահասակ էր նա, մեջքը փոքր-ինչ կռացած դեպի ցած: Մազերի մեջ դեռ նոր էին սկսել ճերմակներ երևալ: Երեսի կաշին թուխ էր: Ավելի թուխ գույն ունեին մեծ ականջները, որ չղջիկի լայն թևերի նման դուրս էին ցցվել կեղտոտ, լերդագույն ֆեսի տակից: Շրթունքները կարճ էին, և ատամների երկու խոշոր շարքեր, հաճախ ծխելուց սաստիկ սևացած, մնում էին միշտ բաց, մանավանդ երբ նա ծիծաղում էր: Կարճ էր և դուրս ցցված քիթը, որ թավ հոնքերի հետ մի սուր անկյուն էր կազմում: Աչքերից մեկը միշտ խփած էր. երբ ձախը բաց էր անում, աջն էր խփվում, երբ աջը բաց էր անում, ձախն էր խփվում: Հագուստը մի ծիծաղելի խառնուրդ էր ասիականից և եվրոպականից: Ձախ ձեռքի երեք մատները կտրած էին:

Բակում տիրում էր խորին մթություն, միայն ստորերկրյա նկուղներից մեկի նեղ լուսամուտից նշմարվում էր լույսի մի բարակ շերտ, որ վերևից ուղղակի կերպով ձգվում էր դեպի ցած: Երևում էր, որ հետևի տախտակապատը լավ չէին փակել: Այդ լուսամուտից երբեմն քսվում էին ծիծաղի խուլ ձայներ, որ ամենևին չէին համապատասխանում այդ տխուր բնակարանի ընդհանուր լռությանը:

Մեծ փողոցի խճահատակը դղրդաց անցնող կառքի անիվներից և մի քանի րոպեից հետո դարձյալ լռեց: Կառքը կանգ առեց, բայց կանգ առեք բավական հեռավորության վրա: Մեկի շտապ քայլերն սկսեցին մոտենալ միևնույն դռանը, որի հետևում կուչ էր եկած վերևում նկարագրած մարդը: Նա վեր կացավ, պատրաստվում էր դուռը բաց անել, երբ նրա աչքին ընկավ նկուղի լուսամուտից փայլող բարակ շերտը: Նա մոտեցավ և դրսից խորհրդավոր կերպով բախեց լուսամուտը: Շերտն անհայտացավ և ծիծաղի ձայները լռեցին:

Նույնպիսի խորհրդավոր զարկ լսելի եղավ բակի դռան հետևից: Դռնապանը կամաց բաց արեց, հայտնվեցավ մի բարձրահասակ անձն, ոտքից ցգլուխ փաթաթված լայն վերարկվի մեջ: Նա, առանց մի բան ասելու դռնապանին, լուռ անցավ բակի միջով և դիմեց դեպի այն սենյակը, որտեղ գտնվում էր տանտիկինը դժբախտ մոր հետ:

Խավարի մեջ կանգնած դռնապանը, աջ ձեռքի բթամատի ծայրը դնելով յուր քթի սուր ծայրի վրա, բոլոր մատները հեգնական կերպով բաց արեց նրա հետևից: Եթե տիրող մթությունն արգելք չլիներ, շատ հետաքրքրական էր տեսնել այն գարշելի ծիծաղը, որ հայտնվեցավ այդ մարդու նենգավոր դեմքի վրա:

Մտնելով սենյակը, նա յուր լայն վերարկուն և փոքրիկ գլխարկը, որ քաշել էր աչքերի վրա, մի կողմ ձգեց, և շտապով մոտեցավ թախտի վրա պառկած կնոջը, գրկեց նրան, ասելով.

— Նիրի՛ր ինձ, սիրելի Զահրա, ես ուշացա... շատ ուշացա... եթե գիտենայիր դու, թե ի՞նչեր պատահեցին ինձ հետ, չէիր մեղադրի ինձ:

— Այո՛, ուշացար...— ասաց մանկահասակ կինը տխուր ձայնով, և նրա ձայնը խեղդվեցավ կրծքի մեջ:

— Տարա՞ն...— հարցրեց երիտասարդը, զգացված կերպով:

— Տարա՛ն...— պատասխանեց մանկահասակ կինը և աչքերը ծածկեց ձեռքի թաշկինակով:

Երիտասարդը նստեց նրա մոտ և երկար մխիթարում էր նրան ջերմ, սրտագին խոսքերով: Բայց տառապյալ մոր խուլ հեկեկանքը միայն լինում էր նրա սփոփիչ խոսքերի պատասխանը:

Փոքր-ինչ հեռու, ոտքի վրա, կանգնած էր Ելենան: Այդ սրտաշարժ վայրկյանում նա մի այնպիսի երկյուղած դեմք էր ընդունել, կարծես թե աղոթելիս լիներ: Երիտասարդը նոր նկատեց նրան, մոտեցավ և, ձեռքը մեկնելով, ասաց.

— Ես բառեր չեմ գտնում իմ շնորհակալությունը հայտնելու քեզ, հարգելի Ելենա, այն անթիվ բարությունների համար, որ դու հանձն առար թե՛ Զահրայի վերաբերությամբ և թե հատկապես ի՛մ վերաբերությամբ: Հուսով եմ, որ մեր մանուկի պահպանությունն այնպիսի ապահով վիճակի մեջ դրած կլինես, որ Զահրան ավելի առիթներ կունենա քեզանից գոհ լինելու, իսկ ես՝ նրա երախտագիտության պարտքը քեզ լիապես վճարելու:

— Շնորհակալ եմ, բեյ,— պատասխանեց Ելենան բարեսիրտ ժպիտով,— այդքանը և՛ ինձ համար մեծ վարձատրություն է, որ դուք ինձ արժանացնում եք՝ իմ ձեռքը սեղմելու: Իսկ ձեր զավակի մասին կարող եք բոլորովին ապահով լինել: Ելենան փորձված կին է, նա գիտե, թե որպես պետք է խնամել մանուկներին:

Բեյը հայ ամիրաների այն ազնվատոհմ զավակներից մեկն էր, որ յուր պատանեկության հասակից Փարիզում տաշվել, կոկվել էր համաշխարհական մայրաքաղաքի կենցաղավարության բոլոր նրբություններով: Նրա կախարդիչ կերպարանքը, որ ամեն կնոջ սիրտը կարող էր դողդել, նրա վայելչակազմ հասակը, յուր բոլոր ճկունությամբ, ավելի փայլ էին տալիս այդ նրբություններին: Երեսուն տարեկան հազիվ կլիներ նա, բայց բոլորովին թարմ մնացած դեմքը մի դեռահաս պատանու տպավորություն էր գործում:

Նա մի քանի անգամ անցավ սենյակի միջով, նայեց ժամացույցին, և ապա դիմեց մանկահասակ կնոջը, ասելով.

— Մենք ուշանում ենք, սիրելի Զահրա:

Մանկահասակ կինն իսկույն չպատասխանեց:

Ելենան, ինչ-որ մտածելով, հեռացավ սենյակից:

— Ես հույս ունեմ, որ դու այնքան լավ ես զգում քեզ,— կրկնեց երիտասարդը, բռնելով նրա ձեռքից,— որ կարող ենք, առանց ժամանակ կորցնելու, թողնել այդ տունը:

— Առողջությունս վատ չէ,— պատասխանեց նա նվաղած ձայնով,— բայց չգիտեմ՝ ինչո՞ւ այս գիշեր այդքան թույլ եմ զգում ինձ:

— Բոլորը կանցնի, նազելի Զահրա. դրսի օդը կկազդուրե քեզ, պատրաստվի՛ր, գնանք:

— Գնանք,— ասաց նա ցած իջնելով թախտի վրայից և հենվելով երիտասարդի թևքի վրա:

— Այդպես չէ կարելի, սիրելի Զահրա, դու պետք է փոխես այս հագուստդ,— նկատեց երիտասարդը:

— Ինչո՞ւ:

— Դու պետք է քո սովորական տաճկական հագուստով մտնես քո հոր տունը:

Տիկինը նոր մտաբերեց, որ քրիստոնյայի զգեստ ուներ հագած և կրկին նստեց թախտի վրա:

Երիտասարդը դուրս գնաց կանչելու Ելենային, որ օգնե նրան հագուստը փոխելու: Նա գտավ նրան նախասենյակում, մի աթոռի վրա նստած և գլուխը դեպի ցած խոնարհեցրած, որպես թե նիրհում էր: Բայց նրա արթուն ականջները լարված էին դեպի ներսի խոսակցությունը: Երիտասարդը, ներողություն խնդրելով, զարթեցրեց նրան:

— Այդ երրորդ գիշերն է, որ չեմ քնել, բեյ,— ասաց նա աչքերը բաց անելով,— անցյալ գիշեր Զահրան փոքր-ինչ վատ էր զգում իրան, և ես, նրա անկողնի մոտ նստած, մինչև լույս աղոթում էի:

Երիտասարդը խնդրելով նրան փոխել Զահրայի հագուստը, ինքը դուրս եկավ բակը: Մի քանի անգամ անցավ նեղ բակի միջով, հետո հանեց ծխախոտի գեղեցիկ ամանի միջից մի գլանակ, լուցկի էր որոնում, որ ծխե: Այդ միջոցին, ինչպես մի ուրվական, հայտնվեցավ նրա մոտ դռնապանը: Խավարի միջից նա արդեն գուշակել էր երիտասարդի ցանկությունը, լուցկին շտապով շփեց յուր հագուստի կեղտից կոշտացած փեշերին և բռնեց երիտասարդի առջև: Երիտասարդը շնորհակալությամբ ընդունեց այդ ծառայությունը, հարցնելով.

— Ի՞նչ ազգից ես:

Դռնապանն աջ աչքը խփեց, ձախը բաց արեց, ձախը խփեց, աջը բաց արեց և վերջապես կակազելով պատասխանեց.

— Նրանցից եմ... մեծապատիվ էֆենդի:

— Որոնցի՞ց: Հրեա՞ ես:

— Այո՛, մեծապատիվ էֆենդի:

— Էլ ինչո՞ւ ես ծածկում: Ինչո՞վ է վատ հրեան:

— Ախր մեզ վրա ուրիշ կերպ են նայում... մեծապատիվ էֆենդի:

— Իզուր:

Նկատելով բեյի համակրությունը, նա վստահություն ունեցավ ավելի մտերմական լինելու:

— Ամենքը, մեծապատիվ էֆենդի, խո ձեզ նման բարեսիրտ չեն, որ մտնեն թշվառների դրության մեջ...

Բեյը մի ոսկի դրեց նրա ափի մեջ: Հրեան նրա հագուստի դրոշակները սեղմեց յուր շրթունքին և տասն անգամ գլուխ տալով հեռացավ: Բարեբախտաբար մութն էր, բեյը նրա զզվելի կապկությունները չնկատեց:

Երբ բեյը կրկին մտավ սենյակը, Զահրան արդեն հագուստը փոխած, պատրաստ էր:

— Մնաս բարյավ, Ելենա,— ասաց երիտասարդը բռնելով նրա ձեռքը և տալով նրան մի թանկագին մատանի.— այդ նշանը ով որ բերելու լինի ինձ մոտ, կստանա այն գումարը, որ նշանակված է ամեն ամիս քեզ վճարելու համար: Իսկ առայժմ ընդունի՛ր, խնդրեմ, այդ փոքրիկ նվերը:

Ելենան մեծ դժվարությամբ ընդունեց ընծաները, զանազան դարձվածներով կրկնելով միևնույն խոսքերը, թե ինքը նյութական ակնկալություններ չունի, այլ յուր համար թանկ է բեյի բարի ուշադրությունը, և թե ինքը, ավելի կրոնական զգացմունքներից դրդված, յուր հոգաբարձության ներքո է առնում նրանց «սիրո առաջին պտուղը» և այլն:

Ոչ սակավ սրտաշարժ եղավ Զահրայի բաժանվիլը յուր խնամակալից. մի քանի անգամ համբուրեց նրա ձեռքը, երկար՝ արտասուքն աչքերում աղաչում էր, պաղատում էր յուր զավակի պահպանության համար, խնդրում էր, որ երբեմն նրան բերել տա յուր տունը, որպեսզի ինքը գա տեսնելու, պատվիրում էր, որ նրա

առողջության մասին շուտ-շուտ տեղեկություններ տա իրան, և յուր սրտի բոլոր զեղմունքին հագուցիչ պատասխաններ էր ստանում:

Երբ ամեն ինչ վերջացած էր, երիտասարդը կրկին փաթաթվեցավ յուր լայն վերարկվի մեջ, քաշեց աչքերի վրա փոքրիկ գլխարկը և առավ Զահրայի թևքը, որ նույնպես փաթաթված էր մի տաճկական թեթև շալի մեջ և երեսը սքողած ուներ անթափանցիկ շղարշով:

Ելենան ճանապարհ դրեց նրանց մինչև բակի դուռը:

Մտնելով փողոցում սպասող ծածկված կառքի մեջ, երիտասարդը հրամայեց.

— Դեպի ծովեզրը...

Է

Յուր հյուրերին ճանապարհ դնելուց հետո, երբ բակի դռները կրկին փակվեցան, Ելենան նկատեց հրեային, որ փորը բռնած, երբեմն կուչ էր գալիս, կծիկ էր դառնում, երբեմն ձգվում էր և միևնույն ժամանակ լրբաբար ծիծաղում:

— Սո՛ւս, նզովյալ, ի՞նչ ես այդպես հռհռում,— սաստեց նրան տիկինը,— կորի՛ր քո տեղը:

— Ի՞նչ անեմ, հարգելի տիկին, չեմ կարողանում ծիծաղս պահել, աստված վկա, չեմ կարողանում...— պատասխանեց նա, ձեռքերը չհեռացնելով յուր կլորիկ, դուրս ընկած փորից:

— Սո՛ւս, ասում են քեզ,— կրկնեց տիկինը բարկացած ձայնով,— ծիծաղելու ժամանա՞կ ես գտել:

Հրեան մրթմրթալով մոտեցավ, անհետացավ դռան հետևում:

— Առանց հարցնելու, ոչ ոքի համար դուռը չես բաց անի, հասկացա՞ր,— պատվիրեց տիկինը:

— Հասկացա, հարգելի տիկին... ինչպես չհասկացա,— ասաց նա յուր սովորական խորամանկ ձայնով:

Ելենան լուռ անցավ բակի միջով, մոտեցավ ներքնատան նկուղի լուսամուտին, որտեղից մի ժամ առաջ նշմարվում էր լուսեղեն բարակ շերտը, և երեք անգամ բախեց լուսամուտը: Հետո մտավ սենյակը, հոգնած վաստակած մարդու նման, պառկեց այն թախտի վրա, որտեղ մի քանի րոպե առաջ պառկած էր Զահրան: Եվ իրավ, նա հոգնած էր: Ոչինչ այնքան չէ հոգնեցնում, որպես մտավոր և հոգեկան սաստիկ լարված դրությունը: Այս գիշեր այդ դրության մեջ էր Ելենան՝ յուր հյուրերի ներկայության ամբողջ ժամանակը: Բայց նա հանգստանալ չկարողացավ. նա սկսեց ինքն իրան հաշիվ տալ այն բոլորի մասին, ինչ որ կատարել էր, և մտածել այն բոլորի մասին, ինչ որ նրան նորից ներկայանում էր կատարելու...

Ելենան ազգով հույն մի այրի էր: Յուր ամուսնուց ունեցած զավակները բոլորը մեռան, և այնուհետև կրկին չամուսնացավ նա, թեև ամուսնանալու համար դեռ բավական թարմություն ուներ: Պարապում էր նա մի տեսակ վաճառականությամբ, որ ավելի կանանց հատուկ է: Նա տնային «թելլալ» (միջնորդ) էր: Տաճիկների թե՛ բարձր

դասի և թե միջին դասի կանանոցների դռները բաց էին նրա առջև: Ամեն օր յուր մթերքների ծանր արկղը դնում էր նա իրանից անբաժան հրեայի շալակը և սկսում էր տները պտտել: Ցերեկը հրեան նրա համար բեռնակրություն կաներ, իսկ գիշերը դռնապանություն: Այդ արկղի մեջ կային կանանց համար զանազան պաճուճանքներ, թանկագին շալեր և արծաթյա կամ ոսկեղեն զարդարանքներ: Այդ մահմեդական քաղաքում վաճառական կինը միայն կարող էր մուտք գործել կանանոցներում, այդ պատճառով Ելենայի առևտուրը բավական հաջող էր գնում: Նա ոչ միայն վաճառում էր յուր մթերքները, այլ պատահած ժամանակ գնում էր տաճիկ կանանցից, երբ նրանք մի ավելորդ բան ունեին վաճառելու: Շատ անգամ յուր ունեցած նորը փոխում էր հնի հետ և վրադիր փող էր ստանում:

Նրա առևտրական ձեռնարկությունների հետ կապված էին և այլ գործողություններ: Պատահում էր, որ այս կամ այն աստիճանավորի կինը փողի կարոտություն ուներ, նա յուր պատվին անվայել էր համարում անձամբ այս կամ այն վաշխառվին դիմելու: Ելենան այդ տեսակ կարոտյալների համար մի պատրաստի դրամարկղ էր: Նա վեր էր առնում թանկագին գրավականներ և նրանց պարտք էր տալիս ծանր տոկոսներով: Եվ եթե ինքը պատրաստի փող չէր ունենում, նույն իրեղենները գրավ էր դնում մի սեղանավորի մոտ և փող էր գտնում:

Այդ առիթներով մուտք գործելով կանանոցների խորշերում և ծանոթանալով այնտեղ փակված արարածների հետ, սակավ չէր պատահում, որ Ելենան կամ վկա և կամ միջնորդ էր դառնում հարեմական զանազան բանսարկությունների (ինտրիգ): Դրսից անմատչելի կանանոցներում ամեն տեսակ ապսպարանքներ տանելու համար, և ներսից դեպի դուրս ամեն տեսակ հանձնարարություններ կատարելու համար, Ելենան մի ամենահարմար միջնորդ էր: Այդ պատճառով սակավ չէր պատահում, որ նա դեր էր խաղում զանազան սիրահարական հարաբերությունների մեջ, և յուր դերը կատարում էր բավական ընդունակ կերպով:

Այժմ կարծեմ հասկանալի է, թե ի՞նչ առիթով ծանոթացավ նա բեյի և Զահրայի հետ:

Ելենայի բախման ձայնը դուրս կոչեց ներքնատան նկուղից մի տղամարդ մի կնոջ հետ: Վերջինը գրկում ուներ երկու երեխա, որոնք կարծես երկվորյակներ լինեին: Երբ նրանք մտան սենյակ, Ելենան չշարժվեցավ յուր տեղից: Երկուսն էլ մտերմաբար բոլորեցին նրա թախտի շուրջը, ասելով միաձայն.

— Բավական երկար տևեցին ձեր հյուրերի զրույցները...

— Բեյը սիրում է խոսել,— պատասխանեց Ելենան թեթև ժպիտով,— իսկ Զահրան ստիպված էր խոսել, որովհետև սիրտը լցված էր...

Մանկահասակ կինը, որին կոչում էին Ալպինիա, թուխ դեմքով, թուխ աչքերով, նիհար ծնոտով, սև, գանգուր մազերով, որ ծածկում էին նրա փոքրիկ ճակատը, և մուգ-կարմիր շրթունքներով մի գեղեցկուհի էր, որի նմանները կարելի է տեսնել բոշաների տաղավարներում միայն: Ամեն անգամ երբ կրակոտ աչքերը բացուխուփ էր անում, երկար թերթերունքները մթին ալիքներով ծփում էին և ամբողջ դեմքը խաղում էր, որպես հավերժական կենդանություն: Այդ մշտածիծաղ խաղն արտահայտում էր մի ուրախ, աշխույժ բնավորություն, որ այնպիսի տպավորություն էր գործում, որ ոչ միայն ազատ էր նա կյանքի հոգսերից, այլ ոչինչ բան նրան հոգս պատճառել չէր կարող:

Տղամարդը, որին նա յուր ամուսին էր կոչում, և որի հետ ամուսնացած չէր, ընդհակառակն, ներկայացնում էր յուր հարազվարթ կնոջ մռայլ հակապատկերը: Յուր մելամաղձոտ, մուգ-դեղնագույն դեմքով արտահայտում էր նա մի մթին

բնավորություն: Նա չէր խոսում, այլ խուլ կերպով մռնչում էր: Նրա միտքը կարելի է հասկանալ ձայնի դղրդյունից, ինչպես խոսում են գազանները: Աչքերի մեջ վառվում էր վայրենի կրակ:

Այդ երկու ամուսինները, այլ խոսքով, սիրողը և սիրուհին, Ելենայի անբաժան դրացիներն էին: Ուր և տուն վարձեր նա, ուր և տեղափոխեր նա յուր բնակարանը, ներքնատան նկուղների մեջ նրանց համար միշտ պատրաստի տեղ կար: Նրանք այդ մթին խորշերում ապրում էին բուերի նման.— ցերեկով թաքնվում էին, իսկ գիշերը դուրս էին գալիս...

Ալպինիան նստած էր նույն բազկաթոռի վրա, ուր մի քանի րոպե առաջ նստած էր Ելենան: Նրա երկու ծնկների վրա հանգչում էին երկու երեխաները, որպես երկու անմեղ հրեշտակներ: Դրանցից մեկը յուր հարազատն էր, իսկ մյուսը նույն երեխան էր, որի պահպանության համար այնքան արտասունքներ թափվեցան, այնքան խոստմունքներ եղան...

Այն վայրկյանում, երբ Ելենան խոսում էր տառապյալ մոր հետ, թե ո՛րպիսի հոգածությամբ ճանապարհ դրեց երեխային դեպի Բուրգաս կղզին, նույն վայրկյանում երեխան գտնվում էր ներքնատան նկուղի մեջ...

— Մեր բաժի՛նը ավարից...— ասաց տղամարդը խռպոտ ձայնով:

Ելենան բաց արավ քսակը, որ ստացել էր բեյից, և մի բուռն ոսկի, առանց համբարելու, տվեց նրան:

— Այսքա՞նը միայն,— հարցրեց նա կոպիտ կերպով:

— Քեզ համար միևնույն է, սիրելի Էլիաս, թե շատ լինի, թե սակավ,— պատասխանեց նրան Ելենան մեղմ ձայնով, որի մեջ հնչվում էր խորին հանդիմանություն.— որքան էլ և լինի, էգուց կամ մի գինետնում կվատնես, կամ կխաղաս և տանուլ կտաս:

— Վատնելու և տանուլ տալու համար ևս, հարգելի տիկին, որքան շատ լինի, այնքան ավելի ախորժելի է,— ասաց նա, ոսկիները յուր քսակի մեջ ածելով:— Դու գիտես, որ ես ամեն բանի մեջ սիրում եմ ծայրահեղություն...

— Ես այդ զվարճությունից չեմ զրկի քեզ, սիրելի Էլիաս,— ասաց Ելենան թեթև ժպիտով:— Դու ևս այն գիտես, որ եթե քեզ ավելի փող հարկավոր լինի, ես չեմ խնայի:

Էլիասը լռեց և սկսեց լցնել յուր ծխաքարշը, որի «ծովափրփուրից» շինված գլուխը ներկայացնում էր մի հրեշ, ահագին քթով և դուրս ընկած այտերով:

— Իսկ ի՞նձ...— խոսեց Ալպինիան և՛ ծիծաղելով, և՛ ամաչելով:

Ելենան դրեց նրա առջև երկու պարսկական թանկագին շալեր, ասելով.

— Ո՞րը կամենում ես, ընտրի՛ր, սիրելի Ալպինիա:

Գեղեցիկ շալերը, որ ամեն կնոջ կարող էին խելքից հանել, ընդհակառակն, Ալպինիայի մեջ զարթեցրին խիստ տխուր զգացմունքներ: Նա մի առանձին թախծությամբ նայում էր նրանց վրա և կարծես վախենում էր ձեռքը մեկնել, որ մատները չայրվեին:

— Խե՜ղճ մայր,— ասաց նա զգացված ձայնով.— այդ շալերով պատվիրեց նա փաթաթել յուր մանուկին, որ ճանապարհին չմրսի... Իսկ ա՞յժմ...

— Այժմ դու պետք է այդ շալերից մեկը վեր առնես և զարդարես քո սիրուն թիկունքը,— ընդմիջեց Էլիասը, բաց թողնելով բերանից ծխային թանձր մառախուղը, որ ծածկեց նրա վայրենի դեմքը:

Ալպինիան այն աստիճան այլայլված էր, որ չլսեց ամուսնու ասածը և շարունակեց, որպես թե ինքն իրան խոսելով.

— Հիմա էլ իմ աչքի առջևն է խեղճ կնոջ մաշված, գունաթափված դեմքը... Երբ հանձնեց նա ինձ յուր մանուկին, այդ յուր հոգին էր, որ բաժանեց իրանից և դրեց իմ գիրկը... Ո՜րքան աղաչում էր նա, ո՜րքան արտասուք էր թափում, որ լավ պահպանեմ յուր երեխային... Ես խոստացա... ևս շատ բաներ խոստացա... և նրա մանուկն առնելով դուրս եկա... փոխանակ դեպի փողոցում սպասող երևակայական կառքը դիմելու, որ պիտի տաներ մեզ դեպի Բուրգաս կղզին, ես թաքնվեցա ներքնատան նկուղի մեջ... և նրա մանուկը թաքցրի այնտեղ...

Թե Էլիասին և թե Ելենային այնպես էր թվում, որ նա զառանցության մեջ է խոսում: Երկուսն էլ զարմացած նայում էին նրա վրա:

— Ալպինիա՛,— ձայն տվեց ամուսինը, կամենալով զգաստացնել նրան յուր ցնորքներից.— այդ ի՞նչ ես դուրս տալիս...

— Ալպինիա՛,— ասաց Ելենան դողալով,— ի՞նչ պատահեց քեզ հետ:

— Ոչինչ...- պատասխանեց նա արտասվալի ձայնով:— Ես այդ զարդարանքներից հրաժարվում եմ, ինձ պետք չեն...

Նա ձեռքով մի կողմ հրեց շալերը:

Ալպինիայի հետ շատ էին պատահում տարօրինակ փոփոխություններ. հանկարծ՝ արտասուքից դեպի ծիծաղ, ծիծաղից դեպի արտասուք, կամ ուրախ, անհոգ խոսակցությունից հետո ընկղմվիլ խորին, մելամաղձական թախծության մեջ: Բայց նրա այժմյան վարմունքը ոչ միայն տարօրինակ երևաց Էլիասին, այլ սաստիկ վիրավորեց նրան: Արհամարհանքով մի կողմ հրելով շալերը, նա այդ շալերը, կարծես, յուր ամուսնու գլխին խփեց:

— Ալպինիա՛,— գոչեց նա կատաղի ձայնով,— ասում են քեզ՝ վեր ա՛ռ, ինչ որ տալիս են...

Ամուսնու սպառնալիքը, որ սովորաբար ծեծով էր վերջանում, այս անգամ չվախեցրեց Ալպինիային: Նա ձեռքը մեկնեց դեպի շալերից մեկը, ասելով.

— Ես այդ կվերառնեմ, բայց ոչ թե ինձ համար, այլ դարձյալ այս երեխայի համար:

Նրա պատասխանն ավելի վիրավորեց Էլիասին:

— Այդ երեխային դու չի պիտի պահես...

— Կպահեմ:

— Իսկ քո լակոտին ի՞նչ կանես:

— Նրան էլ կպահեմ: Իմ կրծքի մեջ երկուսի համար ևս սնունդ կա:

— Կամ սա՛... կամ նա՛...

— Ոչ, և՛ սա, և՛ նա...

— Ալպինիա՛...— դարձյալ գոռաց գազանը:

Ալպինիան ավելի համառեցավ:

— Այդ քո գործը չէ,— ասաց նա արտասուքը սրբելով,— մայրերը միայն գիտեն, թե ի՞նչ է երեխան... ես եղել եմ նույնպիսի դժբախտ մայր, որպես այն խեղճ օրիորդը... ես գիտեմ ինչ է մոր սիրտը... Գազաններն անգամ սիրում են իրենց կորյուններին... Իսկ ե՛ս, որքան էլ փչացած կին լինեմ, գազանից վատ չեմ...— արտասուքը խեղդեց նրան, թույլ չտվեց, որ շարունակե:

— Դու սկսում ես դարձյալ քո հին երգերը երգել... Կամ սա՛, կամ նա՛... կրկնում եմ քեզ: Եթե դրան պահելու լինես, էգուց քո լակոտին ծովը կուղարկեմ...

— Ինչպես մի քանիսին ուղարկել ես...

— Այո՛: Ոչինչ ինձ այնքան ատելի չէ, որքան երեխայի ձայնը: Ես շատ ուրախ կլինեի, եթե բոլոր կանայք ջորիների նման ամուլ լինեին...

Ելենան լուռ հանդիսատես էր լինում այդ վիճաբանություններին: Նրան չէր զարմացնում Էլիասի անգութ վայրագությունը, նրան զարմացնում էր Ալպինիայի ընդդիմադրությունը: Նա այնքան եղեռնական գործողությունների ականատես էր եղել, որ նրա մեջ ամեն փափուկ զգացմունքներ քարացել էին: Բայց Ալպինիան, ինչպես ինքը խոստովանվեցավ, թեև փչացած կին էր, բայց նրա մեջ դեռ պահպանվել էին հանգած սրտի մի քանի կենդանի կայծեր...

Ելենան այնքան խոհեմություն ուներ, որ երկուսի զայրացած րոպեներում՝ չկամեցավ ոչ Ալպինիայի և ոչ Էլիասի կողմը բռնել, թեև նա հակված էր ավելի դեպի վերջինը: Նա յուր միջամտությունը թողեց ավելի հարմար ժամանակի: Երկուսն էլ նրա համար պիտանի անձնավորություններ էին. պետք էր հաշտեցնել նրանց:

— Խնդրեմ, թողեք այդ կռիվը,— ասաց նա,— դրա ժամանակը չէ, մենք ուրիշ, ավելի կարևոր խոսելիքներ շատ ունենք...

Էլիասը չսպասեց նրա կարևոր խոսելիքներին, վեր առավ յուր ծխաքարշը և մրթմրթալով դուրս գնաց: Նրա բացակայության միջոցին՝ Ելենան դարձավ դեպի վշտացած կինը այս խոսքերով.

— Սիրելի Ալպինիա, ինչո՞ւ ես բարկացնում նրան. դու խո գիտես նրա կամակորությունը, նրա անտանելի համառությունը, ինչ որ ասաց, նրա վրա էլ կմնա:

— Ես չեմ հասկանում, նա ի՞նչ է ուզում ինձանից:

Ելենան սովորություն ուներ յուր ամենասրտագին ցանկությունները կատակի ձևով արտահայտել:

— Նա ուզում է,— պատասխանեց նա խորամանկ ժպիտով,— որ դու քո զավակին սնուցանես, և ամեն ամիս ստանաս այն վճարը, խոստացել է բեյը, որպես թե նրա զավակին ես սնուցանում...

— Իսկ բեյի զավակն ի՞նչ անեմ:

— Այդ քո ամուսնու գործը կլինի...

— Իսկ երբ մի օր հայտնվի բեյը և յուր զավակին պահանջե ինձանից:

— Այն ժամանակ քոնը կտաս նրա զավակի փոխարեն:

— Ես չեմ կարող հոգիս կորցնել: Աշխարհի բոլոր հարստությունների հետ չեմ փոխի իմ զավակին: Իմ երեխան ինձ համար ամեն բանից ավելի թանկ է:

— Բայց քո ամուսնու աչքում մի սոխի գլխի չափ գին չունի: Եթե նա յուր բոլոր երեխաները, որ ծնել են նրա համար կանայք, պահելու լիներ, մի բանակ կկազմեին:

— Այդ ես գիտեմ...— ասաց Ալպինիան դառնացած կերպով: — Ես այս անգամ վճռել եմ՝ ամեն բանի պատրաստ լինել և թույլ չտալ, որ նա յուր կամքը կատարե...

Խոսակցությունն ընդհատվեցավ: Դուռն աննկատելի կերպով բացվեցավ, ստվերի մեջ հայտնվեցավ հրեան և ձեռքերը տրորելով մի քանի անգամ հազաց, աջ աչքը խփեց ձախը՝ բաց արավ, ձախը խփեց, աջը՝ բաց արավ և վերջապես հարցրեց.

— Պարո՜նը... բա՞ց անեմ...

— Ի՞նչը, այդ անիծված աչքե՞րդ,— հարցրեց Ելենան բարկանալով:

— Ոչ, հարգելի տիկին, դուռը...

— Այդ ի՞նչ հարցնելու բան է, ի՞նչու չբացարիր:

— Դու հրամայեցիր, որ մինչև քեզ չհայտնեմ, բաց չանեմ:

— Հիմար, դու պետք է հասկանայիր, որ «պարոնի» համար չէր կարող լինել իմ հրամանը:

— Այդ ես չմտածեցի, հարգելի տիկին,— մրթմրթաց հրեան և շարունակելով ձեռքերը տրորել, հեռացավ, թեև նա շատ լավ գիտեր, որ «պարոնը» յուր տիկնոջ բոլոր հաճախորդների մեջ մի առանձին բացառություն էր կազմում, որ վայելում էր անսահման ազատություն:

Ներս մտավ մի բավական լավ հագնված պարոն, որ, դեռ նախասենյակը չմտած, դրսից սկսեց խոսել.

— Փոքր էր մնում, որ այդ նզովյալ հրեան ինձ փողոցումը թողներ... բայց նա էլ իրավունք ուներ... ես ուշացա... շատ ուշացա... բայց եթե գիտենայիք՝ ի՜նչ տեղեր եմ եղել... որտեղ չեմ եղել... այսօր ամբողջ քաղաքը չափել եմ...

Վերջին խոսքերն արտասանեց նա, երբ արդեն գտնվում էր սենյակի մեջտեղում և ձեռնոցներից մեկը դուրս էր բերել: Շնորհալի կերպով մոտեցավ նա, նախ ձեռքը մեկնեց տան տիկնոջը և ապա Ալպինիային, հետո մոտ քաշեց բազկաթոռներից մեկը, անփույթ կերպով ձգվեցավ նրա վրա և սկսեց հանել մյուս ձեռքի ձեռնոցը:

— Լավ է, որ ոտներս լեզու չունեն, եթե ոչ, սաստիկ կբողոքեին իմ դեմ... Ո՜րքան տանջել եմ նրանց այսօր... բայց ոչինչ չհաջողվեցավ... բոլո՜ր ապարդյուն... բոլո՜ր իզուր...

Այդ պարոնը շատ անգամ հայտնվում էր Ելենայի տանը, և այն միշտ գիշերով, ու միշտ էլ արտահայտում էր միևնույն մաշված սրախոսությունը, թե զարմանում է, որ

յուր ոտները չեն բողոքում և այլն: Իրավ, նա շատ էր թափառում: Կ. Պոլսի համարյա բոլոր ետ ընկած ակումբների և սրճանոցների նշանավոր հերոսներից մեկն էր նա:

Հասակն առած մարդ էր պարոնը, մոտ հիսուն տարեկան, բայց դեռ բավականին թարմ էր մնացած: Նրա դեմքն այն անհամապատասխան դեմքերից էր, որ ճերմակ մազերի հետ կրում է կարմիր այտեր այն զանազանությամբ միայն, որ այդ կարմրության մեջ նշմարվում էր բարակ երակների մի ամբողջ ցանց, որ լերդի գույն ուներ: Կարմրությունը տարածվում էր և՛ պարանոցի վրա թե առջևի կողմից և թե հետևի կողմից: Միջահասակ էր նա և մսուտ: Երևում էր, որ յուր վրա առանձին ուշադրություն դարձնել գիտեր: Թե զգեստավորության և թե սանրվածքի մեջ մի ամենափոքր սխալ չէր կարելի նկատել: Ամբողջ մարմնով բուրում էր մուշկի խիստ նուրբ անուշահոտությամբ: Ելենան սիրում էր այդ հոտը, և նա այցելելու ժամանակ միշտ այդ հոտը յուր հետ էր բերում: Հարուստ ժառանգություն ստանալու բախտն ունեցավ նա և շուտով վատնելու դժբախտությունը: Ամեն ինչ կորցրեց նա, մնացին միայն երիտասարդական սովորությունների մի քանի բեկորներ, որ ամենևին չէին պատշաճում նրա զառամյալ ծերությանը:

Ներս մտավ Էլիասը և ծուռը կերպով նայելով պարոնի վրա, գնաց, նստեց յուր տեղը, առանց ողջունելու:

Պարոնն իսկույն նկատեց, որ Ելենայի ուրախ հասարակության մեջ այս գիշեր ինչ-որ յուր կարգումը չէր: Յուր լռությամբ ավելի ուշադրություն էր դարձնում յուր վրա մշտածիծաղ Ալպինիան: — Դու այս գիշեր տխուր ես, Ալպինիա,— հարցրեց նրանից, և երբ պատասխանն ուշացավ, ինքն իրան պատասխանեց.

— Երբ Ալպինիան կամենում է ինձ պատժել, միշտ իրան տխուր է ձևացնում:

Էլիասի աչքերը վառվեցան:

— Իսկ դո՛ւ, երբ կամենում ես մարդկանց պատմել, շատ ես խոսում,— ասաց նրան:

Պարոնը լեզուն քաշեց:

Ելենայի վիճակը շատ նախանձելի չէր: Նա չգիտեր, թե ի՞նչով կվերջանար յուր արբանյակների լարված դրությունը, որ նրան խիստ տարօրինակ էր թվում: Պարոնի անակնկալ այցելությունը նրան ավելի շփոթեցրեց: Նա չէր ցանկանա, որ այս գիշեր նա հանդիսատես լիներ Էլիասի և Ալպինիայի մեջ տեղի ունեցած կռիվներին, որ թեև դադարած էին, բայց ամեն րոպե կարող էին նորից բորբոքվել:

— Այս ի՞նչ է,— խոսքը փոխեց պարոնը,— կարծես, սուգի տուն լինի: Գոնե մի բան տվեք խմելու, ես ծարավ եմ, սաստիկ ծարավ եմ:

Ելենան վեր կացավ ըմպելիք և ճաշելիք պատրաստելու:

Պարոնը կրկին դիմեց Ալպինիային, հարցնելով.

— Էլիասը բարկացած է երևում, բայց այդ ինձ չի զարմացնում. գազանները միշտ բարկացկոտ են լինում: Իսկ դո՛ւ, իմ ուրախ թռչնի՛կ, և՛ բարկացած ես, և՛ տխուր ես. այդ ինձ շատ է զարմացնում: Ասա՛, ի՞նչն է քեզ այդպես վրդովեցրել, անմե՛ղ հրեշտակ:

— Ես էլ չեմ իմանում,— պատասխանեց նա, առանց գլուխը բարձրացնելու:

Խե՛ղճ կին, ի՞նչն էր ձգել նրան այդ կասկածավոր հասարակության մեջ, ի՞նչն էր կապել նրան մի կատաղի տղամարդի հետ, նա այդ չգիտեր և ինքն իրան հաշիվ տալ

չէր կարող: Նա զգում էր մի բան միայն, որ ինքը դժբախտ է և որ այդ դժբախտությունից ազատվելու ամենևին հնար չունի... Քանի՜-քանի՜ անգամ փորձել էր նա հեռանալ այդ գազանից. քանի՜-քանի՜ անգամ. վերջին հուսահատության մեջ, վճռել էր անձնասպանությամբ վերջ տալ յուր տառապանքներին, բայց միշտ մի մթին, անբացատրելի զգացմունք զսպել էր դժբախտին: Նա մնում էր սիրելու, և սիրելով տանջվելու համար:— Սիրելու այն տղամարդին, որից սարսափում էր, սիրելու յուր դահճին, որ ամեն րոպե պատրաստ էր նրան մորթելու...

Ելենան սեղանի վրա դրեց երեք շիշ գինի և զանազան ճաշելիքներ:

Ալպինիան չմոտեցավ սեղանին, գրկեց երկու մանուկներին և լուռ դիմեց դեպի ներքնատան նկուղը:

Էլիասը տեսնելով նրա գնալը, մոտեցավ սեղանին և ոտքի վրա մի քանի բաժակներ միմյանց հետևից խմելով, ինքը ևս հետևեց կնոջը:

Սենյակում մնացին Ելենան և պարոնը: Վերջինն արդեն նստած էր սեղանի մոտ, իսկ Ելենան շվարված կերպով մնացել էր ոտքի վրա, չգիտեր նստել, թե գնալ նրանց հետևից: Պարոնի վրա ևս խիստ ծանր տպավորություն գործեց երկու ամուսինների հեռանալը:

— Այդ ի՞նչ է պատահել,— հարցրեց Ելենայից:

— Հետո կպատմեմ,— պատասխանեց նա, և իսկույն դուրս գնաց, յուր մտքումն ասելով. «Հիմա խեղճ կնոջ գլխին մի փորձանք կբերե...»:

Ը

Մինչ Ելենայի տան մեջ հանդիսանում էին նախընթաց տեսարանները, կառքը հանդարտ կերպով շարժվում էր դեպի ծովեզրը: Զահրան ընկողմանած էր մի անկյունում, ամենևին չէր խոսում: Չէր խոսում և բեյը: Երկուսի մեջ ևս տիրում էր այն ծանր լռությունը, որ տեղի է ունենում հոգեկան խորին վրդովմունքներից հետո:

Զահրան վերադառնում էր յուր հոր տունը, որտեղից արդեն երկու ամիս բացակա էր: Նա բացակա էր այնտեղից յուր նախատինքը ծածկելու համար: Եվ այդ նախատինքի մեջ էին թաքնված նրա անցյալ հիշողությունների ամենաքաղցր զգացմունքները: Առանց ամուսին լինելու, նա այժմ մայր էր: Առանց պսակված լինելու, գտնվում էր յուր ամուսնու կողքին:

Անցյալը նրա մտքում մռայլ գույներով էր ներկայանում: Ներկան անորոշ էր: Գոնե ապագան մի որևէ հույս խոստանա՜ր...

Նրա և յուր սիրած էակի մեջ մի խորին վիհ կար: Այդ անդունդը, որ ոչինչով չէր կարելի լցնել, լցրել էր սերը: Բայց նրա վրայից թռիչք գործել և մյուս կողմն անցնել, չէր համարձակվում ոչ Զահրան և ոչ բեյը:

Այդ կրոնի բացած անդունդն էր, որ բաժանում էր երկուսին: Զահրան մահմեդական էր, իսկ բեյը քրիստոնյա: Երկուսի ամուսնությունը, մի մահմեդական երկրում, հնարավոր կարող էր լինել այն ժամանակ միայն, երբ քրիստոնյան և՛ յուր կրոնը, և՛ յուր ազգությունը կզիջաներ մահմեդականին: Բեյը մի այդպիսի զոհ չէր կարող բերել: Նրա մեջ ամուր էին թե՛ կրոնի և թե ազգության զգացմունքները:

Մի այդպիսի զոհ, որքան ևս ցանկանար, չէր կարող բերել և Զահրան: Կրոնը կքարկոծեր նրան: Հոր դիրքը, տոհմային հպարտությունն ավելի սանձահարում էին նրան: Մի ելք միայն կարող էր նրան դուրս բերել այդ ամենադժվարին դրությունից, այն է, յուր սիրած տղամարդի հետ գնալ, հեռանալ մի ավելի ազատ երկիր: Բայց յուր փախուստով չէր ցանկանում նա մուր քսել յուր տոհմի պատվի վրա, թեև մյուս կողմից յուր սիրո մեջ այնքան հեռու էր գնացել նա, որ ետ դառնալը՝ արդեն անկարելի էր դարձել նրա համար:

Զահրան դեռ օրիորդ էր, մի նշանավոր փաշայի աղջիկ: Նրա հայրը, մի տարի կլիներ, որ տերության պաշտոնով գնացել էր Եգիպտոս: Մայրը վաղուց վախճանված էր: Հոր բացակայությունն ավելի ազատություն տվեց նրա կրքերին: Իսկ մայր չունենալը ավելի ընդարձակեց այդ ազատությունը: Նրա հոր մյուս կանայքը, որոնց թիվը փոքր չէր, թշնամաբար էին վարվում նրա հետ, որպես սովորաբար վարվում են խորթ մայրերը: Նրանց վարմունքը նպաստեց օրիորդին մի կողմից, որքան կարելի է, յուր հարաբերությունները խզել նրանց հետ, մյուս կողմից, յուր համար առանձին, անջատված կացություն ստեղծել հոր տան մեջ: Բարեսիրտ հայրը չզրկեց յուր դստերը այդ բավականությունից, և Զահրան ժառանգեց մոր բնակարանը, որովհետև նրա միակ զավակն էր:

Մահմեդական բարձր շրջանների ընտանիքներում յուրաքանչյուր կին յուր առանձին բնակարանն ունի, յուր աղախիններով, սպասավորներով և որոշյալ հասույթներով: Զահրայի մորն էր պատկանում փաշայի ծովեզրյա ապարանքը, որ յուր կացության համար ստացավ Զահրան, և հատկացրած էր նրան, իբրև օժիտ:

Ամառային ամիսներում, երբ Զահրայի մայրը տակավին կենդանի էր, փաշան բնակվում էր հիշյալ ապարանքում: Զահրայի մոր մոտ, որ յուր բոլոր կանանցից ավելի սիրելի էր նրան: Այդ ժամանակ բեյը պաշտոնով գտնվում էր նրա հոր մոտ ծառայության մեջ: Նրա հարաբերությունները յուր մեծավորի հետ ավելի բարեկամական էին, քան թե պաշտոնական, և այդ էր պատճառը, որ երիտասարդ բեյը սովորություն ուներ խիստ հաճախ այցելել այդ ապարանքը, որի արևելյան շքեղ կացության մեջ մեծ բավականություն էր գտնում: Ծերունի փաշան սիրում էր խոսել Եվրոպայի վրա, քաղաքականության վրա, Տաճկաստանի վերանորոգության վրա, իսկ այդ տեսակ խոսակցությունների համար երիտասարդը մեծ պաշար ուներ: Այստեղ նա ծանոթացավ Զահրայի հետ: Բայց ծանոթացավ այն աստիճան, որքան կարելի է ծանոթանալ մահմեդական կանանոցում փակված մի օրիորդի հետ: Երբեմն անցնելու միջոցին լուսամուտի հետևից տեսնում էր նրա գլուխը, երբեմն տեսնում էր նրա երեսը, մի քանի անգամ ևս լսեց թեթև զարկ ապակու վրա, այդքանը միայն: Բայց այդ ևս բավական էր, երբ հաճախ էր կրկնվում, և մանավանդ որ բեյը դուրս գնալու ժամանակ միշտ նկատում էր միևնույն գլուխը, միևնույն ապակիների հետևում:

Բեյը թողեց յուր ծառայությունը, որ կատարում էր հիշյալ փաշայի մոտ, և թողեց գլխավորապես այն պատճառով, որ ապակիների հետևում հայտնվող գեղեցիկ գլուխը նրան փորձանքի մեջ չձգեր: Իսկ նա թեև անձամբ հեռացավ յուր մեծավորի ապարանքից, բայց սիրտը մնաց այնտեղ...

Այնուհետև մտավ նա ծովային ծառայության մեջ օսմանյան նավատորմիղում, որի համար մասնագիտաբար պատրաստված էր:

Ծովը մի լայնածավալ մուտք է ծովեզրյա տների համար: Լուսնկա գիշերների խաղաղ լռության ժամանակ ոչ սակավ անգամ բեյի մակույկն անցնում էր այն ապարանքի մոտով, որտեղ բնակվում էր նրա սիրելին: Այժմ կանանոցի փակված ապակիների հետևից նայող գլուխը՝ յուր ամբողջությամբ հայտնվում էր պատշգամբի վրա, որ նայում էր դեպի ծովը և բոլորովին կախված էր նրա վրա: Բեյի մակույկը

մոտենում էր այդ պատշգամբին, կանգնում էր նրա ներքև: Վերևից դեպի ցած, ցածից դեպի վեր, լինում էին խոսքերի փոխաբերություններ: Երբեմն պատշգամբից քարշ էր ընկնում մի բարակ թել և յուր ծայրին տանում էր մի ծրար,— սիրաբորբոք զգացմունքների ծրարը: Երբեմն քարշ էր ընկնում մի պարանավոր սանդուղք և նրա հետ, մամուկի արագությամբ, ցած էր իջնում նավակի մեջ պատշգամբի գեղեցկուհին...

Զահրայի մոր մահը, հոր պաշտոնով Եգիպտոս գնալը ավելի դյուրություն տվին այդ գիշերային տեսակցություններին ծովի վրա:

Մահմեդական կանանոցը, յուր բոլոր խստություններով հանդերձ, շատ դյուրություններ ունի յուր դատապարտյալների ցանկություններին բավականություն տալու: Շատ անգամ նույն ներքինիները, որ կարգված են այնտեղ որպես արթուն պահապաններ, շատ անգամ հենց նրանք են լինում առաջնորդները՝ դրսից մարդիկ ներս թողնելու կամ ներսից կանայք դուրս թողնելու: Այդ դեպքում խիստ հաջող գործ է կատարում ոսկին: Իսկ բեյը ոսկիներ շատ ուներ:

Կառքը հասավ Բոսփորի ափին: Բեյը գրկեց Զահրային, ցած բերեց, հետո կառապանին արձակեց:

Հենված սիրած տղամարդի թևքի վրա, նրանք անցան բավական տարածություն: Ամայի եզերքը լուսավորված էին լուսնի գունաթափ լուսով, որ խիստ թախծալի տպավորություն էր գործում: Մեղմ ալիքների դանդաղ ընդհարումներն աղմկում էին գիշերային տիրող լռությունը: Չհեռանալով ափերից, նրանք հասան մի տեղ, ուր ցցից կապած էր մի մակույկ: Մի մարդ պառկած էր ավազների վրա, ցցի մոտ: Բեյը մոտեցավ, զարթեցրեց նրան:

— Պատրա՞ստ է մակույկը,— հարցրեց նրանից:

— Պատրաստ է, էֆենդի,— պատասխանեց դեռ ոչ բոլորովին արթնացած նավաստին:

Բեյը մոտեցավ Զահրային, որ կանգնած էր փոքր-ինչ հեռու: Նա ավելի ցած քաշեց երեսի թանձր քողը: Հետո գրկեց նրան, տարավ ափի մոտ կազմված տախտակամածի վրա, և այնտեղից զգուշությամբ դրեց մակույկի մեջ, ինքն ևս ցատկեց նրա մոտ:

— Բա՛ց արա,— հրամայեց նա:

Նավաստին բաց արավ ցցից կապած պարանը, հարցնելով.

— Իսկ ե՞ս...

— Դու կմնաս այդտեղ և առավոտյան լուսաբացին կստանաս քո մակույկը:

Երևում էր, որ նավաստիի համար այդ առաջին անգամը չէր, որ յուր գեղեցիկ մակույկը հանձնում էր բեյի կամքին: Բոսֆորի վրա՝ գիշերային զբոսանքներ կատարելու համար նա շատ անգամ վարձել էր այդ մակույկը, որ հատկապես զբոսանքների համարը էր շինված: Փափուկ օթոցների վրա տարածված էր մի նախշուն գորգ, այս կողմ և այն կողմ դրած էին սիրուն բարձեր, պատած կարմիր թավիշով: Զահրան տեղավորվեցավ գորգի վրա և թիկն տվեց բարձերին:

Մակույկը հեռացավ ափից, սկսեց լողալ դեպի առաջ: Այդ միջոցին Զահրան ետ քաշեց երեսի քողը:

Գիշերային լուսնյակի ներքո Բոսֆորի խաղաղ մակերևույթը ներկայացնում էր որպես մթին հայելի, որի մեջ ցոլանալով երկնքի թագուհին, տալիս էր նրան մի խորհրդավոր, կախարդական փայլ: Բեյը հմուտ ձեռքով երբեմն շարժում էր թիակները և թեթև մակույկը լողում էր, հազիվհազ օրորվելով: Զահրան սեղմված էր յուր սիրելիի կողքին, գեղեցիկ գլուխը դրած ուներ նրա գրկում: Նա լուռ էր, միայն արտասուքով լցված աչքերը հառած էին դեպի պարզ երկինքը և մտքով հափշտակված էր դեպի անցյալը, դեպի մոտավոր անցյալը: Լինում էին գիշերներ, դարձյալ այդ մակույկի մեջ, գլուխը յուր սիրելիի կրծքին սեղմած, խոսում էր նա, խոսում էր, և խոսելուց չէր հագենում: Սիրած տղամարդի քնքուշ փայփայանքները լինում էին նրա ջերմ խոսքերի պատասխանը: Ցանկանում էին, որ այդ բախտավոր գիշերներն անվերջ լինեին, հավիտենականության չափ անվերջ լինեին, որ իրանք լիամասն կերպով վայելեին սիրո անվախճան բերկրանքը: Արշալույսի վարդագույն շառավիղները, որ բոլոր արարածներին այնքան ուրախություն են պատճառում, ընդհակառակն, նրանց տխրեցնում էին, որովհետև լույսը կծագեր, խավարի վարագույրը կբարձրացներ, և գիշերվա ուրախությունը կխլեր իրանցից: Իսկ այդ գիշեր լուռ էր Զահրան, լո՛ւռ, որպես ծածկամիտ Բոսֆորը: Ապագան ներկայանում էր նրան որպես մի առեղծվածային անհայտություն, նույնքան մթին, նույնքան խորին, որպես անհատակ Բոսֆորը...

Լուռ էր և բեյը: Զահրայի այժմյան տրտմությունն ավելի տանջում էր նրան: Նա մտաբերում էր այն թանկագին ժամերը, երբ այդ ջրերի վրա, այդ մակույկի մեջ, զվարճանում էր Զահրան: Այն ժամանակ օրիորդ էր Զահրան մի զվարթ, անհոգ, սիրաբորբոք օրիորդ: Իսկ այժմ — մի տառապյալ մայր...

Բեյի սիրտն ավելի խոցվեցավ, երբ Զահրան ընդհատելով տիրող լռությունը, ասաց նրան.

— Դա՛ռն եղավ մեր սիրո պտուղը.. շա՛տ դառն...

Բեյը, փայփայելով նրա սիրուն գլուխը պատասխանեց.

— Սերը զոհեր է պահանջում, Զահրա, և դրա մեջն է նրա անսահման քաղցրությունը:

— Ես շատ զոհեցի,— ասաց նա վշտալի ձայնով,— զոհեցի այնքան, որքան կարող էր զոհ բերել մի օրիորդ սիրած տղամարդին... Բայց վե՛րջը... ի՞նչ կլինի մեր վերջը...

Վերջին խոսքերը, որ արտասանեց նա այնքան սրտագին զգացմունքներով, բեյի համար շատ նշանավոր էին: Նա մի քանի վայրկյան լուռ մնաց և ապա պատասխանեց.

— Իրավ է, սիրելի Զահրա, դու շատ զոհեցիր: Իսկ ես այդ զոհը կփոխարինեմ ամեն բանով՝ ինչ որ ունեմ և ինչ որ կարող եմ ունենալ: Իմ կյանքը, իմ սիրտը, իմ բոլոր էությունը քեզ է նվիրված և քեզանով միայն գոյություն պիտի ունենա: Դու հարցնում ես, թե ի՞նչ կլինի մեր վերջը: Դա մեր սիրո ամենածանր հարցն է, որ որքան վաղ վճռվի մեր մեջ, այնքան ավելի երջանիկ կլինենք մենք: Լսի՛ր, ինչ որ կարողացել եմ մտածել ես: Ես արդեն որոշել եմ թողնել ծառայությունս, թողնել և Պոլիսը: Դու իհարկե չես մոռացել քո խոստմունքը, թե ուր որ գնալու լինեմ ես, դու կհետևես ինձ: Այդ՝ թեև կլինի քեզ համար վերջին և ամենածանր զոհաբերությունը. բայց եթե մի այլ հնար լիներ, ես երբեք չէի ցանկանա խլել քեզ քո ընտանիքի և քո հայրենիքի գրկից: Առանց դրան բախտավոր լինել մենք չենք կարող: Կգնանք միասին Եվրոպա, կընտրենք մի քաղաք մեր բնակության համար, իսկ ապրելու համար, և լա՛վ ապրելու համար, ես բավական միջոցներ ունեմ: Այնտեղ մահմեդական կրոնը մեզ չի հալածի, դու կարող կլինես

ազատ կերպով պսակվել ինձ հետ: Այնտեղ դու ազատ կլինես և ծնողների հալածանքներից և հասարակության դատապարտությունից:— Ասա՛, համաձա՞յն ես:

— Բայց երեխա՞ս... ի՞նչպես թողնեմ երեխաս...

— Կտանենք մեզ հետ:

— Նա դեռ այնքան փո՛քր է... նա դեռ այնքան անզոր է...

— Կսպասենք, մինչև փոքր-ինչ զորանա:

Զահրան դարձյալ լռեց: Բացի յուր զավակից, որ հափշտակել էր նրա մայրական բոլոր զգացմունքները, նրա մեջ վառ էր և յուր կրոնի զգացմունքները: Այդ էր պատճառը, որ նա հարցրեց.

— Ես այնտեղ պետք է քրիստոնյա՞ դառնամ:

— Ոչ, սիրելի Զահրա, դու քրիստոնյա չես դառնա, դու կմնաս բոլորովին ազատ քո կրոնական հավատալիքների մեջ,— պատասխանեց բեյը, հանգստացնելով նրան:— Բայց այնտեղ դու նոր կմտնես կյանքի մեջ: Այստեղ կանանոցի չորս պատերն են եղել քո աշխարհը, դու խիստ սակավ բան ես տեսել և շատ փոքր բան ես սովորել: Իսկ այնտեղ կյանքն ընդարձակ է և կինն ազատ: Ամեն մի առարկա քեզ մի նոր բան կսովորեցնե և ամեն մի օր քեզ մի նոր միտք կտա: Դու կկարդաս, կզարգանաս, և այն ժամանակ կրոնը, սիրելի Զահրա, կմնա քեզ համար որպես խաղաղացած, հանգստացած խղճի քաղցր հիշողություն...

Զահրան ոչինչ չպատասխանեց: Վերջին խոսքերը նրան այնքան հասկանալի չէին: Նա հասկանում էր մի բան միայն, որ, ո՛ր աշխարհում ևս լինի, ո՛ր երկիր ևս գնալու լինի, սիրած տղամարդի հետ նրա սիրտն ուրախ կլինի և օրերը լավ կանցնեն:

Լուսինը վաղուց արդեն մայր էր մտել և նրա թողած մթությունը հետզհետե պարզվում էր ծագող լույսի կապտագույն շառավիղներով: Առավոտյան աստղը յուր բոլոր պայծառությամբ դեռ շողշողում էր հորիզոնի վրա: Արշալույսը, մի ամոթխած կույսի թշերի նման, սկսել էր շառագունիլ: Ծովային թռչունները սրաձայն աղմուկով ողջունում էին Բոսֆորի սքանչելի առավոտը: Մակույկը հանդարտ կերպով լողում էր դեպի ափը, որի ժայռոտ ամրության վրա կանգնած էր փառավոր ապարանքը: Բարձր սյունազարդ «քյոշք»-երը, որ մրցում էին ամպերի հետ, կամարակապ պատշգամբները, հյուսված կենդանի պատատուկներով, ասիական քառանկյունի լուսամուտները գույնզգույն ապակիներով, տալիս էին նրան մի դյութական արտահայտություն, որ շնչում էր և՛ զեղխության, և՛ փափկության, և՛ խորին իշխանական փառասիրության ոգով, որ ամեն ինչ կլանում է, սպառում է, միայն ինքն ապրելու, և շքեղ ապրելու համար...

Մակույկը մոտեցավ ապառաժներին, որոնց վրա կանգնած էր ապարանքը: Զահրայի աչքերը լցված էին արտասուքով: Նա կրկին ցած քաշեց երեսի քողը և ծածկեց արտասուքը: Նախքան հայրենական տան շեմքի վրա ոտք դնելը, մի անբացատրելի, անորոշ զգացմունք կրակի նման այրում էր նրա սիրտը: Գտնվելով յուր սիրելիի ներշնչած քաղցր արբեցության մեջ, նա դեռ չէր հասկանում, թե ինչ է, որ այնպես սաստիկ տանջում է իրան:— Այդ զարթած ամոթի զգալի խայթն է...

Մակույկի մոտենալը նկատելով, ափի վրա, մռայլի միջից հայտնվեցավ մի մռայլ կերպարանք: Նրա դեմքի սև մակերևույթի վրա փայլում էին երկու խոշոր սպիտակ կետեր: Դրանք նրա երկու աչքերն էին: Իսկ նրանց ներքև՝ երբեմն փայլում էին երկու

շարք սպիտակ ատամներ, որ ծիծաղ և ուրախություն էին արտահայտում: Ուրիշ ոչինչ չէր երևում:

Ապարանքն ուներ յուր փոքրիկ նավամատույցը, որ շինված էր իշխանական նավակների կացության համար: Երբ մակույկը բոլորովին մոտեցավ տախտակամածին, բեյը բռնեց Զահրայի ձեռքից, կանգնեցրեց նրան, հետո գրկելով դրեց տախտակամածի վրա: Այդ միջոցին մռայլ կերպարանքը մոտեցավ:

— Դու այստե՞ղ ես, Ֆե՛յրուզ,— հարցրեց բեյը:

— Այո, տեր իմ,— պատասխանեց սևամորթ աֆրիկացին, սպիտակ ատամները կրկին ցույց տալով:

— Ահա՛ քո տիրուհին, դարձյալ ողջ և առողջ քեզ եմ հանձնում,— ասաց բեյը ժպտալով:

Ֆեյրուզը Զահրայի արծաթագին ստրուկն էր և նրա ամենահավատարիմ սպասավորներից մեկը:

— Թո՛ղ իմ հոգին իմ տիրուհու ոտքի հողերին մատաղ լինի,— պատասխանեց պարզամիտ աֆրիկացին:

— Ի՞նչպես պետք է տանես...

— Երևի դռների բանալիները ինձ մոտ են. այնպես կտանեմ, որ սատանան էլ յուր քառասուն և մեկ աչքերով չի կարող տեսնել...

— Դու ուշանում ես,— ձայն տվեց Զահրան, և նրա ձայնը խեղդվեցավ սրտի սաստիկ խռովության մեջ:

Բայց սեղմեց յուր շրթունքներին նրա երկու ձեռքերը և բաժանվեցավ: Ցատկելով մակույկի մեջ, խորին տխրությամբ սկսեց հեռանալ այն ապարանքից, որի հետ կապված էին նրա հոգու ամենաքաղցր հիշողությունները...

Թ

Կրկին դառնանք դեպի ընդհատված պատմությունը:

Օհանը յուր ազատած մանուկը պառավ «մարեին» պահ տալուց հետո, այդ հոգսից իրան բավական ազատ էր համարում: Նրան մնում էր՝ յուր հաշիվները վերջացնել սև խաչը կրող տիկնոջ հետ: Այդ էր պատճառը, որ պառավի խրճիթից դուրս գալուց հետո, նա կրկին եկավ նույն բնակարանը, որտեղ սև-խաչակիրն այնպիսի ճարպիկ խաբեությամբ նրան մոլորության մեջ ձգեց: Բայց նա ավելի տեղեկություններ չկարողացավ ստանալ, որքան գիշերը հայտնեց նրան վերնահարկի լուսամուտից խոսող կինը:

Չգիտեր ի՞նչ աներ: Մտածեց գտնել յուր բարեկամ Ոսկանին, բոլոր անցքը պատմել նրան և լսել ծերունի համալի խորհուրդները: Նա շտապով գնում էր, երբ մտաբերեց, որ ամենևին փող չունի: Գոնե կամուրջն անցնելու համար պետք էր մի քանի փարա ունենալ: Յուր վաստակած արծաթը ծովեզրում քնած ժամանակ գողացան: Սև-խաչակրից ստացած ղուռուշներն ինքը ծովը նետեց: Այժմ փող չուներ: Նա չուներ և մի այնպիսի բան, որ կարելի լիներ վաճառել: Նայեց յուր վրա: Բոլոր հագուստները

մաշված էին: Բայց նա մոռացել էր յուր գլուխը: Այնտեղ վառվում էր գեղեցիկ արախչինը: Այդ նրա քրոջ ձեռքերի ճարտար գործն էր: Երբ Օհանը պատրաստվում էր թողնել հայրենիքը, քույրը գույնզգույն թելերով նախշեց այդ արախչինը և դրեց եղբոր գլխին, իբրև հիշատակ յուր ջերմ սիրո: Օհանը մտաբերեց քրոջ արտասուքը, մտաբերեց և նրա խոսքերը: Բայց որքան էլ թանկագին լիներ այդ հիշատակը, այնուամենայնիվ, նա այնպիսի նեղ դրության մեջ էր, որ ստիպվեցավ խեղդել յուր զգացմունքները: Վեր առավ արախչինը և արտասուքն աչքերում մոտեցավ մի փոքրիկ խանութի:

— Ա՛ռ այս, պարոն, և ինձ մի քանի փարա տուր,— ասաց նա հազիվ լսելի ձայնով:

Խանութպանը հայ էր և ծխախոտ վաճառող: Նա աչքի տակից նայեց Օհանի երեսին և լրբությամբ հարցրեց.

— Ուղիղն ասա՛, մշեցի, գողացե՞լ ես, թե գտե՞լ ես:

Փոքր էր մնում, որ Օհանը յուր երկաթյա բռունցքներով պոլսեցու փափուկ կողքերը մի լավ շոշափեր, բայց կարիքը զսպեց նրա բարկությունը:

— Դու տեսնում ես, որ գլուխս բաց է,— ասաց նրան դողդոջուն ձայնով:

— Այդ ոչինչ չէ ապացուցանում,— պատասխանեց պոլսեցին ավելի լրբարար,— քո մարմնի շատ տեղերը բաց են...

Օհանը թքեց և հեռացավ: Պոլսեցին սառնասրտությամբ սրբեց երեսի թուքը և սկսեց զարմացած կերպով նայել նրա հետևից:

Օհանը մի քանի քայլ հեռանալուց հետո կանգ առեց և սկսեց ուշադրությամբ աչք ածել յուր շուրջը: Հրեա հնավաճառները, որ օրվա այդ ժամին վխտում էին փողոցներում, դժբախտաբար նրանք ևս չէին երևում: Փողոցների դատարկությունը, խանութներից շատերի փակված լինելը, հիշեցրին Օհանին, որ օրը կիրակի էր: Այդ ուրախացրեց նրան,— ուրախացրեց այն պատճառով, որ Ոսկանին գտնելու համար ոչ մաքսատուն և ոչ մի այլ հեռու տեղ գնալու պետք չուներ: Նրան կարող էր գտնել հենց յուր եղած թաղում, ուր սովորաբար գալիս էր նա կիրակի օրերը: Ուրեմն, ծախքերի հոգսից ազատվեցավ նա: Արախչինը դրեց գլխին:

Սկսեց դիմել դեպի եկեղեցի:

Կիրակի օրերում մշեցի համալները լցնում էին այն եկեղեցիները, որտեղ գիտեին թե լավ քարոզ են տալիս: Ղալաթիայում այդ ժամանակ հոլակ էր ստացել մի ճարտար քարոզիչ: Աստուծո խոսքը քաղաքի ամեն ծայրերից ժամասեր մշեցիներին քաշում էր այնտեղ:

Եկեղեցու դռները փակ էին. պատարագն ավարտվել էր, իսկ այնօր քարոզ չէր եղել: Գավթում ոչ ոք չէր երևում: Մնացել էին մի քանի կույր և կաղ մուրացկաններ, որոնք նույնպես պատրաստվում էին հեռանալ:

Օհանը մոտեցավ ժամատան փակ դռներին, համբուրեց, երեսը խաչակնքեց և ինչ-որ շշնջաց շրթունքների միջից: Հետո դիմեց դեպի մի սենյակ: Նախքան մտնելը, անցավ պատշգամբի վրա, լուսամուտից ներս նայեց: Մի նիհար, բարձրահասակ երիտասարդ, գունաթափ դեմքով, կանգնած էր գրասեղանի հետևում, ինչ-որ կարդում էր: Չորս, թե հինգ մշակներ նստարանների վրա լսում էին: Օհանը զարմացավ: Նրան զարմացրեց երկու բան. նախ ուրիշ կիրակի օրերում այդ բոլոր նստարանները բռնված էին լինում մշակներով, իսկ այսօր համարյա դատարկ էին.

երկրորդ՝ ինչպե՞ս էր պատահել, որ յուր բարեկամ Ոսկանն այնտեղ չէր, որ այդ սենյակի եռանդոտ այցելուներից մեկն էր:

Այդ սենյակը հասարակ օրերում ծառայում էր իբրև դպրոց փոքրիկ մանուկների համար, իսկ կիրակի օրերում նիհար երիտասարդը հավաքում էր այնտեղ մշեցի համալներին կամ Հայաստանի այլ կողմերից եկած մշակներին, և նրանց գրել-կարդալ էր սովորացնում: Երբեմն դասախոսություններ էր անում Հայոց երկրի այս և այն տնտեսական խնդիրների վրա: Այսօր կարդում էր Տարոնի—մշեցոց հայրենիքի—պատմական նշանակության մասին:

Օհանը ներս չմտավ, թեև ամբողջ քաղաքում չկար նրա համար մի այնքան սիրելի տեղ, որպես այդ սենյակը: Նա դարձյալ ընկավ նախկին հոգսերի մեջ: Այստեղ հույս ուներ գտնել Ոսկանին, այդ հույսից ևս զրկվեցավ:

Նա տեսավ, որ մի այլ մշակ շտապով, շնչասպառ, վազում էր դեպի նույն սենյակը:

— Ոսկանին չե՞ս տեսել,— հարցրեց նրանից:

— Նա գնաց Կում-Կափու,— ասաց մշակը և անցավ:

Յուր հայրենակցի շտապողությունն Օհանը բացատրեց նրանով, որ նա ուշացել էր և այժմ աճապարում էր նիհար երիտասարդի դասախոսությունից զուրկ չմնալ:

Եկեղեցու գավթից կրկին դուրս եկավ փողոց, սկսեց փութալ դեպի Կում-Կափու, առանց մտածելու, թե Պոլսի այդ մեծ թաղի որ տեղում, որ կողմում կարող էր գտնել Ոսկանին: Այդ մասին յուր հայրենակցից ոչինչ չհարցրեց:

Ճաշից հետո գտնվում էր նա Կում-Կափուի փողոցներից մեկում, որ տանում էր դեպի Մայր եկեղեցին և դեպի հայոց պատրիարքարանը: Հեռվից տեսավ, որ մի խումբ մշեցի համալներ փողոցի երկարությամբ վազ էին տալիս: Մտածեց, անպատճառ մի տեղ հրդեհ պատահած պետք է լիներ, մանավանդ որ համալների թվում կային մի քանի մշեցի թուլումբաջիներ (հրդեհաշեջներ): Ինքն էլ հրապուրվելով, սկսեց վազել նրանց հետևից, բոլորովին մոռանալով թե Ոսկանին և թե այն նպատակը, որի համար որոնում էր նրան:

Մշեցիների խումբը հետզհետե ստվարանում էր: Թաղի համալները, որոնք կիրակիի պատճառով անգործ պառկած էին պատերի տակին, լսելով նրանց աղաղակը, դուրս էին պրծնում իրանց հանգստի տեղերից և անգիտակցաբար խառնվում էին առաջինների հետ:

«Չե՜նք ուզեր» գոռում էր խռովված բազմությունը և առաջ էր վազում:

Դրանց գոռում-գոչումներն այն աստիճան ոգևորեցին Օհանին, որ առանց հասկանալու, թե բանը ինչումն է, նա ևս աղաղակեց.

«Չե՜նք ուզեր...»:

Կում-Կափուի պճնված, զարդարված օրիորդները, տիկինները և բարեշուք էֆենդիները, հետ կեսավուր համադամ ճաշից լի փորով և լի բավականությամբ, նստած էին լուսամուտների մոտ, և ծիծաղելով միմյանցից հարցնում էին.

«Ի՞նչ կա... ի՞նչ է պատահել... մշեցիները դարձյալ խենթացել են...»:

Խումբն անցնում էր այնքան սրարշավ կերպով, որ Օհանը յուր ոտների բոլոր արագությամբ նրանց հասնել չէր կարողանում, թեև նրա ոտները այսօր իրանց սովորական արագությունը չունեին: Նա հոգնած էր, ամբողջ գիշերը չէր քնել, և յուր ազատած մանուկի պատճառով անդադար վազվզել էր այս և այն կողմ:

Հեռվից նկատեց նա, որ համալները ցած գլորեցին մի ոտքից գլուխ սև հագնված, ակնոցավոր պարոնի, որ անցնում էր փողոցով, և սկսեցին ոտքով ու ձեռքերով ջարդել: Երբ բոլորովին հագեցան, շնչասպառ պարոնին թողեցին փոշիների մեջ և անցան, անիծելով.

«Դավաճա՛ն...»:

Երբ Օհանը հասավ այնտեղ, պարոնը տակավին թավալվում էր փողոցի փոշիների մեջ և ամենևին ուժ չուներ կանգնելու: Ջարդվածին կրկին ջարդելը տմարդություն համարելով, Օհանը նկատեց նրա եվրոպական գլխարկը, որ ընկած էր մի կողմում: Կոխ տվեց գլխարկը և անցավ, ինքը ևս կրկնելով.

«Դավաճա՛ն...»:

Այդ պարոնը «Ղալաթիո օջախ» կոչված մթին խմբակի անդամներից մեկն էր:

Նրա ծեծվիլը բավական ժամանակ խլեց համալներից, Օհանը միջոց գտավ հասնելու նրանց:

Նրանք այն աստիճան շտապում էին, որ Օհանին անկարելի եղավ մեկի հետ խոսել կամ մեկից հարցնել, թե ո՛ւր են գնում, կամ ինչո՛ւ են այդպես զայրացած: Ինքն ևս տարվեցավ զայրացած հոսանքի հետ:

Խումբն արդեն գտնվում էր հայոց պատրիարքարանի լուսամուտների ներքև:

Նա մի աղմկալի շրջան գործեց փակված պատրիարքարանի չորեք կողմը և ապա փոթորկի նման մտավ Մայր եկեղեցու բակը: Այստեղ լցված էր մի խառնիխուռն բազմություն, որի մեծ մասը հայաստանցի մշակներ էին:

«Չե՛նք ուզեր...» գոռում էր բազմությունը և այդ աղաղակը խլացնում էր ամեն ձայն:

«Կուզե՛նք...»:

Լսելի եղավ մի նվաղած ձայն, որ ավելի կատվի մլավյունի նմանություն ուներ: Ձայնն իսկույն խեղդվեցավ ընդհանուր աղաղակների մեջ: Մի ծանր ապտակ լռեցրեց կոչողին: Նա դողդողաց և գլորվեցավ ցած: Մշակները դուրս տարան ուշաթափ երիտասարդին:

Դա մի նրբակազմ պոլսեցի էր, որ գուցե սանրվելու, օծվելու և պատշաճավոր կերպով հագնելու պատճառով ուշացել էր և չէր կարողացել յուր համար մի հարմար տեղ բռնել, մնացել էր կեղտոտ մշակների մեջ: Նրանց կոպիտ շփումներն ամեն անգամ սարսափելի ապականություն էին գործում երիտասարդի վայելուչ զգեստի վրա, ուր հմուտ դերձակը գործ էր դրել յուր բոլոր ճարտարությունը: Իսկ ապտակը լրացրեց պակասը:

Ապտակը Օհանի զորեղ բազկի գործն էր:

Օհանը դեռ չգիտեր, թե ի՞նչումն է բանը, բայց զգում էր, որ խնդիրը շատ ծանր պետք է լիներ, որ յուր հայրենակիցներն այն աստիճան գրգռված էին:

Մի անգամ միայն նրա աչքին հեռվից երևաց Ոսկանը, բայց բազմության մեջ դարձյալ կորցրեց նրան:

Դրսում, եկեղեցու շուրջը, բորբոքվում էր խռովյալ բազմությունը: Ներսում, եկեղեցու մեջ, բորբոքված էր Ազգային երեսփոխանական ժողովը: Նիստը դռնփակ էր: Հարցը քննվում էր մի քանի ժողովներում, այսօր պետք է վերջնական վճիռ ստանար: Ատենապետի բոլոր ճիգն անզոր էր մնում կարգ պահպանել տաքացած երեսփոխանների մեջ: Ճառախոսների դառն լուտանքը, կծու պարսավը, ինչպես մի զայրացած վտակ, հեղվում էր գեղեցիկ պերճախոսության հետ: Ջերմ հարցապնդումները երբեմն ավելի զորություն էին ստանում աթոռների սպառնալիքներով: Որպեսզի թոռներն ավելի չարություն չգործեին, ատենապետ Էֆենդին մի քանի անգամ ակնարկեց՝ այս անգամ ևս վճիռը հետաձգել: Բայց մերժվեցավ ընդհանուր աղաղակներով: Ավելի կատաղած էին Վանի և Մուշի երեսփոխանները: Դրանցից մեկը, մի այլ առարկա չգտնելով, յուր ծանր «փյուսկյուլով» ֆեսը նետեց Կարնո երեսփոխանի երեսին: Նա պատրաստվում էր պատասխանել յուր կոշիկների մի հատով...

Ատենապետ Էֆենդին դարձյալ ձայն տվեց, թե նիստը պետք էր գոցել:

Բայց անհնար էր դուրս գալ: Ժողովրդի երեսփոխանները պաշարված էին ժողովրդի զարհուրանքով:

Լուսամուտներից մեկը շառաչեց, ապակիները փշրվեցան, մի քար անցավ երեսփոխանների տաքացած գլուխների վրայով, դիպավ ատենապետ Էֆենդիի ամբիոնին:

Նիստը գոցվեցավ:

Սարսափը տիրեց բոլորի վրա:

Սպասում էին, որ ոստիկանությունը գար, ամբոխը ցրվեր և նրանց ազատեր այդ թակարդից:

Ոստիկանությունն ուշացավ:

Արդեն արևը մտել էր: Մութը տիրում էր եկեղեցում: Վախենում էին մոմերը վառել:

Ատենապետ Էֆենդիի աջ կողմի բազկաթոռից վեր կացավ մի բարձրահասակ անձնավորություն՝ արծվի աչքերով և ալեխառն մորուքով: Նրա պատկառելի դեմքը այնպիսի տպավորություն էր գործում, որ եթե ալեկոծված ծովի վրա մի հայացք ձգելու լիներ, ծովը հեզությամբ կմեղմացներ յուր կատաղությունը:

— Անկարելի է դուրս գալ, սրբազան,— դողդողալով նկատեց նրան ատենապետ Էֆենդին:

— Ես կգնամ և ամբոխը կցրեմ,— պատասխանեց սրբազանը:

— Ձեզ խորհուրդ չէի տա, սրբազան,— պնդում էր ատենապետ Էֆենդին:

— Իմ մշեցիներն ինձ վրա բար չեն նետի,— ասաց նա և անցավ շվարած երեսփոխանների աթոռների միջով:

Երբ հայտնվեցավ նա դրսում, խուռն բազմությունը միաձայն թնդաց.

— Կեցցե՛ մեր Հայրիկը...

Երբ ձայները փոքր-ինչ լռեցին, նա ասաց.

— Հեռացե՛ք, զավակներս, քանի որ ես կենդանի եմ, ձեր երկրի շահերը միշտ պաշտպանված կլինեն:

Ուրախացած բազմությունը սկսեց ցրիվ գալ:

Ժ

Օհանը կարողացավ գտնել Ոսկանին կիրակնօրյա խռովության երրորդ օրը: Բարեսիրտ ծերունին ուրախությամբ գրկեց նրան, որովհետև բավական ժամանակ չէր տեսել:

Կեսօր էր: Համալները ճաշում էին: Նրանք նստած էին մաքսատան քառակուսի բակի բարձր կամարներից մեկի ներքո, վերևից քարշ ընկած մեծ կշեռքից փոքր-ինչ հեռու: Նստած էին բոլորակ կերպով, խճահատակի վրա: Մեջտեղում դրած էր մի ահագին պղնձե տաշտ, որ փռից նոր էր բերված: Մի ոչխարի ամբողջ կեսը, զանազան բանջարեղենների հետ, լավ խորովված, յուր անուշ հոտով ախորժակ էր հրավիրում: Տասն և երկու ուժեղ ձեռքեր մեկնվում էին տաշտի մեջ և ամեն անգամ տանում էին իրանց հետ խոշոր պատառներ: Տաշտը դողում էր նրանց առջև:

Օհանին ևս հրավիրեցին ճաշել: Նա տեղավորվեցավ Ոսկանի մոտ: Թեև այնօր ոչինչ չէր կերել, բայց ներքին անհանգստությունը խլել էր նրա ախորժակը: Այդ նկատեց Ոսկանը և ժպտալով ասաց նրան.

— Շտապի՛ր, թե չէ մեկ էլ աչքդ կբացանես, կտեսնես, որ տաշտի մեջ բան չէ մնացել:

Մի այլ համալ ծաղրեց ասելով.

— Եթե բանելու մեջ էլ այդպես ես, քեզանից խեր չկա[2]:

Ոսկանը վեր առավ տաշտից մի մեծ պատառ միս, դրեց Օհանի առջև, որ ինչպես ուզում է, այնպես ուտե և քաղցած չմնա:

Խոսակցությունը, ըստ մեծի մասին, պտտվում էր կիրակի օրվա խռովությունների վրա: Համալները զայրացած էին, որ Ազգային ժողովի հետագա նիստը անորոշ ժամանակով հետաձգել էին: Դրանից վատ նախագուշակություններ էին անում:

— Դուք կարծում եք, այդ մարզիկը հոգի՞ ունեն, հավա՞տ ունեն,— ասաց Ոսկանը գլուխը զայրացած կերպով շարժելով:— Նրանց փարա՛ տուր, փարա՛, ամեն բան կանեն...

Խոսքը ժողովի երեսփոխանների մասին էր:

---

[2] Հայաստանում արագությամբ ուտելը արագ գործելու նշան է: Երբ մարդիկ մշակներ են վարձում, սկզբում նայում են, թե ինչպես են ուտում: Նույն փորձն անում են ձիաների և երկրագործական այլ անասունների վրա: Եթե դանդաղ կերպով են ուտում, այդ արդեն դանդաղկոտության նշան են համարում:

— Իսկ Պողոս վարդապետը փարա շատ ունի,— ասաց մի այլ համալ:

— Ինչո՞ւ չի պիտի ունենա,— խոսեց մի ուրիշը,— մեզ նման խո քրտինք չէ թափում... ամեն կողմից գռփում է, գջլում է, յուր համար փող է շինում... և հարկավոր ժամանակ ամենի բերանը ոսկու փականք է դնում...

— Փողը թո՛ղ յուր գլուխն ուտե,— ասաց Ոսկանը,— ո՞ր վարդապետը, ո՞ր երեցն է փողից երես դարձնում: Սուտ չեն ասել. «սա՛ր ու ձոր՝ իրիցի փոր...»: Բայց վատն այն է, որ այդ մարդը, թուրքի հետ՝ թուրքություն է անում, քրդի հետ՝ քրդություն է անում: Երբ մեկը նրան ասում է, հայր սուրբ, այդպես լավ չէ, նա թուրքի կամ քրդի ձեռքով նրան ծակն է կոխում... Ի՜նչքան մարդիկ նրա պատճառով մաշվում են բանտերում... որքան տներ է քանդել նա... Մի՞թե դա հայ-քրիստոնյայի գործ է:

Հայաստանից Պոլիս եկած մշակները մեծ եռանդ էին ցույց տալիս ոչ միայն այն հարցերում, որ ուղղակի վերաբերում էին իրանց հայրենիքին, այլ առհասարակ բոլոր ազգային նշանավոր հարցերում նրանք արտահայտում էին թե իրանց դժգոհությունը և թե իրանց համակրությունը այնպիսի համարձակ ցույցերով, որ անձնազոհության էին հասցնում: Այդ տնից, տեղից, բարեկամներից զրկված թշվառները, սրտները լի հազարավոր վշտերով, ավելի լա՛վ գիտեին իրանց հայրենիքի վշտերը, ավելի լա՛վ ծանոթ էին նրա վերքերի հետ: Այդ էր պատճառը, որ նրանք ոչ սակավ անգամ հանդիսանում էին իբրև մի ազդու թարգման իրանց հայրենիքի և Պոլսի պատրիարքարանի միջև:

Այժմ համալների վրդովմունքին առարկա դարձած Պողոս վարդապետը Վանի առաջնորդն էր: Այդ եկեղեցականի անկարգ վարմունքները, քանի տարի էր, որ ամբողջ Վանի վիճակը խռովության մեջ էր պահում: Թուրք պաշտոնականներին շողոքորթելը, քուրդ ցեղապետների հետ հարաբերություններ պահպանելը, նրանց ձեռքով յուր հակառակորդներին պատմելը, բարեխիղճ անձանց հալածելը և նրանց աքսորի կամ բանտարկության մատնելը,— դրանք այն զենքերն էին, որոնցով Պողոս վարդապետը մաքառում էր յուր հակառակորդների դեմ: Վան քաղաքում կազմվել էր երկու ոխերիմ կուսակցություն, որ կոչվում էին «*պողոսյան*» և «*ապոդոսյան*»: Առաջին պարագլուխներն էին՝ զանազան հայ բեյեր, էֆենդիներ, զանազան կապալառուներ, վաշխառուներ, մի խոսքով, ամեն տեսակ հարստահարիչներ, որոնք թե իրանց շահերով և թե պարապմունքներով պետք ունեին Պողոս վարդապետի նման մի առաջնորդի: Երկրորդ կուսակցությունը կազմված էր բողոքող, հարստահարված հասարակությունից, որի ձայնն ամեն դեպքում խեղդվում էր:

Տեղային կառավարությունը, Վանի փաշան, պաշտպանում էր Պողոս վարդապետին: Նա պաշտպանություն էր վայելում և՛ ժողովրդի հայ կեղեքիչներից: Նեղյալ ժողովուրդը, անճար մնացած, յուր բողոքներով դիմում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին: Այստեղ ևս Պողոս վարդապետը վարձել էր հզոր պաշտպաններ ոչ միայն Ազգային ժողովում, այլև Կրոնական ժողովում: Ամենքն աշխատում էին մինչև վերջին ծայր օգնել անկարգին, որ Վանում մնար, իսկ եթե անհնար լիներ նրան յուր տեղում պահել,— այդ դեպքում տալ նրան Մուշի առաջնորդությունը: Այդ էր, որ գրգռել էր մշեցի համալներին:

Պատրիարքը— Խրիմյան Հայրիկը,— հակառակ Պողոս վարդապետի բազմաթիվ պաշտպանների, պահանջում էր, որ նրան ոչ միայն հարկավոր էր հեռացնել Վանից, այլ պետք էր աքսորել մի որևէ վանքում ցմահ ապաշխարելու, որպեսզի ժողովրդի միջից խռովությունը և երկպառակությունը դադարի: Այդ հարցը մի քանի տարի

Ազգային ժողովի վիճաբանությունների առարկա էր դարձել: Վերջին օրերում պետք է յուր լուծումն ստանար[3]:

Ճաշելուց հետո համալները ցրվեցան և յուրաքանչյուրը յուր «փալանը» բարձի փոխարեն դնելով գլխի տակին, պառկեցին խճահատակի վրա մաքսատան պահեստի կամարների ներքո, որ փոքր-ինչ հանգստանան, մինչև տոթն անցնի:

Օհանը և Ոսկանը մնացին միայնակ:

— Հիմա ասա՛, զավակս,— դարձավ բարեսիրտ ծերունին դեպի պատանին,— ի՞նչպես ես, ի՞նչ ես շինում, լա՞վ են գնում քո գործերը:

Օհանը սկսեց պատմել յուր հետ պատահած արկածները: Ոսկանը մի առանձին ժպիտով լսում էր, թե ի՞նչ խաղ է խաղացել սև-խաչակիր տիկինը միամիտ պատանու հետ. գովեց Օհանի քաջությունը, որ ազատել է դժբախտ մանուկին, և Օհանի վիճակը թեթևացնելու համար հայտնեց, որ այդ մանուկը կլինի նրա բարեկամ բոլոր համայնքների որդեգիրը: Իսկ ինչ որ վերաբերում է Օհանի պարապմունքին, նա խորհուրդ տվեց՝ դարձյալ շարունակել յուր չոփչիությունը:

Վերջին խորհուրդը մերժեց Օհանը, ասելով.

— Ես իմ կթոցը ծովը նետեցի, ես երդվեցա երբեք իմ մեջքը չծռել աղբի ներքո: Ես մուրացկանություն կանեմ, բայց չոփչիություն չեմ անի:

Ոսկանը նկատելով պատանու համառությունը, մտածության մեջ ընկավ:

— Մի ամսից հետո,— ասաց նա,— մեր ընկերներից մեկը գնալու է, քեզ համար տեղ կբացվի, այն ժամանակ քեզ կընդունենք մաքսատուն համալների թվում:

Համալները թե խաներում (քարվանսարաներում) և թե այդ հիմնարկությունների մեջ կազմում են մի տեսակ ընկերություն, որոշ պայմաններով որոշ

---

[3] Ներկա դարուս վերջին կիսաբաժնում չէ կարելի քույր տալ մի եկեղեցական, որ այնքան զբաղեցրած լինի մամուլը, որ այնքան հուզած լինի ժողովրդի խաղաղությունը, որպես Պողոս վարդապետը,— մի մարդ, որ, արդարև, զարմանալի տոկունություն ունի յուր խռովարար ձեռնարկությունների մեջ: Երեսուն տարի կլինի, որ նա հարատև երկպառակության մեջ է պահել Վանի հայ հասարակությունը և նրա եռանդը երբեք չէ հոգնում: Եթե նրա գործողությունները լինեին դեպի լավը, դեպի բարին, նա նույնքան անզուգական կլիներ՝ իբրև մի հզոր գործիչ, որպես այժմ անզուգական է իբրև յուր նմանը չունեցող խառնակիչ: Խրիմյանի պատրիարքության օրերում Կ. Պոլսի ամբողջ մամուլն զբաղված էր նրա արարքներով: Հրատարակվեցան նաև մի քանի տետրակներ, որոնց մեջ խիստ սև գույներով նկարագրված էին նրա չարագործությունները: Այդ ժամանակ «Մշակի» մեջ մի շարք հոդվածներով ես ծանոթացրի ռուսահայերին Պողոսի հրեշավոր անձնավորության հետ: Երկար տարիներ նա ամենածանր հոգսեր էր պատճառում Խրիմյանին, մինչև հաջողվեցավ նրան հեռացնել Պողոսին Վանի առաջնորդությունից և, որքան հիշում եմ, աքսորել Կարինի կողմերի մի վանքում ապաշխարելու համար: Այնտեղ մնում էր նա մինչև Խրիմյանը հրաժարվեց պատրիարքական աթոռից և գնաց Վան: Այդ ժամանակ Պողոսը յուր աքսորանքից ազատվեցավ, նույնպես գնաց Վան, ապրում էր յուր վանահայրության ներքո եղած Կտուց անապատում, որ գտնվում է Վանի ծովակի մեջ, մի քանի ժամ հեռավորության վրա Վան քաղաքից: Հիշյալ անապատում ևս Պողոսը հանգիստ չմնաց, այնտեղ նստած, լուռ ու մունջ գործում էր Խրիմյանի դեմ: Գևորգ Դ-րդը, Պողոսին Վանից հրավիրեց Էջմիածին և եպիսկոպոս ձեռնադրելով, վերադարձրեց յուր տեղը... Աստիճանի բարձրության հետ՝ բարձրացավ և Պողոսի նշանակությունը, մանավանդ, երբ նա կրկին ձեռք բերեց Վանի առաջնորդությունը: Այս անգամ, հենվելով թուրք պաշտոնակալների օգնության վրա, նա իր հին ոխակալությանը դեպի Խրիմյանը՝ հասցրեց մատնության, որի տխուր հետևանքն այն եղավ, որ Խրիմյանին Վանից աքսորեցին Կ. Պոլիս և նրա բոլոր կուսակիցները հալածվեցան՝ ոմանք աքսորով, ոմանք տարագրվելով իրանց հայրենիքից: Այնուհետև դատարկ ասպարեզը մնաց Պողոսին: Եվ այսօր հին խռովարարը, երկար տարիներից հետո, դարձյալ տակնուվրա է անում Վանի հայ հասարակությունը, և Կ. Պոլսի այժմյան թրքամոլ Ազգային ժողովի վիճաբանությունների առարկա է դարձել:

կազմակերպությամբ, ունին ընդհանուր դրամարկղ (կասսա), և յուրաքանչյուրը յուր աշխատանքը մտցնում է այնտեղ, հետո հավասար կերպով բաժանում են իրանց մեջ: Հիվանդները կամ գործի մեջ վնասվածները, մինչև մի որոշյալ ժամանակ, դարձյալ անմասն չեն մնում ընկերության դրամարկղից:

Օհանը գոհ մնաց ծերունու խոստմունքով, բայց չգիտեր, թե ինչով ապրեր այդ մի ամիսը, մինչև յուր համար տեղ բացվեր: Նրա ունեցածը կողոպտեցին, երբ քնած էր Բոսֆորի ափի մոտ, այժմ մի փարա անգամ չուներ հացի տալու: Այդ գիտեր Ոսկանը, Օհանը պատմեց նրան:

— Ես կտամ այժմ քեզ մի քանի ղուրուշ, որ ծախսելու փող ունենաս,— ասաց ծերունին:— Երբ կպրծնի, էլի կգաս ինձ մոտ: Համալների մեջ սովորություն էր օգնել իրանց հայրենակիցներին, մինչև նրանք պարապմունք գտնեին:

Օհանը շնորհակալությամբ ընդունեց յուր բարեկամի օգնությունը և հեռացավ մաքսատնից: Օհանը գնում էր և միևնույն ժամանակ մտածում էր Ոսկանի բարեսրտության վրա: Ո՜րքան խորին կրթողական տպավորություն է գործում օրինակը, լա՜վ օրինակը: Նա լսել էր Ոսկանի անցյալը տեսնում էր նրա ներկան: Այդ աշխատասեր մշակի կյանքի մեջ գտնում էր գեղեցիկ, առաքինական խրատներ: Դեռ շատերի հիշողության մեջ չէր մոռացվել նրա մի ազնիվ վարմունքը, որ պատահել էր մի քանի տարի առաջ: Այդ ժամանակ Ոսկանը դեռ փողոցային համալ էր: Մի պարոն, դուրս գալով շոգենավից, հանձնեց նրան յուր պայուսակը, պատվիրելով, որ հետևե իրան: Ոսկանը խուռն բազմության մեջ կորցրեց պարոնին: Որոնեց, որոնեց, չգտավ: Գնաց այն պանդոկը, որտեղ ցույց էր տվել նա, այնտեղ ևս չգտավ: Մի քանի շաբաթ, մի քանի ամիս որոնում էր նրան: Վերջը բաց արավ պայուսակը, մտածելով, գուցե նրա մեջ կգտնվեր մի առարկա — նրա անցագիրը կամ մի այլ թուղթ, որից կարելի կլիներ իմանալ, թե ով էր այդ պարոնը: Պայուսակի մեջ գտավ պարոնի հագուստները, մի քանի թղթեր և մոտ հազար ոսկի փուտ փող: Այդ ժամանակ Ոսկանը յուր հայրենիքում մի քանի հազար ղուրուշ պարտք ուներ, բայց պայուսակի ոսկիները չկարողացան հրապուրել նրան: Ոսկանը տեղեկացավ, որ պարոնը ֆրանսիացի էր, վեր առավ պայուսակը և ուղղակի դիմեց ֆրանսիական դեսպանատուն: Այնտեղ քննեցին թղթերը, տեսան, որ պայուսակը պատկանում էր նույն պարոնին, որ մի քանի ամիս առաջ, փողոցում խոլերայից բռնվելով, մեռել էր:

Ոսկանը ստացավ, իբրև պարգև, ոսկիների մի մասը, որ ամենևին չէր սպասում:

ԺԱ

Վերադառնալով Ոսկանի մոտից, Օհանը երեկոյան անցնում էր Կում-Կափու փողոցներից մեկի միջով: Նա բավական հոգնած էր, մտավ մի բարբարի (սափրիչի) խանութ փոքր-ինչ հանգստանալու: Նա այժմ գրպանում մի քանի ղուրուշ ուներ և այդ վստահությամբ ամեն տեղ կարող էր մտնել:

Շատախոս սափրիչը վանեցի էր, ամեն մի նոր հաճախորդին կրկնում էր միևնույն նորությունները, ինչ որ առաջինները հարյուր անգամ լսել էին: Այդ դիտավորությամբ մոտեցավ Օհանին, ողջունեց, առողջությունը հարցրեց, կարծես վաղեմի բարեկամ լիներ, պատրաստվում էր պատմել կիրակնօրյա անցքերը, բայց Օհանը կտրեց նրա խոսքը, ասելով, որ նույն համալների թվումն է եղել և գիտե բոլորը:

Սափրիչի խանութները բոլոր տաճկական քաղաքներում, մանավանդ Կ. Պոլսում, մի տեսակ անկելանոցներ են անգործ, դատարկախոս մարդկանց համար, ուր կարելի

է ամեն տեսակ բամբասանքներ լսել, նարգիլե ծխել, ղահվե խմել, սափրիչի «փուսկուլու չոջուխների» վրա նայել,— և այդ բոլոր բավականությունն արմե մի քանի փարա: Բայց Օհանը ոչ ղահվե պահանջեց և ոչ նարգիլե, նա խնդրեց, որ խմելու ջուր տան իրան:

Սափրիչը, ինչպես վերևում հիշեցինք, վանեցի էր: Թուլամորթ վանեցին Պոլիս գալով կամ բաղնիքներում է ծառայում, կամ, եթե մանկահասակ է, թուրք աստիճանավորների տներում «էյվազություն» (սպասավորություն) է անում, կամ սափրիչ է դառնում: Իսկ եթե ուրիշ գործ չէ գտնում, կամ Ազգային ժողովում երեսփոխան է դառնում և կամ մի թերթի աշխատակից: Վերջին դեպքերում ևս նա սափրում է... Հինգ ղուրուշով մեկին ցեխի մեջ է կոխում, մյուսին ցեխից հանում:

Նա, մշեցու նման համալություն, թուլումբաջիություն (հրդեհաշեջություն), նավաստիություն չէ անում: Դրանք պահանջում են մարմնական ուժ, տոկունություն և բնավորության զորություն, որոնցից զուրկ է վանեցին:

Մեր այժմյան սափրիչը, որի խանութը մտավ Օհանը, կլորիկ դեմքով, կլորիկ փորով, կլորիկ ձեռքերով ու ոտներով մի մարդ էր: Խնամքով ածելած թշերը սոխի կեղևի նման փայլում էին կարմրությունից: Նրա կազմվածքի մեջ ծայրեր չկային, ամեն անգամ կոլորված էր: Այդ էր պատճառը, որ նա գնդի ձև էր ստացել: Կլորիկ էին դեղնագույն աչքերը, որ փայլում էին երկու պղնձե կոճակների նման: Կլորիկ էր հաստ թշերի մեջ կորած բերանը, որ մի փոքրիկ ծակի նմանություն ուներ և երբեմն բացվում էր, երբեմն կուչ էր գալիս: Կլորիկ էին նրա խոսքերը, նրա ձայնը, որ կարծես մանր կոտորակների հատիկների նման դուրս էին թափվում բերանից: Կլորիկ էր և՛ նրա ծիծաղը, որ կլորիկ քթի շուրջը բազմաթիվ բոլորակ գծեր խազելով, վերջն այդ գծերը, ալիքների նման փոքր առ փոքր սեղմվելով, անհետանում էին քթի ծայրից: Նրա անդամների կլորությունը լրացնում էր կլորիկ հայելին, որ առջևի կողմից խրած ուներ հաստ գոտիի մեջ, և ամեն մի նոր հաճախորդ ներս մտնելու և նստելու միջոցին դուրս էր հանում, թևքի արմունկով սրբում էր, հետո տալիս էր նրա ձեռքը՝ յուր դեմքին նայելու: Բացի այդ քաղաքավարությունից նա ուրիշ ոչինչ չէր շինում, միայն խոսում էր և յուր սրախոսությունների վրա ինքն էր ծիծաղում:

Հաճախորդների պետքերը կատարում էին նրա մանկահասակ աշակերտները, որոնց թիվը փոքր չէր: Մի տեղ մազեր էին խուզում, մի տեղ ածիլում էին, մի տեղ լվանում էին մի փերեզակի տարիներով չլվացած գլուխը: Իսկ այնտեղ, ընկողմանած մի տձև բազկաթոռի վրա, թառամած «էյվազը», յուր վաղանցուկ գեղեցկության հիշատակը նորոգելու համար, սափրվելուց հետո, փոքրիկ մանկաշով դուրս էր քաշել տալիս քթի միջի մազերը:

Մի անկյունում, հնոցի մեջ, ծխում էր մշտավառ կրակը: Նրա վրա դրած էր տաք ջրով լի կաթսան, որ միշտ պատրաստ էր հաճախորդների կեղտը մաքրելու: Այնտեղ և՛ ղահվե էին եփում, և՛ նարգիլեների գլխի վրա կրակ էին դնում:

Ամենուրեք զգացվում էր խիստ անախորժ գիջություն, ամենուրեք թաց էր: Թաց էր խանութի մաշված, աղյուսյա հատակը, ուր չիբուխների և նարգիլեների վրա սրսկած սառը ջուրն անդադար կաթկթում էր: Թաց էին հաստ դոշակներով պատած «սեդրիները», որ դրած էին պատերի մոտ, և որոնց վրա նստած էին հաճախորդները: Թաց էր խանութի խեղդող օդը, որ տոգորված էր սապոնի կծու հոտով և ծխախոտի դառն մխով: Թաց էին և սափրիչի շրթունքների շրջակայքը, որոնց վրա անհնազանդ թուքը խոսելու միջոցին անդադար անձրևում էր:

Աղմուկն անտանելի էր: Ամենքը խոսում էին, հայտնի չէր, թե ո՞րն էր լսողը: Մի տեղ երկու հոգի նստած, նարդի էին խաղում: Մի քանիսը նրանց շուրջը հավաքված,

եռանդով թելադրում էին, թե քարը որտեղ ավելի լավ է դնել: Մի անկյունում կուչ էր եկած ժողովրդի երգիչը, ածում էր յուր «չոնգուրի» վրա և տխուր, մելամաղձոտ ձայնով եղանակում էր մի տաճկական երգ: Նրան ոչ ոք չէր լսում:

Օհանը ձանձրացավ, պատրաստվում էր հեռանալ: Այդ միջոցին հաճախորդներից մեկը, որ վաղուց նայում էր նրա վրա, մոտեցավ, նստեց նրա մոտ: Անունը և երկիրը հարցնելուց հետո, այդ մարդը մի քանի րոպեում այն աստիճան մտերմացավ Օհանի հետ, որ առաջարկեց յուր հաշվով ղահվե խմել և ծխել: Թեև Օհանը սովոր չէր ոչ առաջինին և ոչ երկրորդին, այնուամենայնիվ ընդունեց նրա հյուրասիրությունը:

Այդ մարդը նույնպես վանեցի էր: Հնամաշ հագուստը, որի մաքրության համար խոզանակը մեծ ջանք էր գործ դրել, չէր ցույց տալիս, որ նա կարողության տեր լիներ: Բայց երևում էր, որ վարկ ուներ: Սափրիչի աշակերտներից մեկն իսկույն կատարեց պատվերը, մատուցանելով երկու ֆինջան ղահվե, երկու նարգիլե, և վերադառնալու ժամանակ ածուխով չորս խաղ գծեց պատի վրա: Պատերը չորեքկողմից նախշված էին այդ տեսակ խազերով, որ ներկայացնում էին յուրաքանչյուր հաճախորդի հաշիվը:

Այդ վանեցին սափրիչի հակապատկերն էր. ցամաք, նիհար, թույլ կազմվածքով, բայց բավական զորեղ ձայնով, և յուր խոսակցության մեջ ի դեպ և անդեպ միշտ գործ էր ածում «սահմանադրություն» բառը: Նա իսկույն սկսեց Օհանի հետ քաղաքականության վրա խոսել, հետո նկատելով, որ այդ չէ հետաքրքրում Օհանին, անցավ ազգային խնդիրներին:

— Շատ անհամբեր եմ գիտենալ,— ասաց նա,— թե ի՞նչ վճռեց ազգային «սահմանադրությունը». այսօրվա թերթերը որոշ ոչինչ չեն հայտնում:

— Կամենում եք ասել՝ Երեսփոխանական ժողովը,— ուղղեց նրան մի պոլսեցի, որ նստած էր Օհանից փոքր-ինչ հեռու:— Նիստը հետաձգված է:

— Այո՛, ազգային «սահմանադրության» Երեսփոխանական ժողովը,— կրկնեց վանեցին, չկոտրելով իրան:— Նիստը հետաձգվա՞ծ է, մի՞թե, այդ վատ նշան է...

Օհանը ոչ ազգային սահմանադրություն գիտեր և ոչ Երեսփոխանական ժողով, նա ճանաչում էր յուր Հայրիկին միայն, և նրա մեջն էր գտնում ամեն արդարություն:

— Հայրիկը չի թողնի, որ այդ բեռը դնեն մեր վզին,— ասաց նա, և մի առանձին վստահությամբ ձեռքը տարավ դեպի յուր պարանոցը, շոշափեց ծոծրակը, տեսնելու, արդյոք մի որևէ ծանրություն չկա՞ր այնտեղ:

— Բայց մշեցիների «սահմանադրությունն» էլ վատ չէր,— ավելացրեց վանեցին, ակնարկելով կիրակնօրյա հուզմունքը:— Քաջերը լա՞վ գործ կատարեցին...

— Կատարյալ անկարգություն էր,— ընդհատեց պոլսեցին:

— Ինչպե՞ս կարելի է այդ տեսակ կոպիտ ճնշումներ գործ դնել ժողովի վրա:

Օհանի աչքերը վառվեցան:

Այդ միջոցին մոտեցավ սափրիչը և տեղեկանալով թե վիճաբանությունն ի՞նչումն է, հանեց յուր ծոցից մի քանի թերթ յուղոտված թուղթ և փողի ձևով գալարելով, ծայրը մոտեցրեց պոլսեցու քթին և մի առանձին պարծենկոտությամբ ասաց.

— Տե՛ս, այդ է ճնշումը... հազարի չափ ստորագրություն կա այդ հանրագրի մեջ... ամենքը վանեցիներ են... էգուց պետք է տանք սրբազան պատրիարքին...

Պոլսեցին՝ յուր քիթը ազատելու համար հազար ստորագրությունների ճնշումից, երեսը շուռ տվեց:

Այդ մարդը թաղական վարժապետ էր: Սափրիչի աշակերտները ոչ ոքի պատվերներ այնպես դանդաղկոտությամբ չէին կատարում, որպես այդ դժբախտի: Եվ ոչ ոքի խազերը պատերի վրա այնքան ընդարձակ տեղ չէին բռնում, որպես այդ մուրացկանի: Նրա հաշիվը միշտ մնում էր անջնջելի:

Նա յուր աշակերտի և՛ դաստիարակն էր, և՛ ծառան էր: Առավոտից մինչև երեկո դաս էր տալիս, իսկ երեկոյան պետք է հարուստների որդիների «հեյբանները» (գրքերի պայուսակները) վեր առներ, հասցներ իրանց տները: Ցեխ օրերում գրքերի հետ շալակում էր և՛ փոքրիկներին:

Օհանի մոտ նստած վանեցին, չհարցնելով անգամ հանրագրի բովանդակությունը, համակրությամբ դիմեց սափրիչին, ասելով:

— Այդ շատ լավ ես մտածել, Թաթոս ախպար, ինձ տուր, ես էլ ձեռք կդնեմ:

Թաթոս ախպարը,— այդպես էին կոչում սափրիչին,— հայտնի չէ, թե որտեղից գտավ գրիչ և գաղամար, մոտեցրեց յուր հայրենակցին: Նա առավ գրիչը և խոշոր տառերով ստորագրեց. «վանեցի առաջին կարգի թելլալ Մարտիրոս աղա Իշխանապետյանց»: Հետո մատը թաթախեց գաղամարի մեջ և կնիքի փոխարեն կոխեց թղթի վրա:

Թաթոս ախպարը բերանով երկար փչում էր թղթի վրա, որ չորացնե գրվածքը, որ կլանել էր այնքան մեծ քանակությամբ մելան: Բայց նա ավելի թրջում էր, քան թե ցամաքացնում էր, որովհետև այդ դեպքում ևս անհնազանդ թուքն անձրևում էր թղթի վրա: Թաղական վարժապետը խորհուրդ տվեց նրան, որ բռնե կրակի վրա: Նա թերթը մոտեցրեց հնոցին. չորացնում էր և միևնույն ժամանակ շարունակում էր խոսել, թե ո՛րպիսի սարսափ պիտի ձգե Ազգային ժողովի վրա յուր բազմաստորագիր հանրագրությունը և ո՛րպիսի աղմուկ պիտի բարձրացնե... Այդ միջոցին չնկատեց նա, որ սպիտակ թերթը կրակի ազդեցությունից շագանակի գույն ստացավ և սկսեց մխալ:

— Այրվեցա՛վ,., այրեցա՛վ...— կոչեց հնոցի մոտ կանգնած աշակերտը:

— Ոչինչ, այդպես էլ լավ է,— ասաց նա և անվրդով կերպով ծալեց թերթը, թաքցրեց յուր ծոցում:

Նա կրկին մոտեցավ առաջիններին:

— Այսօրվա թերթերում տպված է, որ այդ հանրագրությունն արդեն մատուցված է,— հայտնեց թաղական վարժապետը:

— Տպվա՞ծ է... մի՞թե...— ուրախությամբ հարցրեց Թաթոս ախպարը:

Վարժապետը հանեց գրպանից «Մասիսի» համարը և ճառական եղանակով կարդաց.

«Հաստատ աղբյուրներե կտեղեկանանք, քաղաքիս մեջ գտնվող վանեցի պանդուխտներե քանի հազար ստորագրությամբ հանրագրություն մը ներկայացուցված է սրբազան պատրիարքին ի տնօրինություն. հակված ենք ըղձալ, խառնիճաղանջի մը այսօրինակ ձեռնմխություն հանուր ազգային օրինաց և իրավանց չարաչար զեղծում մը նկատվելեն զկնի, հիշյալ հանրագրություն, յուր բոլոր պարագայուք հանդերձ, ուշադրության չառնվիր և հետևապես գերապատիվ Պողոս

վարդապետի պես ազգասեր և պիտանի անձի մը արդարացի իրավանց պաշտպանության հույսեն զմեզ իսպառ ձեռնաթափ չենք սեպեր»:

Սափրիչը, որ ուշադրությամբ լսում էր, փոխանակ բարկանալու, որ այդ լուրի մեջ պաշտպանվում էր իրանց ատելի անձնավորությունը, ընդհակառակն ավելի ուրախացավ, կարծելով թե լուրը ի նպաստ իրանց է հաղորդված:

— Այդ մեկը լավ է գրել,— ասաց նա յուր խուզած ընչացքները հաղթական ոգևորությամբ ոլորելով,— այդ մեկը լավ է արել, որ մտցրել է՝ «հանուր ազգային օրինաց և իրավանց»... կը նշանակե, իրավունքը մերն է:

— Այդ մյուսները ևս վատ չէ գրել,— նկատեց առաջին կարգի «թելլալը», թերթն առնելով թաղական վարժապետի ձեռքից և կարդալով այս բառերը. «յուր բոլոր պարագայուք հանդերձ»... «մի քանի հազար ստորագրությամբ»...

Թաղական վարժապետը ոչինչ չխոսեց. միայն նրա վշտահար դեմքը փոքր-ինչ ցնցվեցավ և երևան հանեց ժպիտի նման մի բան:

Օհանը այսքանը միայն նկատեց, թե ինչպես է պատահել, որ դեռ հանրագրությունը չներկայացրած, նրա մասին արդեն գրել են, որ մատուցվել է սրբազան պատրիարքին:

— Այդ ոչինչ, մեր լրագրները միշտ կատարված իրողությունից առաջ են ընկնում,— պատասխանեց թաղական վարդապետը:— Դուք ուշադրություն չդարձրիք այն կետի վրա, որ դեռ հազարի չհասած ստորագրությունները մի քանի հազար են հրատարակում...

— Այդ խոսքերում «Մասիսը» սուտ չէ ասել, անխելք,— ընդմիջեց սափրիչը բարկացած կերպով,— եթե մի օր էլ մնա, մի քանի հազարի կհասցնեմ:

— Մի օրվա մեջ մի քանի հազար մարդիկ չեն մտնի ձեր խանութը,— պատասխանեց թաղական վարժապետը ծիծաղով:

— Թող չմտնեն: Ես գիտեմ այդ քաղաքում ինչ վանեցիներ կան, կնստեմ, անունները մեկ-մեկ կգրեմ, և ոչ ոք էլ չի ասի, թե իմ անունն ինչու՞ գրեցիր:

Օհանը վեր կացավ և շնորհակալություն հայտնելով սափրիչին, որ մի քանի րոպե հանգստացավ նրա խանութում, դուրս եկավ:

Նրա հետևից դուրս եկավ և «առաջին կարգի թելլալը»:

ԺԲ

Իրան «առաջին կարգի թելլալ», այսինքն միջնորդ կոչող վանեցին, պարապում էր գլխավորապես նրանով, որ տների համար սպասավորներ և աղախիններ էր վարձում: Նրան էին դիմում մարդիկ, երբ մեկին պետք էր մի ձի կամ ավանակ վարձել այս և այն գյուղը, գնալու համար:

Նա բռնեց այն փողոցը, որով գնում էր Օհանը: Երկար հետևում էր նրան, որպես մի որսորդ, որ շտապում է յուր որսը չկորցնել աչքից: Երբեք նրա ցամաք և տեղ-տեղ սև բծերով նախշված դեմքն այնպիսի բավականություն չէր արտահայտել, որպես այսօր: Նա գնում էր և միևնույն ժամանակ յուր մատների վրա ինչ-որ հաշիվներ էր

անում: Երևակայական հաշիվները մեծ արդյունք էին խոստանում: Այդ երևում էր այն ժպիտից, որ երբեմն ցնցում էր նրա բարակ շրթունքները:

Այդ մարդու ստորագրությունից, որ դրեց նա սափրիչի հանրագրության վրա, իմացանք մենք, որ նա կոչվում էր Մարտիրոս աղա Իշխանապետյանց: Այդպես էլ կանվանենք նրան: Փոքր մարդկանց մեծ տոհմանուններ կրելը շատ սովորական է մեր մեջ:

Իշխանապետյանցը որքան և փութացնում էր յուր կարճ ոտների անբավարար քայլերը, դարձյալ Օհանի հետևից հասնել չէր կարողանում: Վերջը ստիպվեցավ կանչել նրան:

Օհանը ետ նայեց, տեսավ, որ իրան կանչողը վանեցի առաջին կարգի թելլալն էր: Կանգ առավ:

— Ինչ կա, որ այդպես շտապում ես, օրհնած,— հարցրեց վանեցին, հազիվհազ շունչ առնելով և ճակատի քրտինքը յուր գունավոր, պատառոտած թաշկինակով սրբելով:— Ո՞ւր պիտի գնաս:

Օհանը դժվարացավ այդ հարցին պատասխանել: Նա մտածում էր գնալ պառավ «մարեի» խրճիթը յուր ազատած մանուկին տեսնել, գիշերը մնալ նրա մոտ, իսկ առավոտյա՞ն.— ինքն էլ չգիտեր, թե ինչով պետք է զբաղվեր:

Իշխանապետյանցը, նկատելով Օհանի շփոթված դրությունը, այլևս չսպասեց նրա պատասխանին, նայեց արեգակին և ձեռքերը տրորելով, ասաց.

— Անցնենք այդ կողմը, դեռ օր շատ կա:

Օհանը մեքենաբար հետևեց նրան:

Գուցե այն հյուրասիրությունը, որ Օհանին ցույց տվեց Իշխանապետյանցը սափրիչի խանութում, կամ գուցե այն զգացմունքը, որ Օհանը գործ ուներ մի հայաստանցու հետ,— լցրել էին պարզամիտ պատանու սիրտը մի տեսակ մտերմությամբ դեպի այդ մարդը, որ ստվերի նման նրանից չէր հեռանում:

Երկար նրանք դնում էին միևնույն փողոցով, որ վերջ չուներ: Վերջ չունեին և Իշխանապետյանցի խոսակցությունները, որ Օհանին զբաղեցնելու համար անդադար փոփոխում էր նա զանազան առարկաների վրա: Ի՞նչ բանի մասին ասեք չէր խոսում այդ բազմատես, բազմափորձ, բազմախորհուրդ մարդը, որ յուր մազերը սպիտակացրել էր Ստամբոլի փողոցներում: Օհանը լուռ լսում էր: Նա շեղվեցավ այն փողոցից և մտավ մի ոլոր-մոլոր «սոխախ», որ այնքան նեղ էր, որ եթե Օհանը երկու ձեռքերը բաց աներ, կը դիպչեր աջ և ձախ կողմի պատերին:

— Ես այդ կողմումն եմ կենում,— ասաց Իշխանապետյանցը,— իմ բնակարանը շատ հեռու չէ այստեղից: Մտնենք այդ գինետունը, մի փոքր զովանանք: Պահողը վանեցի է, շատ պատվական մարդ է:

Ստորերկրյա նկուղը, ուր ներս տարավ Օհանին նրա նոր բարեկամը, այն կարգի գինետներից էր, որտեղ բաժակների ընդհարումների հետ՝ խիստ հաճախ լսվում են բռունցքների ընդհարումներ, որտեղ արբեցած մարդը յուր սերը և համակրությունն արտահայտում է կոպիտ հայհոյանքներով, և որտեղ ծխախոտի մառախուղի մեջ խեղդվել կարելի է:

Երկարաքիթ մարդը, որին ներկայացրեց Իշխանապետյանցը, հենց առաջին անգամից դուր չեկավ Օհանին, թեև նրա մինչև արմունկները ծալած բազուկների վրա երևում էին Երուսաղեմի ուխտավորի մուգ-կապտագույն նշաններ: Այդ էր պատճառը, որ նրան կոչում էին «Հաջի աղա», որ մեր կողմերի ասությամբ նշանակում է՝ մահտեսի կամ մուղդուսի աղա: Դա գինետուն պահող վանեցին էր:

Իշխանապետյանցը հարկավոր պատվերները տալուց հետո, Օհանի հետ անցան բազմության միջից և հազիվ մի անկյունում նստելու տեղ գտան:

Խմողների աղաղակները խլացնում էին ամեն խոսակցություն: Եվ չնայելով որ դրսում դեռ արեգակ կար, բայց այստեղ ճրագներն արդեն վառել էին: Նկուղի ծանր, հեղձուցիչ օդը խեղդում էր ճրագների թե լույսը և թե շնչառությունը: Իսկ բորբոսային խոնավությունը դրել էր պատերի վրա յուր մուգ-կանաչագույն խավը, որ թառամած մամուռի նմանություն ուներ:

Շփոթված սպասավորները չգիտեին՝ ո՛ր կանչողին դիմեն: Ամեն կողմից կանչում էին նրանց: Այսուամենայնիվ քառորդ ժամից հետո նրանցից մեկը դրեց սեղանի վրա մի շիշ ըմպելի, մի շիշ ջուր և երկու փոքրիկ բաժակ: Մի այնքան ժամանակ ևս անցավ, մինչև բերեց նա զանազան սառն ճաշելիքներ, որ բաղկացած էին ձկնեղեններից և չոր ապուխտից:

Իշխանապետյանցը կիսատ-կիսատ լցրեց բաժակները, մեկը դրեց Օհանի առջև, մյուսը յուր առջև:

— Եթե խմելու շատ սովոր չես, մի փոքր ջուր խառնիր.— ասաց նա:— Դրան «մաստիքա[4]» կասեն, շատ պատվական խմիչք է:

Հետո բժշկական կետից ևս բացատրելով պատվական խմիչքի» նշանակությունը, շարունակեց նա.

— Արյունը մաքրում է, մաղձը ոչնչացնում է, աչքի լույսի և հիշողության համար էլ լավ է, սիրտը միշտ զվարթ է պահում, ջղերին ուժ է տալիս և հազի համար էլ լավ է:

Օհանն անվարժ ձեռքով վեր առավ շիշը և յուր բաժակի կիսատ մնացած մասը լցրեց ջրով: Նա զարմացավ, երբ տեսավ, որ բոլորովին պարզ հեղուկը կաթնի գույն ստացավ: Սկսեց երեխայի նման ծիծաղել:

— Փորացավի համար էլ լավ է,— ավելացրեց Իշխանապետյանցը:

Բայց Օհանն այնքան առողջ էր, որ ոչ փորացավ ուներ և ոչ մի այլ հիվանդություն: Նա միայն հետաքրքրվեցավ այդ զարմանալի ըմպելիքով, որի մոտ «Մասիսի» հայտարարությունների մեջ շարունակ քսան տարի տպվող, ամեն ցավի դեղ ու դարման հոյուեի դեղահատերը պիտի կորցնեին իրանց հրաշագործ նշանակությունը: Նա բաժակը բարձրացրեց, նախ հոտ քաշեց: Թունդ հոտը ծակոտեց նրա հոտոտելիքը: Բայց ուշադրություն չդարձրեց, աչքերը խփեց և երեսը խոժոռելով մինչև վերջին կաթիլը դատարկեց:

— Դա՛ռն է... շա՛տ դառն է,— բացականչեց Օհանը և մի քանի րոպե չէր կարողանում աչքերը բաց անել: Նրան այնպես էր թվում, որ բերանը կրակով այրեցին:

---

[4] Մաստիքան հասարակ օղի է, միայն *մաստաֆի* կոչված հոտավետ խեժով պատրաստված: Այդ վնասակար ըմպելին սաստիկ գործածական է դարձել Տաճկաստանի թե՛ քրիստոնյաների և թե մահմեդականների մեջ:

Իշխանապետյանցը, որ արդեն ձեռքում պատրաստ ուներ մի կտոր ապուխտ, շտապով տվեց նրան, ասելով.

— Ծամի՛ր, դառնությունը կանցնի:

Ըմպելիքի սաստկությունից Օհանի աչքերը լցվեցան արտասուքով: Նա ապուխտը ծամում էր, բայց դառնությունը չէր անցնում:

— Առաջին անգամին այդպես է լինում,— նկատեց Իշխանապետյանցը,— երբ կսովորես, մեղրի պես քաղցր կլինի: Առաջ իմ բերանն էլ այրում էր, բայց հիմա ոչինչ չեմ զգում: Եթե ամեն օր չմտնեմ այստեղ և մի քանի բաժակ չխմեմ, ինձ այնպես կը թվի, որ այն օրն ինձ համար խավար է: Բայց երբ խմում եմ, կարծես ամբողջ օրն ուրախության ծովի մեջ լողում եմ:

Օհանը ոչինչ չպատասխանեց, նա շարունակում էր ծամել ապուխտի մնացած մասը: Իշխանապետյանցն առաջարկեց նրան մի պարարտ, կարմիր խեցգետին: Օհանը զզվանքով հրաժարվեցավ:

— Ես այդ բանը չեմ ուտի,— ասաց նա:

— Ինչու՞, շատ լավ համ ունի,— աշխատում էր համոզել Իշխանապետյանցը:

— Մեր կողմերում չեն ուտում:

— Ձուկ ուտո՞ւմ են:

— Ուտում են:

— Ուրեմն դու այդ ձկներից կեր, շատ լավ պատրաստված են: Այստեղ ձուկը լավ են պատրաստում:

— Այստեղ մածուն չէ՞ լինում:

— Չէ լինում:

— Թող ինձ մի կտոր պանիր տան, ես պանիրն ավելի եմ սիրում:

Իշխանապետյանցը հրամայեց, որ պանիր տան: Մշեցի պատանին սիրում էր Մուշի պարզ կերակուրները: Նա սովորած չէր այս տեսակ համադամ խորտիկների:

Իշխանապետյանցը լցրեց երկրորդ բաժակը, նույնպես կիսատ, և խորհուրդ տվեց, որ ջուրը փոքր-ինչ ավել խառնե: Օհանը կատարեց նրա պատվերը, և իրավ, նա զգաց, «որ պատմական խմիչքը» այս անգամին այնքան անախորժ չէր, որպես սկզբում:

— Տեսա՞ր,— ասաց վանեցին ուրախանալով,— ես սուտ չէի ասում:

Հետո ոլորեց նա երկու գլանակ, մեկը տվեց Օհանին, ասելով, որ խմելուց հետո ծուխն ավելի զվարճություն է պատճառում: Օհանն սպասում էր, որ տեսնե, թե յուր հյուրասիրողն ինչպես է ծխում, որ ինքն էլ հետևե նրա օրինակին, որպեսզի անշնորհք և անքաղաքավարի չցույց տա իրան:

Գինետունը հետզհետե լցվում էր և խառնաշփոթ բազմության աղմուկն ավելի անտանելի էր դառնում: Ամեն լեզվով երգում էին և ամեն լեզվով խոսում էին: Այդ փոքրիկ նկուղը ներկայացնում էր ամբողջ Ստամբոլը յուր բազմազան և բազմասեռ բնակիչներով:

Հաջի աղան, որպես յուր նկուղի սուլթանը, երկար գոգնոցն առջևը կապած, նախշուն բազուկները մինչև արմունկները ծալած և անվերջ ժպիտը երեսի կնճիռների մեջ խաղացնելով, մոտենում էր այս և այն սեղանին. նա ամենի համար պատրաստի խոսքեր ուներ ծիծաղացնելու և ամենի սրտերը շահելու: Նրա երկար քիթը, որ բավական ընդարձակ տեղ էր բռնել երեսի վրա, այն տպավորությունն էր գործում, որ իսկույն մտածել էր տալիս, եթե այդ ահարկու քիթը փոքր-ինչ կարճ լիներ, նրա դեմքն ի՞նչի նման կը լիներ:

Վերջապես մոտեցավ նա այն սեղանին, ուր նստած էին Օհանը և Իշխանապետյանցը: Մի խորհրդավոր ակնարկ ձգեց Օհանի վրա, նայեց վանեցու երեսին և հարցական կերպով գլուխը շարժելով, անցավ: Վանեցին պատասխանեց նրան նույն շարժումներով: Օհանը չնկատեց երկու հայրենակիցների լուռ նշանախոսությունը:

Օհանը երրորդ, չորրորդ և հինգերորդ բաժակը դատարկեց ավելի ախորժակով: Այժմ նա ուրախ էր, խոսում էր, ծիծաղում էր, և նրա շառագունած դեմքը փայլում էր մի առանձին զվարթությամբ: Նա մինչև անգամ փորձեց ուտելու խեցգետինը, որից սկզբում զզվանքով հրաժարվեցավ:

Այդ միջոցին Իշխանապետյանցը հարցրեց նրանից.

— Ինչո՞վ ես պարապում:

— Մինչև այս օրերը չոփչիություն էի անում,— պատասխանեց Օհանը,— այժմ անգործ եմ:

Օհանի պատասխանը կամ սաստիկ զարմացք պատճառեց վանեցուն, կամ նա իրան զարմացած ձևացնելով, տեղից վեր թռավ, աչքերը զլեց և ուղիղ նայելով Օհանի երեսին, բացականչեց.

— Տե՜ր աստված... չոփչիությո՞ւն... ամոթ չէ՞... քեզ նման տղան չոփչիությո՞ւն կանե...

— Ապա ի՞նչ պիտի անեի,— հարցրեց Օհանը:

Վանեցին նստեց, ասելով.

— Եթե ես քո հասակը, քո մանկությունը և քո շնորհքն ունենայի, ամսական տասը ոսկուն փող չէի ասի:

— Տասը ոսկի՜,— ծիծաղելով կրկնեց Օհանը,— ո՞վ կտա ինձ տասը ոսկի:

— Տասնուհինգ էլ կուտան,— պնդեց վանեցին համոզիչ ձայնով:— Նայի՜ր այն պատանուն, որ այնտեղ այն մարդկանց հետ նստած է, նա տասնից ավելի է ստանում: Տե՜ս, ինչպե՞ս լավ է հագնված: Փաշաների որդիներն անգամ այդպես չեն հագնվում: Տե՜ս նրա մատանին, նրա ժամացույցի ոսկի շղթան, գիտե՞ս որքան արժեք ունեն: Այդ պատանին երբ նոր եկավ Վանից, բոբիկ ոտներով էր ման գալիս, հագին շապիկ չուներ, հիմա ինքն իրան չէ ճանաչում:

Օհանը նայեց դեպի այն կողմը, տեսավ պատանուն, որ յուր վրա էր դարձրել բոլորի ուշադրությունը և նստած էր մի սեղանի մոտ, որի վրա դրած էին ամենանուրբ ըմպելիքներ և ամենաթանկագին ճաշելիքներ: Նա զարմանալով հարցրեց.

— Ի՞նչ գործ է կատարում:

— Ոչինչ գործ,— ասաց վանեցին, ուսերը շարժելով,— միայն չիբուխ է լցնում:

— Ո՞ւմ համար:

— Մի հարուստ փաշայի համար: Նրան ես տեղավորեցի փաշայի մոտ: Այդպիսի տեղեր որոնողները միշտ ինձ են դիմում: Ես առաջին կարգի թելլալ եմ, բոլոր մեծամեծների հետ ծանոթություն ունեմ, և նրանք ինձ են խնդրում, երբ սպասավորի պետք ունեն:

Օհանն առաջին անգամ էր լսում մի այդպիսի սպասավորություն, որ չիբուխ լցնելու համար ամսական տասնուհինգ ոսկի են վճարում: Նա չհավատաց և մտածում էր, որ առաջին կարգի թելլալը մաստիքայի ջերմության մեջ չափազանցություններ է անում:

Այդ միջոցին նրանց խոսակցության առարկա եղող պատանին նկատեց առաջին կարգի թելլալին, և պճնասեր սպասավորների հատուկ հպարտությամբ մոտեցավ հեռվից ձայն տալով.

— Բարո՜վ, Մարտիրոս աղա, դո՞ւ էլ այստեղ ես, երբ եկար, ինչո՞ւ ես այստեղ նստած, ինչո՞ւ չես գալիս մեզ մոտ:

Նա ձեռքը մեկնեց վանեցուն և վերևից նայեց Օհանի վրա:

— Դա ո՞վ է,— հարցրեց նա, մի առանձին արհամարհանքով ձեռքը տանելով դեպի Օհանը:

— Իմ լավ բարեկամս է, Պետրոս աղա, Մուշից նոր է եկել,— պատասխանեց Մարտիրոս աղան:

«Այստեղ ամենքը աղաներ են», մտածեց Օհանը գլուխը շարժելով.— «փաշայի չիբուխ լցնողն էլ աղա է, ծառաների թելլալն էլ աղա է, գինետան պահողն էլ աղա է...»:

— Նստի՛ր,— խնդրեց թելլալը, պատանու փեշից քաշելով:

— Չեմ կարող, ընկերներս այնտեղ սպասում են ինձ,— ասաց նա կոտրատվելով.— դու եկ մեզ մոտ: Այնտեղ ամեն բան ունենք:

— Բայց ես իմ հյուրին միայնակ չեմ կարող թողնել:

— Թող քո հյուրն էլ գա: Գնանք, մշեցի՛,— դարձավ նա դեպի Օհանը, մի առանձին եղանակով շեշտելով «մշեցի» բառը:

Օհանը վրդովվեցավ և թեք կերպով նայելով նրա երեսին, ասաց.

— Դու չգիտե՞ս, որ մշեցու ու վանեցու ջուրը մեկ առվակով չէ գնում...

— Դու հիմա էլ վանեցու մոտ ես նստած:

— Այդ իմ մեղքիցն է,— ասաց Օհանը զայրացած ձայնով, վեր կացավ և կամենում էր հեռանալ:— Եթե դրսումը լիներ, ես քո կողքերը կջարդեի,— ավելացրեց նա, սպառնական հայացք ձգելով վանեցի պատանու երեսին:

Թելլալը, որ ամենևին չէր սպասում Օհանից այս աստիճան դյուրագրգռություն, բռնեց նրան, աղաչելով.

— Նա հանաք արեց, ինչո՞ւ ես այդպես բարկանում. նա լավ տղա է, լավ սիրտ ունի, իզուր ես այդպես բարկանում:

Այդ խոսքերով հազիվ կարողացավ Օհանին յուր տեղը նստացնել, որ բարկությունից ամբողջ մարմնով դողում էր:

Վանեցի պատանին իրան շատ անախորժ դրության մեջ մտավ. նա ամաչում էր հեռանալ առանց բացատրություն պահանջելու կոպիտ մշեցուց և միևնույն ժամանակ վախենում էր կրկին խոսացնել նրան: Թելլալն ազատեց նրան այդ դրությունից, բռնեց ձեռքիցը, տարավ յուր ընկերների մոտ և այնտեղ մի քանի բաժակ վրա-վրա դատարկելուց հետո, կրկին վերադարձավ Օհանի մոտ.

— Իզուր բարկացար,— դարձյալ աշխատում էր հանգստացնել Օհանին.— նա շատ օրինավոր տղա է. ձեռքը բաց, սիրտը բաց, գլուխն ուզելու լինես, չի խնայի, փողն ու հողը նրա մոտ մեկ գին ունեն: Ես գիտեմ, որ այնտեղ նստողների բոլոր ծախքը ինքը կվճարե: Նա միայն ցանկանում էր հյուրասիրել քեզ և ավելի ոչինչ:

— Բայց մի կտոր հաց տալու համար մարդկանց չեն վիրավորում,— ասաց Օհանը:— Նա պետք է գիտենա, թե ինքն ի՞նչ է և ո՞ւմ հետ է խոսում: Իմ հայրը շատ այդպիսի ծառաներ է ունեցել...

Նրա սրտում բացվեցան հին վերքերը, մտաբերեց հայրենական տունը, լի ծառաներով և լի մշակներով, մտաբերեց, ամեն առավոտ որքան կանայք այդ տան թոնրում հաց էին թխում, և ո՞րքան մարդիկ կերակրվում էին այդ հացով, մտաբերեց անասունների բազմությունը, որ ամեն առավոտ քշում էին յուր հոր փարախներից դեպի արոտ, յուղն ու կաթը, թանն ու մածունը ջրի նման հոսում էր, և հարյուրավոր աղքատներ կերակրվում էին այդ տան բարիքներով... Բոլո՞ր կորավ, բոլո՞ր անհետացավ, և դժբախտ ընտանիքի դժբախտ որդու սրտում մնացին դառն հիշողություններ միայն... Նա ձեռքը տարավ դեպի ճակատը, արմունկը նեցուկ տվեց սեղանին, գլուխը խոնարհեցրեց, և երկար գտնվում էր մի տեսակ տխուր ինքնամոռացության մեջ:

Թելլալը նկատեց Օհանի թախծությունը, լցրեց բաժակները և մեկը դնելով նրա առջև, ասաց.

— Խմի՛ր, սիրտդ ուրախ պահիր, աստված ողորմած է, սև օրը տեղի է տալիս լույս օրին, և մթին խավարից հետո ծագում է պայծառ արեգակը... Այս աշխարհում ամեն ինչ փոփոխական է... Դժբախտությունն ու բախտավորությունն անդադար հաջորդում են միմյանց, որպես երկու հարազատ ժառանգներ... Մի օր քեզ համար էլ բաց կլինի բախտավորության դուռը, և այդ օրը մոտ է...

Օհանը վեր առեց բաժակը և այս անգամ, առանց ջուր խառնելու, ամբողջապես դատարկեց:

— Լսի՛ր, Օհան,— առաջ տարավ թելլալը, որի լեզուն, գլուխը տաքանալուց հետո, մի առանձին ճարտասանական ուժ էր ստացել:— Տեսնում ես ինձ, կյանքս մոտեցել է յուր վախճանին, մազերս արդեն սկսել են ճերմակել. այսուհետև ինձ մնում է միայն իմ հոգու համար մտածել: Ես այժմ ուրիշների բախտավորության մեջն եմ գտնում թե իմ բախտավորությունը և թե իմ ուրախությունը: Այդ պատճառով նպատակ եմ դրել ինձ, որքան կարող եմ, բարիք գործեմ և ուրիշների բախտավորության համար աշխատեմ: Այդ իմ մխիթարությունն է: Հենց առաջին անգամ, երբ տեսա քեզ սափրիչի խանութում, սիրտս ասաց ինձ՝ «այդ տղան խեղճ է, անփորձ է, ընկել է Ստամբոլի փոթորիկների մեջ, դրան պետք է օգնել, պետք է շահավետ վաստակի ճանապարհ

ցույց տալ...»: Այդ էր պատճառը, որ ես դուրս եկա քո հետևից և քեզ բերեցի այստեղ, որ փոքր-ինչ երկար խոսեմ քեզ հետ: Վկա է աստված, որ բացի լավությունից, ես մի այլ նպատակ չեմ ունեցել...

Հաջի աղան յուր երևելի քթով կրկին անցավ նրանց մոտով, ընդհատեց խոսակցությունը: Սպասավորներն զբաղված լինելով, նա լուսավորում էր ճրագները, որոնք տիրող օդի թանձրությունից հոգեվարքի մեջ հազիվհազ պլպլում էին:

Օհանը ոչինչ չէր խոսում, նա լուռ լսում էր, անհամբերությամբ սպասելով, թե ինչով կվերջացնե յուր սեղանակիցը այդ երկար քարոզները: Նա շարունակեց.

— Դու արդեն գիտես, Օհան, որ ես այս քաղաքի առաջին կարգի թելլալն եմ: Շատ նշանավոր գործեր իմ ձեռքով են անց կացել, և շատերը ևս անցնելու են... Ես իմ հոգու համար, միշտ աշխատել եմ՝ Հայաստանից եկած անփորձ պատանիների համար գործ գտնել և նրանց տեղավորել արդյունավոր տեղերում: Մի շատ լավ տեղ ևս քեզ համար ի նկատի ունեմ: Երդվում եմ բոլոր սրբերի անունով, որ մի կամ երկու ամիս չի անցնի, դու այնքան կը բարձրանաս, որ այդ տղան, որ մի քանի րոպե առաջ վիրավորեց քեզ, համարձակություն չի ունենա քո մոտ բերանը բաց անելու:

— Ի՞նչ տեղ,— հարցրեց Օհանը, գլուխը վեր բարձրացնելով:

— Մի ամենափառավոր տեղ, մի ամենահարուստ փաշայի տանը...

— Եթե աշխարհի բոլոր հարստությունն ինձ տալու լինեն, դարձյալ ես թուրքի տան սպասավոր չեմ դառնա,— նրա խոսքը կտրեց Օհանը:

Թելլալը՝ յուր բոլոր համոզական քարոզներից հետո չէր սպասում մի այսպիսի պատասխան մշեցի «չոփչիի» կողմից, որին բոլորովին միամիտ էր կարծում: Բայց նա չգիտեր, որ այդ անփորձ մշեցին, յուր բոլոր պարզությամբ հանդերձ, ուներ մի մաքուր և արթուն զգացմունք, որ խորշիլ գիտեր այն ամեն բանից, ինչ որ անվայել է, ինչ որ արատավորել կարող էր նրա ինքնասիրությանը:

Օհանն այս անգամ յուր ձեռքով ածեց յուր բաժակը և խմելուց հետո հարցրեց.

— Ես չեմ հասկանում, այստեղ ի՞նչ մի գաղտնիք կա, որ թուրք փաշաները հայ սպասավոր ունենալու համար լավ ամսականներ են տալիս:

— Միայն հայերի հավատարմության համար, ուրիշ ոչ մի գաղտնիք չկա,— պատասխանեց թելլալը, պատվիրելով, որ մի նոր շիշ ևս բերեն, որովհետև առաջինն արդեն սպառվել էր:— Ա՛յ, ասեմ քեզ. դու գիտես, որ փաշաները կանանոց ունեն, այնտեղ ամեն մարդու ներս չեն թողնում, բայց հայերի վրա մեծ վստահություն ունեն, փորձով համոզվել են, որ հայերն իրանց տերերին անհավատարմություն չեն անի: Այդ է պատճառը, որ այս քաղաքի բոլոր «էյվազները»[5] հայեր են, մանավանդ վանեցի հայեր:

— Լա՛վ. այդ լիրբը,— նա ձեռքը տարավ դեպի իրան վշտացնող պատանին,— որ այնտեղ մի խումբ սրիկաներով շրջապատված քեֆ է անում, ինչո՞վ է լավ թուրքից: Չէ՞ որ նա էլ էյվազ է և վանեցի...

— Ես քեզ ասեցի, որ նա այնքան էլ վատ տղա չէ, որպես դա կարծում ես:

---

[5] *Էյվազ* կոչվում են նշանավոր տների պատվավոր սպասավորները: Նրանց թիվը յուրաքանչյուր տան մեջ մեկից ավելի չէ լինում:

Ծառան դրեց սեղանի վրա երկրորդ շիշը. բայց Օհանը վեր կացավ և պատրաստվում էր դուրս գալ: Նա արդեն զգում էր, որ այդ մռայլ, ամեն ստահակներով լի նկուղը յուր տեղը չէ:

— Նստի՛ր, այդ շիշն էլ խմենք, հետո կգնանք,— թախանձում էր թեյլալը:

— Չեմ կարող, գլուխս պտտվում է...

— Նստի՛ր, մի քանի րոպե ևս... հիմա կսկսեն ածել, երգել...

— Ասում եմ, որ գլուխս պտտվում է...

Օհանը դողդոջուն քայլերով դիմեց նկուղի դուռը: Առաջին անգամն էր, որ նրա ամուր ոտներն իրան չէին խոնարհվում...

Թեյլալը նույնպես դուրս եկավ նրա հետևից:

ԺԳ

Համարյա մեկ տարի անցել էր այդ օրից:

Ուրբաթ էր,— մահմեդականների հանգստի և զվարճության օրը: Բայց այս առավոտ Բոսֆորի ափերի մոտ կանգնած ծովեզրյա ապարանքներից մեկը չէր ներկայացնում այն սովորական ցնծություններով լի զվարթությունը, որ հատուկ է տոն օրերին: Ամբողջ ամրոցի մեջ տիրում էր մի տեսակ վիատիչ լռություն խորին անշարժության հետ, որ այնպիսի տպավորություն էր գործում, կարծես այդ սքանչելի կերտվածքը յուր փառահեղության մեջ հոգնել էր, ձանձրացել էր միշտ ուրախ լինելուց:

Արեգակը վաղուց արդեն սկսել էր շողշողալ ապարանքի մինարեթների կապտագույն մոդայիկների վրա, բայց դեռ ոչ ոք չէր երևում, ոչ ոք չէր շարժվում: Այնպես էր թվում, որ այդ կախարդված շինվածքը յուր բոլոր բնակիչներով պղնձացած լիներ: Կանանոցի բակում աննպատակ կերպով շրջում էին երկու սիրամարգներ միայն և իրանց երկար ագիները քարշ տալով, ավելում էին մարմարյա սալահատակը: Երբեմն յուր նախշուն, գունավոր զգեստով հայտնվում էր սև խափշիկը, լուռ մոտենում էր այս ու այն փակված դռանը, ինքն իրան հարց տալով՝ «արդյոք չե՞ն կանչում ինձ...»:

Արույրյա, կանաչագույն վանդակապատը բաժանում էր գեղեցիկ պարտեզը կանանոցի բակից: Այստեղ աշնան սկզբում ծաղկում էր վերջին գարունը: Այստեղ զառամյալ կյանքն սկսել էր կրկին մանկանալ: Վարդերը նորից բացվել էին և սպիտակ հասմիկը լցրել էր օդը յուր նուրբ անուշահոտությամբ:

Ոլորապտույտ ճեմելիքով, որի երկու կողմերը ցանկապատած էին խուզած մրտենիներով, անցնում էր մի պատանի:

Նա բավական վաղ մտել էր այդ պարտեզը, լսելու թռչունների առավոտյան տաղերգը: Դանդաղ քայլերով ընթանում էր նա, երբեմն կանգ էր առնում մտախոհ կերպով նայում էր այս ու այն ծառի գեղեցկության վրա և կարծես ինքն իրան զարմանում էր. «այդ ո՛րտեղ եմ...»:

Այդ զարմանքը, այդ խորին հիացումը նույն բնավորությունն ուներ, որպես մի դժբախտ հանդիպում է վհուկների թագուհուն, որ խոստանում է նրան փառք և երջանկություն՝ հպեցնում է նրան կախարդական գավազանը, դժբախտը

վերասլանում է մի անիմանալի հափշտակության մեջ և մի քանի վայրկյանից հետո աչքերը բաց է անում, իրան գտնում է փերիների աշխարհում, շրջապատված հավերժական երանությամբ...

Նույն դյութական ինքնամոռացության մեջ էր գտնվում պատանին, նույն զգացմունքները սքանչացնում էին նրան:

Գեղեցիկ էր նա և շնորհալի, և ավելի գեղեցիկ էր երևում նա՝ իրան միայն պատշաճավոր հագուստի մեջ: Բնությունը ոչ մի թերություն չէր թողել, որքան կարելի է, վայելուչ կերպով կազմելու կյանքով լի մանկության այդ դեռահաս տիպարը:

Ո՞վ կարող էր նրա մեջ ճանաչել Օհանին: Ո՞վ կարող էր նրա մեջ ճանաչել կոշտ, կոպիտ «չոփչիին», որ մի ժամանակ Ղալաթիայի փողոցներում, աղբի կթոցը շալակին, ողորմելի կերպով թափառում էր:

Ամեն ինչ փոխվել էր նրա մեջ: Նրանում չէր մնացել վաղեմի գռեհկության ամենափոքր նշույլն անգամ: Ամեն ինչ նոր կերպարանք էր ստացել, դեմքն ավելի գրավիչ էր դարձել, ձայնն ավելի փափկացել էր, շարժմունքն ու ձևերն ավելի նրբացել էին, ամեն ինչ փոխվել էր, անփոփոխ էր մնացել միայն նրա սիրտը յուր մաքուր պարզության մեջ:

Սափրիչի խանութում ծանոթացած վանեցին Օհանին բաց չը թողեց: Որքան Օհանը խորշում էր, խույս էր տալիս նրանից, նա այնքան ավելի աշխատում էր կաշկանդել անփորձ պատանուն լուր ճանկերի մեջ, մինչև հաջողվեցավ նրան՝ համոզել Օհանին, որ մի հարուստ փաշայի տան մեջ ծառայության մտնե: Այժմ Օհանն այդ փառավոր ապարանքի «*էյվազն*»— սենեկապանն էր:

Երկու առավելություններ նպաստեցին նրան այդ պաշտոնին հասնել. առաջինը՝ յուր վայելչակազմ հասակը, որ անհրաժեշտ պայմաններից մեկն էր մի մեծ իշխանական տան ծառայության համար, երկրորդը՝ յուր հայ լինելը, որ հավատարմության մի հաստատ գրավական էր թուրք ընտանիքի մեջ մտնելու համար:

Ծերունի փաշան սիրում էր յուր ընտանեկան կյանքում շրջապատել իրան գեղեցիկ առարկաներով: Դրանցից մեկը նրա սենեկապանն էր: Իսկ հայ սենեկապանը Պոլսում ընդհանուր վստահություն է վայելում: Նրան հավատում են ամեն բան, մինչև անգամ կանանոցը:

Իսկ Օհանը յուր ազնիվ բնավորությամբ ավելի սիրելի դարձավ ծերունի փաշային, որ նրան յուր զավակներից չէր բաժանում և ամեն ինչ հանձնել էր նրա ձեռքը:

Մտնելով այդ ծառայության մեջ, Օհանը յուր հայրենակից Ոսկանի աչքին այլևս չերևաց: Սկզբում մի անգամ միայն տեսավ նրան, և երբ յուր նպատակը հայտնեց, սաստիկ հանդիմանություն ստացավ: Ոսկանն ատում էր այդ ծառայությունը, ասում էր տղամարդի գործ չէ: Մշեցին, նրա կարծիքով, կամ պետք է համալ լիներ, կամ հրդեհաշեջ և կամ նավաստի:

Օհանն ինքը ևս զգում էր այդ և յուր վիճակից բոլորովին գոհ չէր՝ Նա զգում էր, որ յուր տեղումը չէ: Բայց մի անգամ ընկղմվելով մահմեդական ընտանիքի խորության մեջ, այլևս դուրս գալ չէր կարողանում:

Ծերունի փաշայի ընտանիքը շատ մեծ չէր: Նա ուներ մի քանի կանայք, բայց փոքր թվով զավակներ: Նրանց մեջ բոլորից չափահասը մեծ աղջիկն էր, որ այդ ապարանքումն էր բնակվում:

Մի ամիս հազիվ կլիներ, որ փաշան վերադարձել էր Եգիպտոսից, ուր նա գնացած էր մի շատ կարևոր պետական պաշտոնով: Քաղաքում ուներ նա մի քանի տներ, բայց վերադառնալուց հետո, ընտրեց այդ ապարանքը՝ Բոսֆորի ափերի աշնանային գեղեցկությունը վայելելու համար:

Օրը ուրբաթ լինելով, փաշան չէր գնացել Բարձր Դուռը: Վաղ առավոտյան դուրս եկավ նա, մեչիդ պիտի գնար, իսկ այնտեղից՝ մի բարեկամի մոտ ճաշելու: Այդ էր պատճառը, որ Օհանն այսօր ազատ էր:

Պարտեզում երկար, զբոսնելուց հետո Օհանը ձանձրացավ, գնաց նստեց մարմարյա շատրվանի մոտ, որ հովանավորված էր մշտականաչ ծառերով: Ջուրը դուրս էր ցայտում կիսամերկ հյուրի բերանից և մարգարտյա կաթիլներով ցողվում էր ավազանի մեջ:

Օհանը մի առանձին հրճվանքով նայում էր ավազանի մեջ, որի պարզ ու վճիտ հայելին երբեմն թրթռում էր, երբ ոսկեգույն և արծաթագույն ձկնիկները հանկարծ հայտնվում էին մակերևույթի վրա, զանազան զվարճալի պտույտներ էին գործում և կրկին անհայտանում էին: Նա պահանջեց պարտիզպանից մի կտոր հաց, մանրեց և փշրանքներն սկսեց փոքր առ փոքր ձգել ավազանի մեջ: Ձկնիկներն ավելի ուրախացան, սկսեցին շուտ-շուտ հայտնվել ջրի երեսին Չարաճճիները խլում էին հացի բեկորները և իսկույն խորասուզվում էին դեպի հատակը: Այդ Օհանին մեծ զվարճություն էր պատճառում:

Այդ խաղով զբաղված էր Օհանը և ամենևին չէր նկատում, որ մի նազելի կին հայտնվեցավ հակառակ ճեմելիքի ծայրում և տեսնելով նրան շատրվանի մոտ նստած, կամաց-կամաց մոտեցավ, կանգնեց նրա հետևում: Մի քանի րոպե մանկահասակ կինը խորին տարփանքով նայում էր պատանու վրա, մինչև նա զգաց, որ երկու փափուկ ձեռքեր դրվեցան յուր ուսերի վրա և լսեց այս խոսքերը.

— Այդ ի՞նչ ես անում... երեխայությունդ մի՛տդ ես բերել...

Օհանը ետ նայեց և իսկույն կարմրելով ոտքի ելավ:

— Ա՛խ, տիկին, դո՛ւք եք...— ձայն տվեց նա և մնաց շփոթված:

Տիկինը նստեց նույն տեղում, որտեղ նստած էր Օհանը: Վաղորդյան զովությունը նրա պայծառ դեմքին մի առանձին զվարթություն էր բաշխել: Կրծքի վրա խրած ուներ մի խոշոր մուգ դեղնագույն թեյի վարդ:

Օհանը դեռ կանգնած ոտքի վրա՝ և՛ սպասավորի խոնարհությամբ և՛ մի այլ զգացմունքով, որ նրան անհասկանալի էր:

— Նստի՛ր,— ասաց նրան տիկինը, ցույց տալով մերձակա նստարանը:

Օհանը չհամարձակվեցավ նստել:

— Այդպես էլ լավ է, տիկին,— պատասխանեց նա և մնաց ոտքի վրա:

Տիկինը փաշայի վերջին կանանցից մեկն էր, որի հետ պսակված էր արդեն խորին ծերության հասակում: Այդպիսի դեռահաս կրակով լի կանանց արևելքում ծերունիները գործ են ածում որպես ջերմություն՝ իրանք սառած ոսկորները տաքացնելու համար:

Նա վեր առավ հացի մնացած պատառը, սկսեց ինքը ևս Օհանի նման մանրել և ձգել ավազանի մեջ:

— Դուք ինձ ծաղրում էիք, տիկին,— ժպտելով նկատեց Օհանը:

— Ես ուզում եմ իմ բախտը փորձել,— ասաց նա և շարունակեց ձգել փշրանքները:

— Ինչպե՞ս փորձել— հարցրեց Օհանը:

— Սպասիր, հիմա կտեսնես...

Նա փոքր առ փոքր ձգում էր փշրանքները, երբեմն հայտնվում արծաթագույն և երկու ոսկեգույն, երբեմն մի քանի ոսկեգույն միասին, իսկ երբեմն մի արծաթագույն առանձին: Այդ հաշիվները պահում էր նա մատների վրա, և հետզհետե նրա սիրուն դեմքն ավելի ուրախ արտահայտություն էր ստանում:

Երբ վերջացրեց, հացի պատառը տվեց Օհանին, ասելով...

— Հիմա դու փորձիր...

Այդ միջոցին Օհանը, մոռանալով իրան, նստեց տիկնոջ մոտ:

— Ես ոչինչ չեմ հասկանում,— ասաց նա երեխայական պարզամտությամբ,— ինչպե՞ս փորձեմ:

— Ես հասկանում եմ... Դու միայն փշրանքները ձգիր և սպասիր... Երբ ձկները դուրս կգան, կխլեն և կանհայտանան, նորից ձգիր... Ես հաշիվը կպահեմ...

Օհանը, ստացած հրահանգների համեմատ, սկսեց նետել փշրանքները: Տիկինը լուռ նայում էր ավագանի մեջ և ամեն անգամ, երբ ձկները հայտնվում էին, ձեռքի գեղեցիկ մատներից մի քանիսը կամ խփում էր և կամ բաց անում: Երբ Օհանը տակավին շարունակում էր, նա ձայն տվեց.

— Բավական է...

Օհանը, յուր գործողությամբ սաստիկ ուրախացած, դարձավ դեպի տիկինը, հարցնելով.

— Հիմա բացատրեցեք, լա՞վ դուրս եկավ, թե վա՞տ:

— Չեմ ասի,— պատասխանեց տիկինը և միևնույն ժամանակ նրա խոշոր աչքերում փայլեց մի կրակ, որ նման էր ըղձալի հույսի աղոտ նշույլներին:

— Դուք խոստացաք ասել,— խնդրում էր պատանին թախանձելով և ամենևին չէր զգում, թե ինքն ո՛ւմ մոտ էր նստած և ո՛ւմ

Գուցե տիկինը մի բան կասեր, եթե այդ միջոցին բակի փոքրիկ շունը սաստիկ աղմուկ չբարձրացներ, որ նրանց ուշադրությունը դարձրեց դեպի այն կողմը:

Օհանը վեր կացավ:

Պարտեզից նկատեցին, որ կանանոցի սենյակներից դուրս եկավ մի կին, և նրա հետևից՝ մի մարդ, որ շալակին կրած ուներ մի ահագին արկղ:

— Այդ այն փերեզակ կինն է,— ասաց Օհանը:

— Այո՛, նա է,— ասաց տիկինը:

— Օրիորդ Զահրայի սենյակից է դուրս գալիս:

— Ո՛րքան շատ բաներ է գնում Զահրան— ասաց տիկինը մի այնպիսի ձայնով, որի մեջ լսվում էր և՛ զարմացք, և՛ հեգնություն:— Ամիս չէ անցնում, որ այդ կինը մի քանի անգամ նրա մոտ չմտներ:

Օհանը ոչինչ չպատասխանեց:

— Կանչի՛ր նրան այստեղ,— հրամայեց տիկինը:

Մարդ տեսածին պես մահմեդական տիկինները կմտնեն իրանց բարձր դերի մեջ, իսկ մարդ չեղած ժամանակ սպասավորների հետ ամեն տեսակ հանաքներ կանեն: Օհանը վազեց նրան կանչելու:

Նրա հեռանալուց հետո մանկահասակ տիկնոջ դեմքը մռայլվեցավ: «Ե՛վ լա՛վ, և վա՛տ... այդ ի՞նչ է նշանակում... Ես ձգելու միջոցին լավ եկավ... իսկ նրա ձգելու միջոցին՝ վատ...»: Նա մտաբերեց ավազանի մեջ կատարված բախտահմայությունը:

Փերեզակ կինը Օհանի առաջնորդությամբ մտավ պարտեզ: Դեռ չհասած, հեռվից սկսեց խոսել.

— Փա՛ռք աստուծո, Ֆաթիմա խաթունն էլ բարեհաճում է աղքատ մանրավաճառից մի բան գնել... Ինչպե՞ս եք, նազելի տիկին, լա՞վ եք, առո՛ղջ եք... Գոհություն աստուծո, որ ձեզ լավ եմ տեսնում... Տացե աստված, որ միշտ այդպես ուրախ և բախտավոր լինեք... Մենք էլ ձեզանով ենք ապրում... Երբ ձեր սիրտն ուրախ է, մի բան կգնեք, մեզ էլ կուրախացնեք... Տխուրներից սատանան էլ է փախչում...

Շատախոս մանրավաճառը յուր օրհնությունների, ողջագուրանքի հեղեղը անտարակույս, դեռևս երկար պիտի շարունակեր, եթե տիկինը նրան չկանգնեցներ, ասելով.

— Բե՛ր տեսնենք, ի՞նչ ունես:

— Ամեն բան ունեմ, նազելի տիկին, ինչ որ ձեր սիրտը ցանկանում է:

Նա հրամայեց յուր բեռնակրին արկղը ցած դնել և մինը մյուսի հետևից սկսեց ցույց տալ զանազան իրեղեններ: Տիկինը ոչ այնքան գնելու նպատակով, որքան հետաքրքրության համար, զննում էր այդ գույնզգույն իրեղենները: Օհանը, մի կողմում կանգնած, ուշադրությամբ նայում էր:

— Օրիորդ Զահրան մի բան գնե՞ց,— հարցրեց տիկինը:

— Ա՛խ, ի՞նչ եք հրամայում, նազելի տիկին,— պատասխանեց նա վշտալի ձայնով,— մի՞թե կարելի է մի բան հավանել տալ օրիորդ Զահրային: Նա միայն չարչարել գիտե: Պատվիրել էր շղարշ երեսի քողի համար:— «Լա՛վը, լա՛վը, ամենաընտիրը կբերես, հրամայեց ինձ,— և շուտ կբերես, առավոտյան շատ վաղ, որովհետև ուրիշ տեղ հյուր եմ գնալու...»:— Ամբողջ քաղաքը ման եմ եկել, ամենալավ տեսակները բերել եմ, դարձյալ չէ հավանում, ասում է.— «Այդ ի՞նչ է, դու ինձ խայտառակե՞լ ես ուզում, ինչպե՞ս կարելի է դրանով դուրս գալ...»: Ի՞նչ պիտի անեմ, ջահել աղջիկ է, սիրտը նազուք է, խո չեմ կարող սիրտը կոտրել: Հիմա պետք է գնամ ուրիշ տեսակները բերեմ և նրա ցանկությունը գոհացնեմ:

Տիկինը շարունակում էր զննել իրեղենները:

— Նայեցեք այդ ֆերուզային, նազելի տիկին, նայեցեք գույնը, փայլը, գեղեցկությունը,— հրաշալի՞ բան է: Իսկական Խորասանի է: Ուրիշները լինում են, բայց ներկած են լինում, սկսում է շուտով գույնը փոխել: Բայց դա հավիտյան այդպես կմնա: Մի դիպվածով ես ձեռք բերի այդ հազվագույտ քարը: Սուլթանի պալատում անգամ դրա հատը չի գտնվի...

— Իմն ինչո՞վ է վատ դրանից,— ընդհատեց տիկինը, ցույց տալով յուր մատի գեղեցիկ ֆերուզան:

— Ա՛յ, ասեմ,— պատասխանեց շատախոսը յուր մատանին բռնեցնելով տիկնոջ մատանիի հետ,— ձերը, նազելի տիկին, ավելի փոքր է, իսկ այդ ավելի խոշոր է, ձերը, նազելի տիկին, ավելի բաց գույն ունի, իսկ դա մանիշակագույն է, ձերը, նազելի տիկին...

Տիկինը դարձյալ ընդհատեց նրան, ծիծաղելով.

— Բայց դու այն չես ասում, որ քոնն ավելի տափակ ձև ունի, իսկ իմը գմբեթաձև է: Ֆերուզայի այդ ձևն ամենաընտիրն է համարվում և շատ հազվագյուտ է լինում:

— Դա էլ նույն ձևը կստանա, նազելի տիկին: Զարմանում եմ, որ դուք չգիտեք, որ ֆերուզան աճում է, կաճի և նույն ձևը կստանա:

Տիկինն առաջինն անգամն էր լսում այդ: Նա յուր ֆերուզան տասն տարուց ավել կրում էր մատին, բայց աճելության ամենափոքր նշույլ անգամ նրա մեջ չէր նկատել: Ոչ սակավ զարմացավ և Օհանը, որ թույլ տվեց իրան այս նկատողությունն անելու,

— Քարն ինչպե՞ս կարող է աճել:

— Կարող է աճել, գեղեցիկ պատանի,— պատասխանեց նա ժպտելով:— Մարջանն (կորալ) էլ քար է, ապա ինչպե՞ս է աճում: Ծովի միջումը աճում է և ծառ է դառնում:

Օհանի հասկացողությունը թանկագին քարերի վերաբերությամբ շատ հեռու չէր գնում, որ ցույց տար նրան մարջանի և ֆերուզայի մեծ զանազանությունը: Նա լռեց: Բայց նրա ուշադրությունը գրավեց մի այլ բան: Այդ կինը հանկարծ զարթեցրեց նրա մեջ մի աղոտ միտք, և նրա զարմացած աչքերն սկսեցին երբեմն դառնալ դեպի նա, երբեմն դեպի նրա բեռնակիրը: Նրա հիշողության մեջ հանկարծ ծագեց այն մոռացված կասկածանքը, որ մի ժամանակ ուներ նա դեպի ամեն կին, որ հանդիպում էր նրան, և որոնց մեջ որոնում էր իրան խաբողին, իրան մոլորության մեջ ձգողին: Այժմ գտնում էր նա մի մթին նմանություն այդ կնոջ և այն կնոջ մեջ, որ մի տարի առաջ, յուր կատվի պատրվակով հանձնեք իրան անբախտ մանուկին: Բայց տարբերությունները բավական մեծ էին: Այն ժամանակ սև էր հագնված, իսկ այժմ բոլորովին մոխրագույն: Այդ շատ չշվարեցրեց Օհանին, որովհետև հագուստը միշտ կարելի է փոխել: Դեմքը լավ չէր մտաբերում,— այդ էր, որ շփոթեցրեց Օհանին: Նրան տեսել էր երկու անգամ միայն, մեկը՝ ցերեկով, այն ևս խիստ սուղ միջոցում, մյուսը՝ գիշերով, խավարի մեջ: Ձայնը, խոսակցության ձևը բոլորովին նման էր: Նման էր և հասակը, այն կինն էլ դրա տարիքն ուներ: Հանկարծ Օհանի աչքին ընկավ սև սաթի փոքրիկ խաչը, որ կապած ուներ պարանոցին և որի վերևի մասը և՛ այժմ երևում էր շապկի տակից: Այդ խաչը նա լավ հիշում էր: Նրա կասկածանքն ավելի ուժ ստացավ:

Նրա բեռնակրին առաջին անգամն էր տեսնում: Այդ զզվելի մարդը, որ անդադար ձախ աչքը խփում էր, աջն՝ էր բաց անում, և աջը՝ խփում էր, ձախն՝ էր բաց անում, յուր թուխ դեմքով, սրածայր քթով կարճ շրթունքներով, երկար ականջներով և

խճճված սև մորուքով Օհանի վրա խիստ անախորժ տպավորություն գործեց, մանավանդ երբ իմացավ, որ նա հրեա է:

Տիկինը ոչինչ չգնեց: Նա խոսացնելու համար միայն կանչել տվեց մանրավաճառին: Քաղաքի բոլոր բարձր և միջին շրջաններում ել ու մուտ ուներ այդ կինը և գիտեր, թե ինչ տեղ ի՞նչ է կատարվել: Օրեկան բամբասանքների մի կենդանի օրագիր էր նա: Այդ առիթով, յուր նազելի տիկնոջը հաճություն պատճառելու համար, թողեց նա յուր առևտուրը և սկսեց երկար ու երկար պատմել, թե ինչո՞ւ է այսինչ փաշան յուր կնոջը ծեծել... ի՞նչ պատճառով այնինչ փաշայի կանայքը միմյանց հետ կռվել են... թե այսինչ փաշայի աղջկա և յուր էյվազի մեջ ի՞նչեր են անցել... թե ո՞րքան ճշմարիտ է, որ այնինչ փաշան բաժանվում է յուր կնոջից և ամուսնանում է մի հարուստ այրիի վրա և այլն...

Երբ վերջացրեց, հավաքեց յուր իրեղենները, կրկին տեղավորեց արկղի մեջ, ասելով.

— Ներեցեք, նազելի տիկին, ես ուշացա, շատ ուշացա... Ն. էֆենդիի տանն այժմ սպասելիս կլինեն ինձ... մի քանի բաներ են ապսպարել...

Նա տվեց հրեայի շալակին ահագին արկղը, որ յուր երկարությամբ ծածկում էր՝ սկսած նրա գլխից մինչև մեջքի վերջը: Բեռնակիրը կռացավ, ճոկան դարձավ այդ ծանրության ներքո:

— Մնաք բարյավ, նազելի տիկին, ցանկանում եմ ձեզ աշխարհի բոլոր բարությունները:

Նա գնում էր և միևնույն ժամանակ օրհնում էր:

— Ի՞նչ ազգից է այդ կինը,— հարցրեց Օհանը, երբ բոլորովին հեռացավ նա:

— Չգիտեմ, պետք է որ հույն լինի,— պատասխանեց տիկինը:

— Շատ բարի պտուղ չէ երևում...

— Նրանք ամենքն էլ այդպես են լինում,— ասաց տիկինը, վեր կացավ նստած տեղից և ծանր, անհավասար քայլելով սկսեց գնալ դեպի յուր բնակարանը:

Օհանը նկատեց նրա տխրությունը և քարացածի նման կանգնած հետևից նայում էր նազելի հասակին, նայում էր մտախոհ գնացքին, և ինքն էլ չգիտեր, թե ինչու է այդպես անհագաբար նայում ...

Նա կրկին մոտեցավ, նստեց ավազանի մոտ, մի նստարանի վրա: Այժմ գույնզգույն ձկներն այլևս չէին հետաքրքրում նրան:

Անցավ մի շաբաթ, երկու, փերեզակ կինը դեռևս չէր երևում: Անցավ մի ամիս: Օհանն անհանգիստ էր: Միշտ նրա մասին էր մտածում և ոչ մի ելք չէր գտնում: Գոնե գիտենար, թե որտեղ էր բնակվում նա, այդ ևս չգիտեր: Խառնաշփոթ Ստամբոլում հեշտ չէր մարդիկ գտնել, իսկ խորամանկ կինը մի խոսքով անգամ չակնարկեց յուր բնակության տեղը: Սպասում էր, մինչև մյուս անգամ կհայտնվեր նա: Բայց այդ նրա համար խիստ ծանր էր: Ե՞րբ կգար, մինչև ե՞րբ պետք էր սպասել: Զահրան, իրավ է, շատ բաներ էր գնում նրանից, և նա առաջ ավելի հաճախ էր գալիս: Բայց ահա մի ամբողջ ամիս անցել էր, որ չէր երևում:

Այդ մտածությունների մեջ տարուբերվելով, մի անգամ դուրս եկավ նա, կանգնեց ապարանքի դռանը, նայում էր անցուդարձ անողների վրա: Հանկարծ նրա մոտով շտապով անցավ Ֆերուզը — Զահրայի սևամորթ ստրուկը:

— Ո՞ւր այդպես, Ֆերուզ,— հարցրեց նրանից:

— Գնում եմ նրան կանչելու,— պատասխանեց խափշիկը և ավելի փութացրեց յուր քայլերը:

— Ո՞ւմը կանչելու... դե՛ կանգնիր, տեսնում ես, որ քեզ հետ: խոսում են:

— Այն կնոջը, որ բաներ է բերում իմ տիրուհու համար,— ասաց նա և վազ տվեց:

Օհանը հասկացավ, թե ո՛ւմը պետք է կանչեր և ուրախացավ:

Ուրեմն խափշիկը գիտեր նրա բնակարանը: Երևի, որ սակավ անգամ գնացել էր նրան կանչելու: Նա կգա, անպատճառ կգա: Եվ ոչ մի կնոջ գալուստն այնքան բավականություն չէր պատճառի Օհանին, որքան այն գարշելի ջադուկի գալուստը, որին յուր բոլոր սրտով ատում էր:

Կեսօրից բավական անցել էր:

Ծերունի փաշան Բ. Դռնից վերադարձել, ճաշել և քնել էր: Մինչև նրա վեր կենալը Օհանը բավական ազատ ժամանակ ուներ: Ապարանքում տիկինները նույնպես քնած էին: Արթուն էին միայն աղախինները, որ այդ հանգստի ժամուն, կանանոցի պարտեզում հավաքված, ծառերի անուշահոտ ստվերի տակ նստած, խոսում էին, ծիծաղում էին և յուրաքանչյուրը յուր սրտի ցավերն էր պատմում ընկերին:

Օհանը նկատեց, որ փերեզակ կինը գալիս էր միշտ այն ժամանակ, երբ Զահրայի հայրը կամ տանը չէր, կամ եթե տանն էր, քնած էր: Ուրեմն նա գիտեր այդ ժամանակները, կամ նրան իմացում էին տալիս: Այդ զարթեցնում էր Օհանի սրտում մի աղոտ կասկած: Ի՞նչ կապեր կարող էին լինել բարեսիրտ, հրեշտականման Զահրայի և մի նենգավոր կնոջ մեջ: Օհանը մտաբերելն անգամ մեծ մեղք էր համարում յուր ազատած մանուկի մասին...

Բայց ինչո՞ւ էր նա այսպիսի ժամանակներ ընտրում: Հայրը միայն կարող էր խանգարել նրան՝ կամ յուր մոտ կանչելով, կամ առանց հարցնելու անակնկալ կերպով նրա սենյակը մտնելով: Իսկ հայրն այժմ քնած էր: Բացի նրանից, ապարանքում ուրիշ ոչ ոք իրավունք չուներ վրդովելու Զահրայի առանձնությունը:

Իսկ ազնիվ Օհանը վայելում էր օրիորդի առանձին շնորհը: Այդ շնորհը գրավեց նա յուր վերին աստիճանի անարատությամբ: Այդ էր պատճառը, որ նա վստահություն ուներ ի ժամու և ի տարաժամ ու օրիորդի բնակարանը մտնելու, մանավանդ երբ մի որևէ գործով առիթ ուներ: Իսկ այժմ մտածեց, երկար մտածեց, ոչ մի առիթ չգտավ: Ցանկանում էր անպատճառ ներկա լինել փերեզակ կնոջ առևտուրին և ավելի մոտից դիտել նրա հարաբերությունները օրիորդի հետ:

Շուտով միտքը փոխեց նա...

Նա փայտի նման ցցված մնաց ապարանքի դռան մոտ, յուր տեղից չշարժվեցավ: Նրա անհամբեր աչքերը դարձրած էին դեպի այն կողմը, որտեղից պետք է հայտնվեր փերեզակը: Բայց նա ուշացավ: Գուցե շատ հեռու էր կենում: Գուցե խափշիկը չգտավ նրան: Եթե ոչ, ինչո՞ւ պետք է ուշանար: Չէր երևում և խափշիկը: Երկար սպասելուց

հետո, Օհանը ներս մտավ, մտածելով. «Պետք է մի կերպով սուրալ օրիորդի բնակարանը...»: Հարկավոր էր մի որևէ առիթ, և այդ առիթը գտավ նա:

Օրիորդը պետք է միայնակ լիներ յուր սենյակում: Նրա միակ աղախինը, որ հասակն առած կին էր, այսօր թույլտվություն էր ստացել յուր բարեկամներից մեկին տեսության գնալու: Այդ ավելի գրգռեց Օհանի կասկածը: Ինչո՞ւ պետք է հեռացրած լիներ աղախնին:

Նա գտավ օրիորդին յուր սենյակում՝ խորին անհամբերության մեջ ոտքի վրա, մերթ մոտենում այս և մերթ այն լուսամուտին: Տեսնելով Օհանին, կանգ առավ սենյակի մեջ տեղում և առանց սպասելու, որ նա հայտնե, թև ինչո՞ւ համար է եկել, ինքն ասաց.

— Դու երևի այն գորգի համար եկար, այլևս պետք չէ, ես միտքս փոխեցի, մի այլ բան պիտի գնել տամ...

Օհանը հասկացավ, որ իրան կամենում են հեռացնել, մանավանդ երբ տեսավ, որ օրիորդը յուր խոսքը վերջացնելուց հետո երեսը շուռ տվեց, կրկին մոտեցավ լուսամուտին, սկսեց Նայել դեպի բակը:

— Այո՛, գորգի համար էի եկել,— պատասխանեց նա և քաղաքավարությամբ գլուխ տալով դուրս եկավ:

Օրիորդը մի քանի օր առաջ պատվիրել էր նրան՝ գնել մի փոքրիկ գորգ յուր թախտի առջև տարածելու համար, որովհետև յուր ունեցածը շատ գեղեցիկ չէր գտնում:

Օհանը դուրս եկավ նախասենյակը, դուռը յուր հետևից ծածկեց, բայց փոխանակ դեպի բակը գնալու, հուշիկ քայլերով անցավ դեպի մի այլ սենյակ, այնտեղից մտավ երկրորդը և երրորդը: Այդ վերջինը, որ մի ընդարձակ դահլիճ էր, բաժանված էր օրիորդի գտնված սենյակից կամարաձև անջրպետով, որ ծածկված էր ծանր, անթափանցիկ մետաքսյա վարագույրներով: Իսկ մյուս ճակատի լուսամուտները բացված էին դեպի գեղեցիկ պատշգամբը, որ նայում էր Բոսֆորի վրա:

Օհանն անցավ պատշգամբի վրա:

Ի՞նչ կմտածեր օրիորդը, եթե հանկարծ դուրս գալու լիներ և նրան այնտեղ տեսներ: Սպասավորի համար այդ հարցը շատ տարակուսական չէր կարող լինել: Օհանը իսկույն յուր համար գործ գտավ: Սկսեց ծաղիկների թաղարներն ուղղել, մի քանիսը տեղափոխեց, մի քանիսի չորացած տերևները մաքրեց, հետո մոտեցավ այնտեղ դրած միակ բազկաթոռին և անձեռոցիկ չգտնելով, գրպանից թաշկինակը հանեց, սկսեց փոշին մաքրել: Այդ ծանր, գեղաքանդակ բազկաթոռի վրա նստում էր փաշան, երբ երբեմն երեկոյան պահուն գալիս էր յուր դստեր մոտ՝ ծխելու և սուրճ խմելու: Իսկ այժմ մի առանձին բավականությամբ բազմեցավ նրա վրա Օհանը, սկսեց նայել դեպի ծովը և մտածել, եթե օրիորդը դուրս գալու լինի, կասե, թե շատ կարելի է, որ նրա հայրն այս երեկո նրա մոտ գա յուր սովորական սուրճը վայելելու:

Նա շարունակում էր նայել դեպի Բոսֆորը: Թեքված արեգակի ճառագայթների առջև՝ մանր ալիքները փողփողում էին և կոտրատված հայելիների միլիոնավոր բեկորների նման՝ իրանց լուսապայծառ փայլով խտղտացնում էին Օհանի աչքերը: Բայց նա շարունակում էր նայել: Սքանչելի էր տեսարանը. կարծես գեղեցիկ Բոսֆորն այդ հանդիսավոր րոպեում յուր բոլոր հոգեզվարճ ուրախությամբ ժպտում էր, ծիծաղում էր, և նրա կախարդական ժպիտը լցնում էր Օհանի սիրտն անսահման բերկրությամբ:

Ո՜րքան մեծ փոփոխություն: Շատ ժամանակ չէր անցել այն օրից, երբ Օհանը, թիկն տված յուր աղբի կթոցին, նստած էր ավազների վրա և այսպես նայում էր Բոսֆորին: Իսկ այժմ նստած էր նա այն բազկաթոռի վրա, որի վրա հանգստանում էր Բարձր Դռան խոշոր անձինքներից մեկը: Այդ ժամանակ Օհանն սպասում էր, որ արևը մտնե, խավարը պատե, որ հետո գնա սև խաչակիր տիկնոջ խոստացած երկու ղուրուշն ստանալու... Այսօր նույնպես սպասում էր նրան, բայց բոլորովին այլ նպատակով...

Լսելի եղավ բակի փոքրիկ շան ձայնը: Օհանը ցնցվեցավ: Այդ խելացի կենդանին յուր սուր բնազդմամբ կարծես մի առանձին ատելություն ուներ դեպի փերեզակ կինը և մանավանդ դեպի նրանից անբաժան հրեան: Ամեն անգամ նրանք հայտնվելիս նա մեծ աղմուկ էր բարձրացնում:

Օհանը հասկացավ, որ անպատճառ նրանք պետք է լինեն: Վեր կացավ, կամաց մտավ դահլիճ, որ կից էր օրիորդի սենյակին: Նա այժմ վստահ էր, որ օրիորդն այլևս չի դուրս գա, այլ զբաղված կլինի յուր այցելուներով:

Նա թաքնվեցավ վարագույրի հետևում, հենվեցավ պատին: Կամաց բարձրացրեց վարագույրի ծալքը, սկսեց նայել դեպի օրիորդի սենյակի ներսը:

Փոքրիկ շան աղմուկը նրան ևս խռովության մեջ էր դրել: Որպես վանդակի մեջ նեղված մի անհանգիստ քանարիա, անդադար թրթռում էր, մոտենում էր լուսամուտին, նայում էր, երբ այնտեղից լավ չէր երևում, անցնում էր դեպի մյուսը: Այդ դրության մեջ տանջվում էր նա, մինչև ներս մտավ փերեզակ կինը, իսկ նրա հետևից հրեան, արկղն ուսին: Օհանն ավելի ևս բարձրացրեց վարագույրի ծալքը: Նա զսպում էր լուր շնչառությունը, որ ամենաթեթև շշուկ անգամ չարձակե: Հրեան զգուշությամբ արկղը դրեց հատակի վրա և դուրս եկավ: Օրիորդը նրա հետևից դուռը կողպեց, հետո մոտեցավ լուսամուտին, կիսով չափ ցած թողեց վարագույրները և ապա վազեց դեպի սնդուկը, աշխատում էր յուր ձեռքով բաց անել:

Փերեզակ կինը, հակառակ յուր սովորական շատախոսության, այդ րոպեում լուռ էր:

— Մի փոքր համբերեցեք, հարգելի օրիորդ,— ասաց նա հազիվ լսելի ձայնով,— ես իսկույն բաց կանեմ:

Օրիորդը դարձյալ չհեռացավ արկղից, կարծես նրա սիրտը, հոգին և բոլոր զգացմունքները նրա մեջ լինեին:

Արկղը, որպես սովորաբար լինում են թափառական փերեզակների արկղները, մի քանի մասերից էր կազմված, որոնք աստիճանաբար մտնում էին միմյանց մեջ և կողքերից կցվում էին երկաթյա հանգույցներով: Յուրաքանչյուր մասի մեջ զետեղված էր մի տեսակ վաճառք:

Փերեզակ կինը, օրիորդի օգնությամբ, մեկ-մեկ վեր էր առնում՝ վերևի մասերը: Երբ բացվեցավ վերջին մասը, որ հատակն էր կազմում, օրիորդը խորին հրճվանքով բարձրացրեց մի փոքրիկ երեխա և ճնշեց յուր երեսի վրա...

Մի ցուրտ սարսուռ անցավ Օհանի ամբողջ մարմնով: Նրա սիրտն սկսեց տրոփալ և հազիվհազ կարողացավ իրան պահել:

Օրիորդը դեռ շարունակում էր երեխային մերթ սեղմել յուր շրթունքներին, մերթ խաղացնել ձեռքում, և այնպես քնքշաբար փայփայելով գնաց նստեց թախտի վրա, դրեց յուր առջև և խորին հիացմունքով նայում էր նրա վրա:

Երեխան չէր շարժվում: Նա կամ քնած էր, կամ արհեստական եղանակով քնացրել էին նրան: Վերջինն ավելի հավանական էր: Որովհետև երբ փերեզակ կինը մոտեցավ և մի ինչ-որ հեղուկ փոքրիկ սրվակով հոտոտել տվեց նրան, իսկույն ցնցվեցավ նա և մի քանի րոպեից հետո աչքերը բաց արավ, սկսեց ժպտալ: Նրա ժպիտը սքանչացրեց օրիորդին:

— Այժմ բոլորովին առողջ է, հարգելի օրիորդ,— խոսեց փերեզակը մեղմ ձայնով:— Քանի շաբաթ է, որ բժիշկը դադարել է մինչև անգամ այցելել, ասում է, որ բժշկի խնամքի այլևս կարոտ չէ:

— Ա՜խ, սիրելի Ելենա, երանի՜ թե չլիներ այդ հիվանդությունը... ո՜րքան խանգարեց մեզ այդ հիվանդությունը,— ասաց օրիորդը վշտալի ձայնով:

Եվ իրավ, երեխայի հիվանդությունը փոխեց այն ամբողջ ծրագիրը, որ կազմել էին բեյը և օրիորդը Պոլիսը թողնելու և Եվրոպա գնալու մասին: Օրեցօր խորին անձկությամբ սպասում էին, որ նա առողջանա, որ հետո ճանապարհ ընկնեն:

— Այժմ բոլորովին առողջ է,— կրկնեց Ելենան,— տեսնո՞ւմ ես, հարգելի օրիորդ, ո՜րքան գիրացել է, ո՜րքան գեղեցկացել է, կասես՝ մի սիրուն հրեշտակ լինի: Այսօր ես կշռել տվի, մի ամսվա մեջ ծանրությունը երկու հոխայից ավելի աճել է:

Օրիորդը խորին հիացմունքով փայփայում էր երեխայի գողտրիկ սրունքները, փայփայում էր նրա կլորիկ բազուկները և փոքրիկ ձեռնիկները, կարծես ստուգելու համար, թե ո՜րքան ճշմարիտ էին Ելենայի ասածները:

Հանկարծ շփոթվեցավ նա: Սկսեց ավելի մոտից նայել, շոշափելով երեխայի բազուկները, և որքան նայում էր, այնքան ավելի նրա հուզմունքը սաստկանում էր:

Օրիորդի շփոթությունն աննկատելի չմնաց Ելենայից, որ կանգնած էր նրա թախտի մոտ և, որպես մի մարմնացած անմեղություն, դիտում էր մոր քնքուշ փայփայանքները և զարմանում էր նրա հանկարծակի խռովության վրա:

— Ի՞նչ պատահեց ձեզ հետ, հարգելի օրիորդ,— հարցրեց նա կարեկցական ձայնով:

— Ոչինչ...— պատասխանեց օրիորդը, ձեռքով շփելով աչքերը, կարծես աշխատում էր վանել յուր տեսության մռայլը:

Նա անցավ դեպի թախտի այն կողմը, որ ավելի մոտ էր լուսամուտին:

— Մի փոքր ետ քաշեցեք վարագույրը,— հրամայեց Ելենային:

Փերեզակը դողդոջուն ձեռքը տարավ, բարձրացրեց վարագույրը մի կողմ:

Օրիորդն սկսեց ավելի ուշադրությամբ հետազոտել երեխայի աջ ձեռքի բազուկը: Խորին զարհուրանքով որոնում էր այնտեղ մի բան, բայց գտնել չէր կարողանում:

— Ի՞նչ եք որոնում, հարգելի օրիորդ,— հարցրեց Ելենան դողդոջուն ձայնով,— երևի ծաղկի կտրած տեղն եք որոնում: Այդ տեղը հազիվ է նշմարվում այժմ: Աստուծո օգնությամբ ձեր երեխան այնքան գիրացավ, որ այլևս չէ երևում: Նայեցե՛ք, այդ փոքրիկ սպիտակ բիծն է,— նա մատը դրեց ցույց տված տեղի վրա:

— Ես մի կապույտ բիծ եմ որոնում,— ասաց օրիորդը և դարձյալ շփեց արտասվալի աչքերը, յուր աղոտ տեսությանն ավելի ուժ տալու համար:

Ելենայի դեմքի վրա երևաց մի ժպիտ, որ արտահայտում էր նրա սրտի կեղծ բարությունը և միևնույն ժամանակ նրա վրդովմունքը:

— Ճշմարիտ է, հարգելի օրիորդ,— ասաց նա,— առաջ կապույտ բծեր կային... Խեղճ երեխայի բազուկներն այնքան նիհարացել էին, որ երակները կապույտ նարոտների նման երևում էին... Այժմ, փառք աստուծո, գիրությունը ծածկեց բոլորը...

— Իսկ իմ որոնածը չէր կարող ծածկվել...— պատասխանեց օրիորդը, և խելագարի նման մանուկը մի կողմ դնելով, բացականչեց.

— Դա իմ երեխան չէ՛...

— Տե՛ր Հիսուս Քրիստոս...— ձայն տվեց Ելենան և ձեռքերը փակելով, երկյուղած աչքերը դարձրեց դեպի երկինքը:

— Դա իմ երեխան չէ՛...— կրկնեց զարհուրած մայրը արտասվալի ձայնով:— Ելենա՛, դու ինձ խաբում ես... ես նշան էի դրել... ահա այս թևի վրա... ո՞ւր է նշանը... Այո՛, նշան էի դրել, որ եթե ես մեռնելու լինեմ, հայրը ճանաչի յուր զավակին... Այդ գիտե բեյը...: Երեք կապույտ խալեր էին, երեք փոքրիկ աստղիկների նման, միմյանց մոտ դրած...: Այդ ես արել էի, որ չարքերը չմոտենան զավակիս[6]... Ո՞ւր են այդ խալերը...

Վարագույրի հետևում թաքնված Օհանը մի անսովոր շարժում գործեց, իսկ հետո ինքն իրան զսպելով մնաց յուր տեղում: Ելենայի երկյուղած դեմքն այժմ ավելի սպառնական կերպարանք ստացավ:

— Այդ ի՛նչ ասելու բան է, հարգելի օրիորդ,— ասաց նա, գրկելով երեխային, որ մի կողմ էր դրած:— Խելքի՛ եկեք, հարգելի օրիորդ... Խալերը կարող էին անհետանալ...

— Չէին կարող անհետանալ... այս տեսակ խալերը չեն անհետանում... ես ունեմ... այսքան տարի... ի՞նչու չեն անհետանում...— Նա բաց արավ յուր բազուկը և ձեռքը մեկնելով դեպի շվարած փերեզակը, բացականչեց ավելի զայրացած ձայնով.

— Դու ինձ խաբո՞ւմ ես, Ելենա, ի՞նչ արեցիր իմ երեխան... սիրտս ասում է, որ դա իմ երեխան չէ՛...

Նրա գլուխը թեքվեցավ թախտի վրա, աչքերը բռնեց, սկսեց դառն կերպով հեկեկալ:

Խեղճ մոր արտասուքն ավելի զայրացրեց անգութ փերեզակի սիրտը, որ կանգնելով նրա գլխի մոտ արտասանեց հետևյալ խոսքերը.

— Ա՞յդ պետք է լիներ Ելենայի վարձատրությունը, որ նրան խաբեբա՛ ես կոչում... Դրանո՞վ ես կատարում այն բոլոր խոստումները, որ իմ տան մեջ արեցիր ինձ... Ես քո ամոթը ծածկեցի... քո նախատինքը պարտակեցի... ես ազատեցի քեզ աշխարհի դատապարտությունից և ծնողաց անեծքից... իսկ դու՛, փոխանակ երախտագետ լինելու, ինձ խաբեբա ես կոչում...

— Իմ երեխան չէ՛...— կրկնեց թշվառ մայրը և գլուխը բարձրացնելով, վշտալի աչքերը դարձրեց դեպի փերեզակը, աղաչելով.

---

[6] Արևելքում ամեն ազգի կանայք, մինչև անգամ հայ կանայք, գիտեն այս տեսակ արհեստական խալեր դրոշմել մարմնի վրա, կամ իբրև գեղեցկության և կամ իբրև թիլիսման: Նրանց դասավորության և ձևի մեջն է բովանդակվում թիլիսմանի խորհուրդը:

— Ելենա, տո՛ւր իմ երեխան... ի՞նչ արեցիր իմ երեխան... Դա իմ երեխան չէ... ի սեր աստուծո, տո՛ւր իմ երեխան... ես կը մեռնեմ կսկծից...:

Փերեզակ կնոջ աչքերի մեջ փայլեց մի դիվական կատաղություն և նրա մեղմ դեմքը սոսկալի դարձավ:

— Բավակա՞ն է,— ձայն տվեց նա,— բավակա՞ն է, որքան վիրավորեցիր ինձ... Եթե ավելի ևս կխոսես, ես այդ երեխան կվերառնեմ, կտանեմ և կդնեմ քո հոր առջև... թո՛ղ նա որոշե, թե ո՛ւմ երեխան է...

Օրիորդը ոչինչ չլսեց. նա թուլացած ընկած էր թախտի վրա և հազիվհազ լսվում էր նրա ցավալի հառաչանքը...

Այդ միջոցին մի ուժեղ ձեռք բռնեց փերեզակ կնոջ օձիքից, գոչելով.

— Լռի՛ր, անզգամ,— նրա երեխան ինձ մոտ է... Նայի՛ր իմ երեսին... ճանաչո՞ւմ ես... Ես այն չոփչին եմ, որին խաբեցիր և գիշերային խավարի միջոցին, քո կատվի պատրվակով, նրա երեխան տվեցիր, որ տանեմ ծովը նետեմ... Աստված ազատեց նրան... իսկ նրա փոխարեն՝ դու այժմ ծովը կնետվե՞ս...:

Վերջին խոսքերն արտասանելու միջոցին, հափշտակեց նա ուշաթափ փերեզակին և ձեռքերի վրա բարձրացնելով, վազեց դեպի պատշգամբը, որ կախված էր Բոսֆորի վրա:

— Օհա՜ն... ի սեր Աստուծո... այդ ի՞նչ ես անում... խնայի՛ր,— նրա հետևից վազելով աղաչում էր օրիորդը և պինդ բռնած ուներ նրա ձեռքից:— Թո՛ղ տուր...: Աստված կպատժե դրան...